ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

**Ո Ր Ո Շ Ո Ւ Մ**
**02 մարտի 2016 թվականի N Մ-140- Ա**
**քաղ. Երևան**

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2016 ԹՎԱԿԱՆԻ ՓԵՏՐՎԱՐԻ 19-Ի N Մ-114-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ ԲԵՌԻ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ՄԱՍԻՆ («Առաքելություն Արևելք» մարդասիրական օգնության կազմակերպության հայաստանյան մասնաճյուղ)

---

Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով «Առաքելություն Արևելք» մարդասիրական օգնության կազմակերպության հայաստանյան մասնաճյուղի 2016 թվականի փետրվարի 25-ի գրությունը և Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի որոշման նախագծի 2016 թվականի փետրվարի 26-ի համաձայնեցման թերթը, **ո ր ո շ ու մ է.**

1. Սահմանել, որ «Առաքելություն Արևելք» մարդասիրական օգնության կազմակերպության հայաստանյան մասնաճյուղի կողմից ձեռք բերված բեռը (պահպանակներ, 11,500 տուփ, 6,164 կգ ընդհանուր քաշով, 41,975 ԱՄՆ-ի դոլարին համարժեք դրամ արժեքով, փոխադրման ծախսերը կազմել են 5,232.5 ԱՄՆ-ի դոլար, «Արարատյան» Տ/Մ) ներմուծվում է Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2016 թվականի փետրվարի 19-ի «Աջակցություն Հայաստանի Հանրապետությունում ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ին հակազդման ազգային ծրագրին» ծրագրի մասին» N Մ-114-Ա որոշմամբ հաստատված ծրագրի շրջանակներում:
2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն և Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարություն:

**ՆԱԽԱԳԱՀ** **Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

**3 մարտի 2016 թվականի N Մ-141-Ա**
**քաղ. Երևան**

## «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՖՈՒՏԲՈԼԻ ՖԵԴԵՐԱՑԻԱ» ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ԱՆՁԱՆՑ ՄԻՈՒԹՅԱՆ ՀԱՍՑԵՈՎ ՍՏԱՑՎԱԾ ԲԵՌԻ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ (N 1)

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով հանձնաժողովի որոշման նախագծի 2016 թվականի փետրվարի 29-ի համաձայնեցման թերթը,* **ո ր ո շ ու մ է.**

1. Բարեգործական որակել եվրոպայի ֆուտբոլի ասոցիացիաների միության (UEFA) կողմից որպես օժանդակություն «Հայաստանի ֆուտբոլի ֆեդերացիա» իրավաբանական անձանց միության հասցեով ուղարկված մարզահագուստի տարբերանշանների (մեկ տեղ, 4 կգ ընդհանուր քաշով, 1,900 եվրո արժողությամբ, փոխադրման ծախսերը կազմել են 132 եվրո, «ՄՓ և ՍԱՓԱՄ» ՄՏ) ներմուծման ծրագիրը:

2. «Հայաստանի ֆուտբոլի ֆեդերացիա» իրավաբանական անձանց միությանը՝ նշված բեռի համապատասխան ձևակերպումներն ավարտելուց հետո մեկամսյա ժամկետում՝ սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով ներկայացնել ամփոփ տեղեկատվություն:

3. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն ու Հայաստանի Հանրապետության սպորտի և երիտասարդության հարցերի նախարարություն:

ՆԱԽԱԳԱՀ Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

**3 մարտի 2016 թվականի N Մ-142-Ա**
**քաղ. Երևան**

## «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՖՈՒՏԲՈԼԻ ՖԵԴԵՐԱՑԻԱ» ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ԱՆՁԱՆՑ ՄԻՈՒԹՅԱՆ ՀԱՍՑԵՈՎ ՍՏԱՑՎԱԾ ԲԵՌԻ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ (N 2)

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով հանձնաժողովի որոշման նախագծի 2016 թվականի փետրվարի 29-ի համաձայնեցման թերթը,* ***ո ր ո շ ու մ է.***

1. Բարեգործական որակել Ֆուտբոլի ասոցիացիաների միջազգային ֆեդերացիայի (FIFA) կողմից որպես օժանդակություն «Հայաստանի ֆուտբոլի ֆեդերացիա» իրավաբանական անձանց միության հասցեով ուղարկված մարզահագուստի և մարզագույքի (278 տեղ, 1,905.8 կգ ընդհանուր քաշով, 54,915.69 եվրոյին համարժեք դրամ ընդհանուր արժողությամբ՝ ներառյալ փոխադրման ծախսերը, «Զվարթնոց» ՄՏ) ներմուծման ծրագիրը:

2. «Հայաստանի ֆուտբոլի ֆեդերացիա» իրավաբանական անձանց միությանը՝ նշված բեռի համապատասխան ձևակերպումներն ավարտելուց հետո մեկամսյա ժամկետում՝ սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով ներկայացնել ամփոփ տեղեկատվություն:

3. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն ու Հայաստանի Հանրապետության սպորտի և երիտասարդության հարցերի նախարարություն:

ՆԱԽԱԳԱՀ Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

**4 մարտի 2016 թվականի N Մ - 143 - Ա**
**քաղ. Երևան**

## «ՕԳՆԻՐ ԵՂԲՈՐԴ» ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ՀԱՍՑԵՈՎ ՍՏԱՑՎԱԾ ԲԵՌԻ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով հանձնաժողովի որոշման նախագծի 2016 թվականի փետրվարի 11-ի համաձայնեցման թերթը,* ***ո ր ո շ ու մ   է.***

1. Բարեգործական որակել Հայաստան-Արցախ ֆոնդի կողմից «Օգնիր եղբորդ» բարեգործական հիմնադրամի հասցեով ուղարկված բեռի (13,744 կգ ընդհանուր քաշով, 271,405.99 ԱՄՆ-ի դոլարին համարժեք դրամ արժողությամբ, փոխադրման ծախսերը կազմել են 6,850 ԱՄՆ-ի դոլար, բեռի ցանկը կցվում է, «Արարատյան» ՏՄ) ներմուծման և բաշխման ծրագիրը: Բեռը բաշխվելու է Հայաստանում հաստատված սիրիահայերին:

2. «Օգնիր եղբորդ» բարեգործական հիմնադրամին՝ նշված բեռի համապատասխան ձևակերպումներն ու բաշխումն ավարտելուց հետո մեկամսյա ժամկետում՝ սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով ներկայացնել ամփոփ տեղեկատվություն:

3. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն, Հայաստանի Հանրապետության սփյուռքի նախարարություն և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

ՆԱԽԱԳԱՀ          Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

| Արկղերի թիվ/Ի | Քաշ/կգ/ | Արկղի պարունակությունը | Ընդհանուր արժեքը |
|---|---|---|---|
| 150 | 1701 | Առօրյա անհրաժեշտության խնամքի պա | $ 30,900.00 |
| 40 | 423 | Տղամարդու հագուստ/մեծ չափս/ | $ 8,320.00 |
| 10 | 106 | Տղամարդու հագուստ/փոքր չափս/ | $ 2,080.00 |
| 10 | 103 | Տղայի հագուստ | $ 2,080.00 |
| 44 | 455 | Կանացի հագուստ / մեծ չափս/ | $ 9,152.00 |
| 37 | 379 | Կանացի հագուստ / փոքր չափս/ | $ 7,696.00 |
| 9 | 97 | Կանացի շորտեր / փոքր չափս/ | $ 1,872.00 |
| 8 | 86 | Կանացի շորտեր / մեծ չափս/ | $ 1,664.00 |
| 3 | 34 | Կանացի տաբատ/ մեծ չափս/ | $ 624.00 |
| 2 | 23 | Կանացի տաբատ/ փոքր չափս/ | $ 416.00 |
| 18 | 178 | Աղջկա հագուստ | $ 3,744.00 |
| 5 | 48 | Մանկական հագուստ | $ 1,040.00 |
| 5 | 49 | Հագուստ | $ 1,040.00 |
| 217 | 2098 | Տղամարդու վերնահագուստ/մեծ չափս/ | $ 41,230.00 |
| 15 | 159 | Տղամարդու վերնահագուստ/փոքր չափս/ | $ 2,850.00 |
| 10 | 103 | Տղայի վերնահագուստ | $ 1,900.00 |
| 482 | 4351 | Կանացի վերնահագուստ/մեծ չափս/ | $ 91,580.00 |
| 204 | 2091 | Կանացի վերնահագուստ/փոքրչափս/ | $ 38,760.00 |
| 63 | 625 | Աղջկա վերնահագուստ | $ 11,970.00 |
| 7 | 64 | Նորածնի վերնահագուստ | $ 1,330.00 |
| 10 | 93 | Մանկական վերարկու | $ 1,900.00 |
| 3 | 27 | Տղամարդու Վերարկու | $ 570.00 |
| 6 | 54 | Կանացի վերարկու | $ 1,140.00 |
| 1 | 9 | Աղջկա և տղայի վերարկու | $ 190.00 |
| 7 | 57 | Պայուսակ | $ 577.50 |
| 6 | 34 | Մանկական աքսեսուար | $ 1,074.00 |

| | | | |
|---|---|---|---|
| 2 | 12 | Մանկական ծածկոցներ | $ 526.50 |
| 1 | 2 | Բարձեր | $ 36.85 |
| 1 | 7 | բամբակյա ծածկոց | $ 99.54 |
| 14 | 74 | Ծածկոցներ | $ 322.98 |
| 1 | 11 | Անկողնու ծածկոց / փոքր / | $ 136.71 |
| 3 | 35 | Անկողնու ծածկոց / մեծ / | $ 445.74 |
| 12 | 137 | Վարագույր | $ 3,629.76 |
| 1 | 11 | Սեղանի ծածկոց | $ 407.40 |
| 1 | 8 | սրբիչ | $ 101.01 |
| **1408** | **13744** | | **$ 271,405.99** |

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ**
**ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

**9 մարտի 2016 թվականի N Մ- 144 -Ա**
**քաղ. Երևան**

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱ-ԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2016 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆՎԱՐԻ 13-Ի N Մ- 1469 -Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ ԱՎՏՈՄԵՔԵՆԱՅԻ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ՄԱՍԻՆ

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով 2016 թվականի մարտի 4-ի որոշման նախագծի համաձայնեցման թերթը,* ***ո ր ո շ ու մ է.***

1. Սահմանել, որ Ամերիկայի հայ ավետարանչական ընկերակցության կողմից ձեռք բերված «Saturn Astra» մակնիշի ավտոմեքենան (2007 թվականի արտադրության, 4,500 ԱՄՆ-ի դոլար արժողությամբ, նույնականացման համարը՝ W08AT671685056707, «ԱՄ ՄՁՄ» ՄՏ) ներմուծվում է Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2016 թվականի հունվարի 13-ի «Հայ ավետարանչական ընկերակցության հայաստանի մասնաճյուղի կողմից 2016-2021 թվականներին իրականացվող ծրագրի մասին» N Մ-1469-Ա որոշմամբ հաստատված ծրագրի շրջանակներում:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

**ՆԱԽԱԳԱՀ** **Ս.ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ**
**ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ**

**12 մարտի 2016 թվականի N Մ-145-Ա**
**քաղ. Երևան**

# ՀԱՅԿԱԿԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՄԻՈՒԹՅԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑՉՈՒԹՅԱՆ ՀԱՍՑԵՈՎ ՍՏԱՑՎԱԾ ԲԵՌԻ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ (N 1)

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով հանձնաժողովի որոշման նախագծի 2016 թվականի մարտի 9-ի համաձայնեցման թերթը,* ***ո ր ո շ ու մ է.***

1. Բարեգործական որակել Հայկական բարեգործական ընդհանուր միության Հայաստանի ներկայացուցչության կողմից ձեռք բերված դյուրակիր համակարգիչների (93 հատ՝ 4 տեղ, 65 կգ ընդհանուր քաշով, 13,040 ԱՄՆ-ի դոլարին համարժեք դրամ ընդհանուր արժողությամբ՝ ներառյալ 350 ԱՄՆ-ի դոլար փոխադրման ծախսերը, «Արարատյան» ՄՏ) ներմուծման և «Հայաստանի շախմատի ակադեմիա» հիմնադրամին անհատույց հանձնման ծրագիրը:

2. Հայկական բարեգործական ընդհանուր միության Հայաստանի ներկայացուցչությանը՝ բեռի բաշխումն ավարտելուց հետո մեկամսյա ժամկետում՝ սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով ներկայացնել ամփոփ տեղեկատվություն:

3. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն ու Հայաստանի Հանրապետության սպորտի և երիտասարդության հարցերի նախարարություն:

ՆԱԽԱԳԱՀ Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
## ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ**

**12 մարտի 2016 թվականի N Մ-146-Ա**
**քաղ. Երևան**

### ՀԱՅԿԱԿԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՄԻՈՒԹՅԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑՉՈՒԹՅԱՆ ՀԱՍՑԵՈՎ ՍՏԱՑՎԱԾ ԲԵՌԻ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ (N 2)

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով հանձնաժողովի որոշման նախագծի 2016 թվականի մարտի 9-ի համաձայնեցման թերթը,* ***ո ր ո շ ու մ է.***

1. Բարեգործական որակել Հայկական բարեգործական ընդհանուր միության Ֆրանսիայի մասնաճյուղի կողմից Հայկական բարեգործական ընդհանուր միության Հայաստանի ներկայացուցչության հասցեով ուղարկված հագուստի (202 տեղ, 2,820 կգ ընդհանուր քաշով, 154,164.51 եվրոյին համարժեք դրամ արժեքով, փոխադրման ծախսերը կազմել են 3,680 եվրո, «Արարատյան» ՏՄ) ներմուծման և «Սիրիահայերի հիմնախնդիրները համակարգող կենտրոն» հասարակական կազմակերպությանն անհատույց հանձնման ծրագիրը:

2. Հայկական բարեգործական ընդհանուր միության Հայաստանի ներկայացուցչությանը՝ բեռի բաշխումն ավարտելուց հետո մեկամսյա ժամկետում՝ սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով ներկայացնել ամփոփ տեղեկատվություն:

3. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն ու Հայաստանի Հանրապետության սփյուռքի նախարարություն:

ՆԱԽԱԳԱՀ Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

**15 մարտի 2016 թվականի N Մ- 147 - Ա**
(Որոշումն ընդունվել է 2016 թվականի փետրվարի 19-ին)
**քաղ. Երևան**

## «ԼԱԼԾ» ԵԶԴԻՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ՄԻԱՎՈՐՈՒՄ» ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ «ՀԱՅԱՍՏԱՆԻ ԵԶԴԻՆԵՐԻ «ՄԱԼԱԿԵ ՏԱՈՒՍԻ» ՏԱՃԱՐԻ ԿԱՌՈՒՑՈՒՄ ԵՎ ՀԱՐԱԿԻՑ ՏԱՐԱԾՔՆԵՐԻ ԿԱՌՈՒՑԱՊԱՏՈՒՄ» ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2016 թվականի հունվարի 27-ի N 07/80-2/-255016 և հունվարի 26-ի N 06/3-3/2158-16, Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության 2016 թվականի հունվարի 29-ի N 02/14/794-16, Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և արտակարգ իրավիճակների նախարարության 2016 թվականի փետրվարի 3-ի N 1/32.2/1235-16, Հայաստանի Հանրապետության քաղաքաշինության նախարարության 2016 թվականի հունվարի 29-ի N 06/18.1/367-16 և Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետարանի 2016 թվականի հունվարի 26-ի N 01/04/302-16 եզրակացությունները,* ***ո ր ո շ ու մ է.***

1. Բարեգործական որակել «Լալշ» եզդիների Ազգային միավորում» հասարակական կազմակերպության (ՀՀ Արմավիրի մարզ, գյուղ Ակնալիճ, Գառնիկյան փող. 3, ՀՎՀՀ՝ 04727408) կողմից իրականացվող՝ 2,500,000 ԱՄՆ-ի դոլարին համարժեք դրամ արժողությամբ «Հայաստանի եզդիների «Մալակե Տաուսի» տաճարի կառուցում և հարակից տարածքների կառուցապատում» ծրագիրը (կցվում է):

2. «Լալշ» եզդիների Ազգային միավորում» հասարակական կազմակերպությանը՝

1) սույն որոշման 1-ին կետում նշված ծրագրի իրականացման շրջանակներում մատակարար (կապալառու) կազմակերպությունների հետ կնքվելիք պայմանագրերի պատճենները ներկայացնել Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով՝ «Ավելացված արժեքի հարկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի դրույթների համաձայն ավելացված արժեքի հարկից ազատվող ապրանքների ու ծառայությունների շրջանակը որոշելու համար.



2) մինչև յուրաքանչյուր եռամսյակին հաջորդող ամսվա 25-ը՝ սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով ներկայացնել տեղեկություններ տվյալ եռամսյակի ընթացքում՝ նշված ծրագրի շրջանակներում կազմակերպության կողմից, ինչպես նաև կազմակերպությանը մատակարարված ապրանքների ու մատուցված ծառայությունների, իսկ ծրագրի ավարտից հետո մեկամսյա ժամկետում՝ ամփոփ տեղեկություններ ծրագրի կատարման մասին:

3. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարություն, Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և արտակարգ իրավիճակների նախարարություն, Հայաստանի Հանրապետության քաղաքաշինության նախարարություն և Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետին:

ՆԱԽԱԳԱՀ Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ

«Լալշ» եզդիների ազգային միավորում» հասարակական կազմակերպության խորհրդի կողմից
«20» հունվարի 2016 թ

**«Հայաստանի եզդիների «Մալակե Տաուսի» տաճարի կառուցում և հարակից տարածքների կառուցապատում» ծրագիր**

| | | |
|---|---|---|
| 1. | Ծրագրի նպատակը | Հայաստանի եզդիների «Մալակե Տաուսի» տաճարի կառուցում և հարակից տարածքների կառուցապատում |
| 2. | Ծրագրի բարեգործական որակման նպատակը | Օգտվել ՀՀ հարկերի, տուրքերի, պարտադիր վճարների գծով օրենքով սահմանված արտոնություններից: |
| 3. | Բարեգործը | Սլոյան Միրզա Չոլոյի (ՀՀ Արմավիրի մարզ, գյուղ Մուսալեռ, անձնագիր Ե 2400777 տրված է 18.07.2015) |
| 4. | Ծրագիրը կատարողը | «Լալշ» եզդիների ազգային միավորում» հասարակական կազմակերպություն (Հասցեն՝ ՀՀ, Արմավիրի մարզ, գյուղ Ակնալիճ, Գառնիկյան փող., 3, ՀՎՀՀ 04727408) |
| 5. | Ծրագրի իրականացման վայրը և բնագավառը | ՀՀ Արմավիրի մարզ, գյուղ Տարոնիկ, հոգևոր տաճարի շինություն |
| 6. | Ծրագրի բյուջեն | 2,500,000ԱՄՆ դոլարին համարժեք դրամ |
| 7. | Բարեգործություն ստացողը | Հայաստանի եզդիների համայնք |
| 8. | Ծրագրի իրականացման տևողությունը | 2016 թվականի հունվարի 1-ից մինչև 2019 թվականի դեկտեմբերի 31-ը |
| 9. | Միջոցառումների նկարագրությունը և ժամկետները, անհրաժեշտ ֆինանսական միջոցների ծավալը | 1. նախագծի կազմում – մինչև 01.01.16թ. – 25,000 ԱՄՆ դոլարին համարժեք դրամ<br>2. շինանյութերի ձեռքբերում – մինչև 01.06.16թ. – 1,050,200 ԱՄՆ դոլարին համարժեք դրամ<br>3. շինարարության իրականացում – մինչև 31.12.2019թ. – 1,374,800 ԱՄՆ դոլարին համարժեք դրամ<br>4. ավտոմեքենայի ձեռքբերում – մինչև 01.06.16թ. – 50,000 ԱՄՆ դոլարին համարժեք դրամ<br>---------------------------------------------------------------------------<br>**2,500,000** ԱՄՆ դոլարին համարժեք դրամ |
| 10. | Ձեռք բերվող (ներմուծվող) ապրանքների ու ծառայությունների համառոտ նկարագիրը, ծավալները և նախատեսվող գինը | Մասնավորապես, անհրաժեշտություն է առաջանում ներկրել հետևյալ նյութերը, գործիքները և մարդատար ավտոմեքենան՝ հետևյալ ծավալներով (անհրաժեշտություն է առաջանում ազատել մաքսատուրքերից).<br>- ներքին պատերի «Մարմարիտ» տիպի երեսապատման սպիտակ քարեր՝<br>200 խ.մ - 500 տոննա – 130,000 ԱՄՆ դոլարին համարժեք դրամ<br>- դրսի շարվածքի «Մարմարիտ» քարեր՝<br>400 խ.մ – 1000 տոննա – 150,000 ԱՄՆ դոլարին համարժեք դրամ<br>- հատակի սալեր «Մարմարիտ»՝<br>160 խ.մ – 400 տոննա – 112,000 ԱՄՆ դոլարին համարժեք դրամ<br>- քարի սոսինձ՝ 1000 կգ – 4,500 ԱՄՆ դոլարին համարժեք դրամ<br>- փոշեներկանյութ սոսնձի համար՝ 200 կգ – 2,000 ԱՄՆ դոլարին համարժեք դրամ<br>- քարի ամրակցման դետալներ՝ չժանգոտվող մետաղից՝ 1000 կգ -5,000 ԱՄՆ դոլարին համարժեք դրամ<br>- տարածքի սալաքարեր՝ 2500 քառ.մ՝ 625 տոննա – 100,000 ԱՄՆ դոլարին համարժեք դրամ<br>- կլոր ալմաստե սղոց (D=1300մմ) – 10 հատ – 3,000 ԱՄՆ դոլարին համարժեք դրամ<br>- սղոցի ալմաստե բրիկետներ – 3000 հատ 25,000 ԱՄՆ դոլարին համարժեք դրամ<br>- ալմաստե բրիկետներ՝ հղկման և փայլեցման համար – 1000 հատ – 20,000 ԱՄՆ դոլարին համարժեք դրամ<br>- քար կտրող ալմաստե ճոպաններ – 10 հատ (երկարությունը 10 մետր) – 5,000 ԱՄՆ դոլարին համարժեք դրամ<br>- ճոպանով քար կտրող հաստոց – 3 հատ – 15,000 ԱՄՆ դոլարին համարժեք դրամ<br>- հղկող փայլեցնող հաստոց – 3 հատ – 160,000 ԱՄՆ դոլարին համարժեք դրամ<br>- սալիկների եզրակտրող հաստոց – 2հատ – 6,000 ԱՄՆ դոլարին համարժեք դրամ<br>- քար կտրող սկավառակներ (D=300մմ) – 700 հատ – 14,000 ԱՄՆ դոլարին համարժեք դրամ<br>- քար կտրող սկավառակներ (D=230մմ) – 600 հատ – 7,200 ԱՄՆ դոլարին համարժեք դրամ<br>- քար կտրող սկավառակներ (D=125մմ) – 400 հատ – 2,000 ԱՄՆ դոլարին համարժեք դրամ<br>- քար կտրող սկավառակներ (D=180մմ) – 400 հատ – 4,000 ԱՄՆ դոլարին համարժեք դրամ<br>- քար հղկող սկավառակներ (D=230մմ) – 300 հատ – 12,000 ԱՄՆ դոլարին |

| | | |
|---|---|---|
| | | համարժեք դրամ<br>- ելուստներ և առվակներ մշակող ալմաստե սկավառակներ-150 հատ - 22,50 ԱՄՆ դոլարին համարժեք դրամ<br>- ամրանների ձեռքբերում - 102 տոննա - 51,000 ԱՄՆ դոլարին համարժե դրամ<br>- քար կտրող հաստոց - 2 հատ - 200,000 ԱՄՆ դոլարին համարժեք դրամ<br>- մարդատար ավտոմեքենա - 50,000 ԱՄՆ դոլարին համարժեք դրամ<br>.....................................................................................................<br>**ընդամենը՝ 1,100,200**<br><br>- նախագծի կազմում - մինչև 01.01.16թ. - 25,000 ԱՄՆ դոլարին համարժեք դրամ (արտոնություն չի ակնկալվում)<br>- շինարարության իրականացում - մինչև 31.12.2019թ. - 1,374,800 ԱՄՆ դոլարի համարժեք դրամ (արտոնություն չի ակնկալվում)<br>-----------------------------------------------------------------------------------------------<br>Ընդամենը՝ 2,500,000 ԱՄՆ դոլարին համարժեք դրամ |
| 11. | Ծրագրի իրականացման հետ կապված կազմակերպական ծախսերը | կազմակերպչական ծախսերն իրականացվում են հասարակական կարգո անհրաժեշտություն կա ձեռք բերել մարդատար ավտոմեքենա - 50,000 ԱՄ դոլարին համարժեք դրամ |
| 12. | Համագործակցությունը պետական կառավարման, տեղական ինքնակառավարման մարմինների, այլ կազմակերպությունների հետ | ՀՀ Արմավիրի մարզպետարանի, Տարոնիկի և Ակնալճի գյուղապետարաններ հետ |
| 13. | Ծրագրի արդյունավետության նկատմամբ վերահսկողության մեխանիզմների նկարագրությունը | Հաշվետվություն է ներկայացվում բարեգործին, ինչպես նաև սահմանվա կարգով տեղեկատվություն է ներկայացվում ՀՀ կառավարության բարեգործակա ծրագրերի համակարգման հանձնաժողովին |

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

**16 մարտի 2016 թվականի N Մ-148-Ա**
**քաղ. Երևան**

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2015 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 25-Ի N Մ-1413-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ ԲԵՌՆԵՐԻ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ՄԱՍԻՆ

**(«Դիակոնիա» բարեգործական հիմնադրամ)**

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով հանձնաժողովի որոշման նախագծի 2016 թվականի մարտի 14-ի համաձայնեցման թերթը, ինչպես նաև հաշվի առնելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2016 թվականի մարտի 15-ի N 07/80-2/9612-16 և մարտի 16-ի N 06/3-3/9712-16 ու Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության 2016 թվականի մարտի 14-ի N ՖԲ/ԱնՄ-2-1/1872-16 եզրակացությունները,* ***ո ր ո շ ու մ  է.***

1. Սահմանել, որ «Դիակոնիա» բարեգործական հիմնադրամի կողմից ձեռք բերված ներքոհիշյալ ապրանքները ներմուծվում են Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2015 թվականի դեկտեմբերի 25-ի «Դիակոնիա» բարեգործական հիմնադրամի կողմից իրականացվող «Օժանդակություն Հայաստանի Հանրապետության քաղաքային և գյուղական համայնքների ազգաբնակչությանը» ծրագրի մասին» N Մ-1413-Ա որոշմամբ հաստատված ծրագրի շրջանակներում (բաշխման ցանկերը կցվում են)՝

1) մակարոնային արտադրանք՝ 2,000 տեղ, 20,400 կգ ընդհանուր քաշով, 43,200 ԱՄՆ-ի դոլարին համարժեք դրամ ընդհանուր արժողությամբ՝ ներառյալ 2,800 ԱՄՆ-ի դոլար փոխադրման ծախսերը, «Արարատյան» ՄՏ.

2) բուսական յուղ՝ 2,160 տեղ, 20,217.6 կգ ընդհանուր քաշով, 62,156.80 ԱՄՆ-ի դոլարին համարժեք դրամ ընդհանուր արժողությամբ՝ ներառյալ 2,800 ԱՄՆ-ի դոլար փոխադրման ծախսերը, «Արարատյան» ՄՏ:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն, Երևանի քաղաքապետարան ու Հայաստանի Հանրապետության Արարատի, Արմավիրի, Գեղարքունիքի, Լոռու, Կոտայքի և Տավուշի մարզպետարաններին:

ՆԱԽԱԳԱՀ — Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

---

հինվոյս P-D06031602 06.03.2016

*Բեռի բաշխման ցանկ*

| N N | Ապրանքի անվանումը | Շահառուները ըստ մարզերի | Շահառուներ | Շահառուների քանակը | Շահառուներին բաշխվող քանակը (կգ) | Արժեքը ըստ փաթեթների (ԱՄՆ-ի դոլար) |
|---|---|---|---|---|---|---|
| 1 | Մակարոնային արտադրանք | Գեղարքունիքի մարզ | Գետիկ | 74 | 341 | 737 |
| | | | Այգուտ | 164 | 757 | 1.634 |
| | | | Մարտունի | 73 | 337 | 727 |
| | | | Դպրաբակ | 81 | 374 | 807 |
| | | | Վահան | 188 | 867 | 1.873 |
| | | | Կալավան | 23 | 106 | 229 |
| | | | Բարեպատ | 6 | 28 | 60 |
| | | | Ջորավանք | 31 | 143 | 309 |
| | | | Անտառամեջ | 22 | 101 | 219 |
| | | | Գավառ | 61 | 281 | 608 |
| | | | Թթուջուր | 81 | 374 | 807 |
| | | Արմավիրի մարզ | Արտաշար | 51 | 235 | 508 |
| | | Արարատի մարզ | Վեդի | 17 | 78 | 169 |
| | | | Արտաշատ | 16 | 74 | 159 |
| | | | Գետազատ | 39 | 180 | 389 |
| | | | Մրգանուշ | 16 | 74 | 159 |
| | | Կոտայքի մարզ | Չարենցավան | 13 | 60 | 130 |
| | | | Սևաբերդ | 41 | 189 | 409 |
| | | | Ջրառատ | 18 | 83 | 179 |
| | | | Աբովյան | 38 | 175 | 379 |
| | | Լոռու մարզ | Վանաձոր | 48 | 221 | 478 |
| | | Տավուշի մարզ | Դիլիջան | 15 | 69 | 149 |
| | | | Իջևան | 18 | 83 | 179 |
| | | Երևան | | 3201 | 14770 | 31.898 |
| | Ընդամենը | | | 4335 | 20000 | 43.200 |

«Դիակոնիա» բարեգործական հիմնադրամի տնօրեն՝ Բ. Զամբազյան

հնվոյս P-D06031601 06.03.2016

*Բեռի բաշխման ցանկ*

| N N | Ապրանքի անվանումը | Շահառուները ըստ մարզերի | Շահառուների քանակը | | Շահառուներին բաշխվող քանակը (կգ) | Արժեքը ըստ փաթեթների (ԱՄՆ-ի դոլար) |
|---|---|---|---|---|---|---|
| 2 | Բուսական յուղ | Գեղարքունիքի մարզ | Գետիկ | 74 | 345 | 1.061 |
| | | | Այգուտ | 164 | 765 | 2.351 |
| | | | Մարտունի | 73 | 340 | 1.047 |
| | | | Դպրաբակ | 81 | 378 | 1.161 |
| | | | Վահան | 188 | 877 | 2.696 |
| | | | Կալավան | 23 | 107 | 330 |
| | | | Բարեպատ | 6 | 28 | 86 |
| | | | Չորավանք | 31 | 145 | 444 |
| | | | Անտառամեջ | 22 | 103 | 315 |
| | | | Գավառ | 61 | 284 | 875 |
| | | | Թթուջուր | 81 | 378 | 1.161 |
| | | Արմավիրի մարզ | Արտաշար | 51 | 238 | 731 |
| | | Արարատի մարզ | Վեդի | 17 | 79 | 244 |
| | | | Արտաշատ | 16 | 75 | 229 |
| | | | Գետազատ | 39 | 182 | 559 |
| | | | Մրգանուշ | 16 | 75 | 229 |
| | | Կոտայքի մարզ | Չարենցավան | 13 | 61 | 186 |
| | | | Սևաբերդ | 41 | 191 | 588 |
| | | | Չորաղբյուր | 18 | 84 | 258 |
| | | | Աբովյան | 38 | 177 | 545 |
| | | Լոռու մարզ | Վանաձոր | 48 | 224 | 688 |
| | | Տավուշի մարզ | Դիլիջան | 15 | 70 | 215 |
| | | Երևան | Իջևան | 18 | 84 | 258 |
| | Ընդամենը | | 3201 | | 14928 | 45.896 |
| | | | 4335 | | 20218 | 62.157 |

*«Դիակոնիա» բարեգործական հիմնադրամի տնօրեն* Բ. Զամբազյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ**

**17 մարտի 2016 թվականի N Մ - 149 - Ա**
**քաղ. Երևան**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՓՅՈՒՌՔԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՀԱՍՑԵՈՎ ՍՏԱՑՎԱԾ ԲԵՌԻ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ**

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով հանձնաժողովի որոշման նախագծի 2016 թվականի մարտի 16-ի համաձայնեցման թերթը,* **_ո ր ո շ ու մ է._**

1. Բարեգործական որակել Կանադայի Հայ ավետարանչական ընկերակցության կողմից Հայաստանի Հանրապետության սփյուռքի նախարարության հասցեով ուղարկված ծածկոցների (30 տեղ, 630 կգ ընդհանուր քաշով, 3,300 ԱՄՆ-ի դոլարին համարժեք դրամ ընդհանուր արժողությամբ, ներառյալ փոխադրման ծախսերը, «Արարատյան» ՏՄ) ներմուծման և անհատույց բաշխման ծրագիրը: Բեռը նախատեսվում է տրամադրել Հայաստանի Հանրապետության սահմանամերձ շրջանների զորամասերին:

2. Հայաստանի Հանրապետության սփյուռքի նախարարությանը՝ նշված բեռի բաշխումն ավարտելուց հետո մեկամսյա ժամկետում՝ սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով ներկայացնել ամփոփ տեղեկատվություն:

3. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարություն և Հայաստանի Հանրապետության սփյուռքի նախարարություն:

ՆԱԽԱԳԱՀ Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ**
**ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

**18 մարտի 2016 թվականի N Մ-150-Ա**
**քաղ. Երևան**

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2012 ԹՎԱԿԱՆԻ ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 19-Ի N Մ-809-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ ԲԵՌԻ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ՄԱՍԻՆ

**(«Փյունիկ» բարեգործական հիմնադրամ)**

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով հանձնաժողովի որոշման նախագծի 2016 թվականի մարտի 16-ի համաձայնեցման թերթը,* ***ո ր ո շ ու մ  է.***

1. Սահմանել, որ «Փյունիկ» բարեգործական հիմնադրամի կողմից Երևանի քաղաքային համայնքի համար ձեռք բերված ծաղկասածիլները (7 տեղ, 2,425 կգ ընդհանուր քաշով, 42,164.02 եվրոյին համարժեք դրամ արժեքով, փոխադրման ծախսերը կազմել են 5 մլն դրամ, «Զվարթնոց» ՄՏ) ներմուծվում են Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2012 թվականի հոկտեմբերի 19-ի «Փյունիկ» բարեգործական հիմնադրամի կողմից իրականացվող «Բարեգործական բեռների ներմուծում և անհատույց բաշխում» ծրագրի մասին» N Մ-809-Ա որոշմամբ հաստատված (2012 թվականի հոկտեմբերի 31-ի N Մ-872-Ա, 2013 թվականի նոյեմբերի 29-ի N Մ-1109-Ա, 2014 թվականի փետրվարի 14-ի N Մ-059-Ա, 2015 թվականի հունվարի 26-ի N Մ-006-Ա և հոկտեմբերի 7-ի N Մ-1109-Ա ու 2016 թվականի փետրվարի 22-ի N Մ-138-Ա որոշումների խմբագրությամբ) ծրագրի շրջանակներում:

3. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե և Երևանի քաղաքապետարան:

ՆԱԽԱԳԱՀ                                                    Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

**Ո Ր Ո Շ Ո Ւ Մ**
**18 մարտի 2016 թվականի N Մ- 151 -Ա**
**քաղ. Երևան**

### ԱՄԵՐԻԿԱՅԻ ՀԱՅ ՕԳՆՈՒԹՅԱՆ ՖՈՆԴԻ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՄԱՍՆԱՃՅՈՒՂԻ ԿՈՂՄԻՑ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ՋԱՆԳԱԿԱՏՈՒՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՈՌՈԳՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՆԱԽԱԳԾՈՒՄ» ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2016 թվականի մարտի 1-ի N 07/80-2/7547-16 և փետրվարի 26-ի N 06/3-3/7219-16, Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության 2016 թվականի փետրվարի 26-ի N 02/14/2040-16, Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և զարգացման նախարարության 2016 թվականի մարտի 4-ի N 01/15/53-16 ու Հայաստանի Հանրապետության Արարատի մարզպետի 2016 թվականի փետրվարի 29-ի N 1/3/1-1/1005-16 եզրակացությունները,* ***ո ր ո շ ու մ է.***

1. Բարեգործական որակել Ամերիկայի Հայ օգնության ֆոնդի Հայաստանի մասնաճյուղի կողմից իրականացվող՝ 6,180,000 դրամ արժողությամբ «Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Ջանգակատուն համայնքի ոռոգման համակարգի նախագծում» ծրագիրը (կցվում է):

2. Սահմանել, որ Ամերիկայի Հայ օգնության ֆոնդի Հայաստանի մասնաճյուղի կողմից կնքված (քաղ. Երևան, Մովսես Խորենացու 22, ՀՎՀՀ՝ 02517115)՝ ստորև նշված պայմանագրով նախատեսված գործարքն անմիջականորեն կապված է սույն որոշման 1-ին կետում նշված ծրագրի իրականացման հետ և դրա համար ունի զգալի նշանակություն.

«Ջրտուք» ՍՊԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 01218107) 2016 թվականի փետրվարի 18-ին կնքված պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է նախագծային աշխատանքների իրականացում՝ 6,180,000 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի:

3. Ամերիկայի Հայ օգնության ֆոնդի Հայաստանի մասնաճյուղին՝ նշված ծրագրի ավարտից հետո մեկամսյա ժամկետում՝ սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով ներկայացնել ամփոփ տեղեկատվություն:

4. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարություն, Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և զարգացման նախարարություն, Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե և Հայաստանի Հանրապետության Արարատի մարզպետին:

Նախագահ Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

ՀԱՍՏԱՏՎԱԾ Է

«Ամերիկայի հայ օգնության ֆոնդի Հայաստանի մասնաճյուղի տնօրեն
Բ. Սարգսյանի .................................. կողմից
**18 փետրվարի 2016**

Ամերիկայի Հայ օգնության ֆոնդի Հայաստանի մասնաճյուղի
կողմից իրականացվող
«ՀՀ Արարատի մարզի Զանգակատուն համայնքի ոռոգման համակարգի
նախագծում»

# ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳԻՐ

| | | |
|---|---|---|
| 1 | Ծրագրի նպատակը | Ծրագրի նպատակն է նախագծել ՀՀ Արարատի մարզի Զանգակատուն գյուղի 1800 մետր երկարությամբ ոռոգման ջրագիծ, որի կառուցումից հետո համայնքի բնակիչներին պատկանող 70 հա հողատարածք կդառնա ոռոգելի: |
| 2 | Ծրագրի բարեգործական որակման նպատակը | Ակնկալում ենք ԱԱՀ ազատում («Բարեգործության մասին» Հայաստանի հանրապետության օրենքի 15-րդ հոդված)․ |
| 3 | Բարեգործը | ԱՄՆ-ի Հայ օգնության ֆոնդ |
| 4 | Ծրագրի կատարողը | Ամերիկայի Հայ օգնության ֆոնդի Հայաստանի մասնաճյուղ<br>հասցեն՝ ք. Երևան 0010, Խորենացի 22, ՀՎՀՀ 02517115 |
| 5 | Ծրագրի իրականացման վայրը և բնագավառը | Իրականացման վայրը՝<br>ՀՀ Արարատի մարզ, գյուղ Զանգակատուն<br>Բնագավառ՝ շինարարական |
| 6 | Ծրագրի բյուջեն | Ծրագրի ընդհանուր արժեքը կազմում է 6 180 000 (վեց միլիոն հարյուր ութսուն հազար) ՀՀ դրամ: |
| 7 | Բարեգործություն ստացողը | ՀՀ, Արարատի մարզ, Զանգակատուն համայնքի 150 ընտանիքներ |
| 8 | Ծրագրի իրականացման տևողությունը և/ կամ սկիզբը, ավարտը | Սկիզբ՝ 18.02.2016 ավարտ՝ 30.12.2016 |
| 9 | Միջոցառումների նկարագրությունը և ժամկետները, անհրաժեշտ ֆինանսական միջոցառումների ծավալը | Ծրագրի շրջանակում նախատեսվում է նախագծել Զանգակատուն գյուղի 1800 մետր ոռոգման ջրագիծը, որն նաև ներառում է փորձաքննության և հեղինակային հսկողության ծառայությունները:<br><br>Նախատեսված աշխատանքների արժեքը կազմում է՝<br>Նախագիծ՝ 4 000 000 ՀՀ դրամ<br>Քաղաքաշինական ու բնապահպանման փորձաքննություն՝ 1 580 000 ՀՀ դրամ<br>Հեղինակային հսկողություն՝ 600 000 ՀՀ դրամ<br><br>Ծրագիրն իրականացվելու է հետևյալ ժամկետներում՝<br>Նախագծում՝ 18.02.2016-31.03.2016<br>Քաղաքաշինական ու բնապահպանական փորձաքննություն՝ 18.02.2016-10.04.2016<br>Հեղինակային հսկողություն՝ 18.02.2016 մինչև շինարարական աշխատանքների ավարտը, որն նախատեսվում է 30.12.2016-ին:<br><br>Կատարվող աշխատանքների մանրամասն նկարագրությունը ներկայացված է կից պայմանագրում: |
| 10 | Ձեռք բերվող (ներմուծվող) ապրանքների ծառայությունների համառոտ նկարագիրը, ծավալները և նախատեսվող գինը | Ակնկալում ենք ԱԱՀ-ից ազատում 6 180 000 (վեց միլիոն մեկ հարյուր ութսուն հազար) ՀՀ դրամ գումար:<br>Նախագծային աշխատանքների պայմանագիր առ 18.02.2016թ կնքված, «Ջրտուր» ՍՊԸ (հասցե՝ ՀՀ, ք. Երևան, Լենինգրադյան փ. 14-28, ՀՎՀՀ 01218107) և «Ամերիկայի Հայ օգնության ֆոնդի Հայաստանի մասնաճյուղի» (հասցե ՀՀ, ք. Երևան, Խորենացի 22, ՀՎՀՀ 02517115) միջև: |
| 11 | Ծրագրի իրականացման հետ կապված կազմակերպական ծախսերը | Ծրագրի չի նախատեսում կազմակերպական ծախսեր: |
| 12 | Համագործակցությունը պետական կառավարման և տեղական ինքնակառավարման մարմինների, այլ կառույցների/ կազմակերպությունների հետ | ՀՀ կառավարությանն առընթեր բարեգործական ծրագրերի համակարգող հանձնաժողով: |
| 13 | Ծրագրի արդյունավետության գնահատմամբ վերահսկողության մեխանիզմների նկարագրությունը | Վերահսկողությունը իրականացվելու է ՀՕՖ-ի Նյու Յորքի գրասենյակի կողմից՝ ամսական հաշվետվությունների միջոցով, ինչպես նաև ՀՀ կառավարությանն առընթեր բարեգործական ծրագրերի համակարգող հանձնաժողովի կողմից: |

02508251

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ**
**ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

**Ո Ր Ո Շ Ո Ւ Մ**
**18 մարտի 2016 թվականի N Մ- 152 -Ա**
**քաղ. Երևան**

**«ՎՈՐԼԴ ՎԻԺՆ ԻՆԹԵՐՆԵՅՇՆԼ» ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՀԱՅԱՍՏԱՆՅԱՆ ՄԱՍՆԱՃՅՈՒՂԻ ԿՈՂՄԻՑ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՇԱՂԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԴՊՐՈՑԻ ՄԱՍՆԱԿԻ ՎԵՐԱՆՈՐՈԳՈՒՄ» ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ**

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2016 թվականի մարտի 3-ի N 07/80-2/8143-16 և մարտի 3-ի N 06/3-3/8073-16, Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության 2016 թվականի մարտի 1-ի N 02/14/2211-16, Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարության 2016 թվականի մարտի 3-ի N 03/07.1/1865-16 ու Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզպետի 2016 թվականի մարտի 1-ի N 01/855-16 եզրակացությունները,* ***որոշում է.***

1. Բարեգործական որակել «Վորլդ վիժն ինթերնեյշնլ» միջազգային բարեգործական կազմակերպության հայաստանյան մասնաճյուղի կողմից (ՀՀ, քաղ. Երևան, Ռոմանոս Մելիքյան 1, ՀՎՀՀ՝ 02528755) իրականացվող՝ 2,753,843 դրամ ընդհանուր արժողությամբ «Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Շաղատ համայնքի դպրոցի մասնակի վերանորոգում» ծրագիրը (կցվում է):

2. Սահմանել, որ սույն որոշման 1-ին կետում նշված ծրագրի իրականացման նպատակով «Վորլդ վիժն ինթերնեյշնլ» միջազգային բարեգործական կազմակերպության հայաստանյան մասնաճյուղի կողմից կնքված՝ ստորև նշված պայմանագրով նախատեսված գործարքն անմիջականորեն կապված է ծրագրի իրականացման հետ և դրա համար ունի զգալի նշանակություն.

«Բարսիս» ՍՊԸ-ի (ՀՎՀՀ՝ 02230504) հետ 2016 թվականի փետրվարի 18-ին կնքված N WVA/SIS ADP/CW-16/001/FY16 պայմանագրում (2016 թվականի մարտի 9-ի համաձայնագրի խմբագրությամբ) նշված գործարքը, որով նախատեսվում է դռների տեղադրում՝ 2,753,843 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի:

3. «Վորլդ վիժն ինթերնեյշնլ» միջազգային բարեգործական կազմակերպության հայաստանյան մասնաճյուղին՝ ծրագրի ավարտից հետո մեկամսյա ժամկետում՝ սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով ներկայացնել ամփոփ տեղեկություններ ծրագրի կատարման մասին:

4. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարություն, Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարություն, Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե ու Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզպետին:

ՆԱԽԱԳԱՀ Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

ՀԱՍՏԱՏՎԱԾ Է՝
«Վորլդ Վիժն Ինթերնեյշնլ»
միջազգային բարեգործական կազմակերպության
հայաստանյան մասնաճյուղի
Ծրագրի տնօրեն Ժիրայր Էդիլյան
18 փետրվարի 2016 թ.

**«Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Շաղատ համայնքի դպրոցի մասնակի վերանորոգում»**
**Ծրագիր**

| | | |
|---|---|---|
| 1 | Ծրագրի նպատակը | Աջակցել Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Շաղատ համայնքի դպրոցին՝ բարելավելու շենքային պայմանները: |
| 2 | Ծրագրի բարեգործական ոլորտի նպատակը | Օգտվել Հայաստանի Հանրապետության հարկերի, տուրքերի, պարտադիր վճարների գծով օրենքով սահմանված արտոնություններից: |
| 3 | Բարեգործը | «Վորլդ Վիժն Ինթերնեյշնլ" միջազգային բարեգործական կազմակերպության Մեծ Բրիտանիայի գրասենյակ<br>Հասցե՝ World Vision UK, Opal Drive, Fox Milne, Milton Keynes MK15 0ZR UK<br>Հեռ.: +44 1908 841000 |
| 4 | Ծրագիրը կատարողը | «Վորլդ Վիժն Ինթերնեշնլ» միջազգային բարեգործական կազմակերպության հայաստանյան մասնաճյուղ<br>Հասցե՝ Երևան, Ռ.Մելիքյան 1; ՀՎՀՀ՝ 02528755: |
| 5 | Ծրագրի իրականացման վայրը և բնագավառը | Իրականացման վայրը՝ Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Շաղատ համայնք<br>Բնագավառը՝ կրթական |
| 6 | Ծրագրի բյուջեն | Ծրագրի ընդհանուր արժեքը կազմում է 2,753,843 (երկու միլիոն յոթ հարյուր հիսուներեք հազար ութ հարյուր քառասուներեք) ՀՀ դրամ՝ առանց ԱԱՀ-ի: |
| 7 | Բարեգործություն ստացողը | Բարեգործություն ստացող են հանդիսանում Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Շաղատ համայնքի դպրոցի աշակերտները: |
| 8 | Ծրագրի իրականացման տևողությունը | 25 փետրվարի 2016 թ. - 31 մարտի 2016 թ. |
| 9 | Միջոցառումների նկարագրությունը և ժամկետները, անհրաժեշտ ֆինանսական միջոցների ծավալը | Ծրագրի շրջանակներում նախատեսվում է 2016թ. փետրվարի 25-ից մինչև 2016 թ. մարտի 31-ն ընկած ժամանակահատվածում մասնակի վերանորոգման աշխատանքներ իրականացնել Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Շաղատ համայնքի դպրոցում: Մասնավորապես կիրականացվեն հին փայտյա դռների ապամոնտաժման և մետաղապլաստե նոր դռների տեղադրման աշխատանքներ:<br>Այդ աշխատանքներն իրականացնելու համար «Վորլդ Վիժն Ինթերնեյշնլ» միջազգային բարեգործական կազմակերպության հայաստանյան մասնաճյուղը մրցույթային կարգով ընտրել է շինարարական կազմակերպություն և շինարարական կապալի պայմանագիր է կնքել «Բարսիս» ՍՊԸ -ի հետ:<br>Ծրագրի ընդհանուր արժեքը կազմում է 2,753,843 (երկու միլիոն յոթ հարյուր հիսուներեք հազար ութ հարյուր քառասուներեք) ՀՀ դրամ՝ առանց ԱԱՀ-ի: |
| 10 | Ձեռք բերվող (ներմուծվող) ապրանքների ու ծառայությունների համառոտ նկարագիրը, ծավալները և նախատեսվող գինը | Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Շաղատ համայնքի դպրոցի մասնակի վերանորոգման աշխատանքներն իրականացնելու համար «Վորլդ Վիժն Ինթերնեյշնլ» միջազգային բարեգործական կազմակերպության հայաստանյան մասնաճյուղը հայտարարել է բաց մրցույթ, որի արդյունքում հաղթող է ճանաչվել «Բարսիս» ՍՊԸ-ն: Վերջինիս հետ կնքվել է շինարարական կապալի պայմանագիր:<br>Ծրագրի ընդհանուր արժեքը կազմում է 2,753,843 (երկու միլիոն յոթ հարյուր հիսուներեք հազար ութ հարյուր քառասուներեք) ՀՀ դրամ՝ առանց ԱԱՀ-ի: |
| 11 | Ծրագրի իրականացման հետ կապված կազմակերպական ծախսերը | Ծրագրի իրականացման հետ կապված կազմակերպչական ծախսեր նախատեսված չեն: |
| 12 | Համագործակցությունը պետական կառավարման, տեղական ինքնակառավարման և այլ մարմինների հետ | Ներկայացված ծրագրի իրականացման ընթացքում «Վորլդ Վիժն Ինթերնեյշնլ» միջազգային բարեգործական կազմակերպության հայաստանյան մասնաճյուղը համագործակցում է Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզպետարանի և Շաղատ համայնքի դպրոցի հետ: |
| 13 | Ծրագրի արդյունավետության նկատմամբ վերահսկողության մեխանիզմների նկարագրությունը | Ծրագրի վերահսկողությունն իրականացվում է «Վորլդ Վիժն Ինթերնեյշնլ» միջազգային բարեգործական կազմակերպության Ազգային գրասենյակի, Սիսիանի տարածքային զարգացման գրասենյակի, ինչպես նաև ֆինանսական օժանդակությունը տրամադրող Մեծ Բրիտանիայի գրասենյակի կողմից:<br>«Վորլդ Վիժն Ինթերնեյշնլ» միջազգային բարեգործական կազմակերպության հայաստանյան մասնաճյուղն իր հերթին ենթարկվում է միջազգային աուդիտի և Հայաստանի Հանրապետության հարկային մարմինների ստուգման:<br>Ծրագրի ընթացքի և ավարտի մասին հաշվետվությունը կներկայացվի Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր մարդասիրական ծրագրերի համակարգման հանձնաժողովին: |

«Վորլդ Վիժն Ինթերնեյշնլ» միջազգային բարեգործական կազմակերպության հայաստանյան մասնաճյուղի Գործառնությունների ղեկավար

Շաղիկ Մարուխյան

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ**
**ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

**Ո Ր Ո Շ Ո Ւ Մ**
**18 մարտիի 2016 թվականի N Մ - 153 -Ա**
**քաղ. Երևան**

**«ՎՈՐԼԴ ՎԻԺՆ ԻՆԹԵՐՆԵՅՇՆԼ» ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՀԱՅԱՍՏԱՆՅԱՆ ՄԱՍՆԱՃՅՈՒՂԻ ԿՈՂՄԻՑ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ «ՏԱՔ ՁՄԵՌ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶԻ ԹԱԼԻՆԻ ՏԱՐԱԾԱՇՐՋԱՆԻ ԽՈՑԵԼԻ ԵՐԵԽԱՆԵՐԻ ՀԱՄԱՐ» ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ**

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2016 թվականի մարտի 3-ի N 07/80-2/8179-16 և մարտի 2-ի N 06/3-3/7881-16, Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության 2016 թվականի մարտի 3-ի N 02/14/2328-16, Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության 2016 թվականի մարտի 2-ի N ՖԲ/ԱնՄ-2-1/1528-16 ու Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզպետի 2016 թվականի մարտի 2-ի N 02/10.1/729 -16 եզրակացությունները,* ***որոշում է.***

1. Բարեգործական որակել «Վորլդ վիժն ինթերնեյշնլ» միջազգային բարեգործական կազմակերպության հայաստանյան մասնաճյուղի կողմից (ՀՀ, քաղ. Երևան, Ռոմանոս Մելիքյան 1, ՀՎՀՀ՝ 02528755) իրականացվող՝ 6,148,400 դրամ ընդհանուր արժողությամբ «Տաք ձմեռ» Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզի Թալինի տարածաշրջանի խոցելի երեխաների համար» ծրագիրը (կցվում է):

2. Սահմանել, որ սույն որոշման 1-ին կետում նշված ծրագրի իրականացման նպատակով «Վորլդ վիժն ինթերնեյշնլ» միջազգային բարեգործական կազմակերպության հայաստանյան մասնաճյուղի կողմից կնքված՝ ստորև նշված պայմանագրով նախատեսված գործարքն անմիջականորեն կապված է ծրագրի իրականացման հետ և դրա համար ունի զգալի նշանակություն՝

«Բեներիկ» ՍՊԸ-ի (ՀՎՀՀ՝ 00082634) հետ 2016 թվականի փետրվարի 19-ին կնքված N WVA/TAL ADP/WW-16/001/FY16 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է տաք հագուստի ձեռքբերում՝ 6,148,400 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի:

3. «Վորլդ վիժն ինթերնեյշնլ» միջազգային բարեգործական կազմակերպության հայաստանյան մասնաճյուղին՝ ծրագրի ավարտից հետո մեկամսյա ժամկետում՝ սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով ներկայացնել ամփոփ տեղեկություններ ծրագրի կատարման մասին:

4. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարություն, Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն, Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե ու Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզպետին:

ՆԱԽԱԳԱՀ Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

ՀԱՍՏԱՏՎԱԾ Է՝
«Վորլդ Վիժն Ինթերնեյշնլ»
միջազգային բարեգործական կազմակերպության
հայաստանյան մասնաճյուղի
Ծրագրի տնօրեն՝ Ծիրայր Էդիլյան

19 փետրվարի 2016 թ.

**««Տաք Ձմեռ» Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզի Թալինի տարածաշրջանի խոցելի երեխաների համար»**
**Ծրագիր**

<table>
<tr><td>1</td><td>Ծրագրի նպատակը</td><td>Աջակցել Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզի Թալինի տարածաշրջանի քսանվեց համայնքների խոցելի 400 երեխաներին՝ տրամադրելով ձմեռային տաք հագուստ և կոշիկ:</td></tr>
<tr><td>2</td><td>Ծրագրի բարեգործական որակման նպատակը</td><td>Օգտվել Հայաստանի Հանրապետության հարկերի, տուրքերի, պարտադիր վճարների գծով օրենքով սահմանված արտոնություններից:</td></tr>
<tr><td>3</td><td>Բարեգործը</td><td>“Վորլդ Վիժն Ինթերնեյշնլ” միջազգային բարեգործական կազմակերպության Կանադայի աջակցող գրասենյակ<br>Հասցե՝ World Vision Canada, 2500-1 World Drive, Mississauga, ON L5T 0A7 Canada</td></tr>
<tr><td>4</td><td>Ծրագիրը կատարողը</td><td>«Վորլդ Վիժն Ինթերնեշնլ» միջազգային բարեգործական կազմակերպության հայաստանյան մասնաճյուղ<br>Հասցե՝ Երևան, Ռ.Մելիքյան 1; ՀՎՀՀ՝ 02528755:</td></tr>
<tr><td>5</td><td>Ծրագրի իրականացման վայրը և բնագավառը</td><td>Իրականացման վայրը՝ Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզի Թալինի տարածաշրջանի Ագարակ, Ակունք, Աշնակ, Արտենի, Դաշտադեմ, Դավթաշեն, Գառնահովիտ, Հացաշեն, Իրինդ, Կաքավաձոր, Կարմրաշեն, Կաթնաղբյուր, Մաստարա, Ներքին Սասնաշեն, Ներքին Բազմաբերդ, Նոր Արթիկ, Սուսեր, Թալին, Թաթուլ, Ցամաքասար, Վերին Բազմաբերդ, Վերին Սասնաշեն, Ոսկեթաս, Եղնիկ, Զարինջա, Զովասար համայնքներ<br>Բնագավառը՝ սոցիալական</td></tr>
<tr><td>6</td><td>Ծրագրի բյուջեն</td><td>Ծրագրի ընդհանուր արժեքը կազմում է 6,148,400 (վեց միլիոն հարյուր քառասունութ հազար չորս հարյուր) ՀՀ դրամ՝ առանց ԱԱՀ-ի:</td></tr>
<tr><td>7</td><td>Բարեգործություն ստացողը</td><td>Բարեգործություն ստացող են հանդիսանում Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզի Թալինի տարածաշրջանի Ագարակ, Ակունք, Աշնակ, Արտենի, Դաշտադեմ, Դավթաշեն, Գառնահովիտ, Հացաշեն, Իրինդ, Կաքավաձոր, Կարմրաշեն, Կաթնաղբյուր, Մաստարա, Ներքին Սասնաշեն, Ներքին Բազմաբերդ, Նոր Արթիկ, Սուսեր, Թալին, Թաթուլ, Ցամաքասար, Վերին Բազմաբերդ, Վերին Սասնաշեն, Ոսկեթաս, Եղնիկ, Զարինջա, Զովասար համայնքների 1-18 տարեկան 400 խոցելի երեխաներ:<br>Շահառու երեխանի ընտրությունը կատարվել է «Վորլդ Վիժն Ինթերնեյշնլ» միջազգային բարեգործական կազմակերպության հայաստանյան մասնաճյուղի Թալինի տարածքային զարգացման ծրագրի համայնքային սոցիալական աշխատողների կողմից՝ վերը նշված համայնքների տեղական ինքնակառավարման մարմինների, դպրոցների և առողջության առաջնային պահպանման կենտրոնների հետ համատեղ:</td></tr>
<tr><td>8</td><td>Ծրագրի իրականացման տևողությունը</td><td>24 փետրվարի 2016 թ. - 31 մարտի 2016 թ.</td></tr>
<tr><td>9</td><td>Միջոցառումների [illegible]ը և ժամկետները, անհրաժեշտ ֆինանսական միջոցների ծավալը</td><td>Ծրագրի շրջանակներում նախատեսվում է 2016թ. փետրվարի 24-ից մինչև 2016թ. մարտի 31-ն ընկած ժամանակահատվածում տաք ձմեռային հագուստ (բաճկոններ, գլխարկներ և ձեռնոցներ) և կոշիկ տրամադրել Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզի Թալինի տարածաշրջանի Ագարակ, Ակունք, Աշնակ, Արտենի, Դաշտադեմ, Դավթաշեն, Գառնահովիտ, Հացաշեն, Իրինդ, Կաքավաձոր, Կարմրաշեն, Կաթնաղբյուր, Մաստարա, Ներքին Սասնաշեն, Ներքին Բազմաբերդ, Նոր Արթիկ, Սուսեր, Թալին, Թաթուլ, Ցամաքասար, Վերին Բազմաբերդ, Վերին Սասնաշեն, Ոսկեթաս, Եղնիկ, Զարինջա, Զովասար համայնքներում բնակվող մինչև 1-18 տարեկան 400 խոցելի երեխաներին:<br>Ձմեռային տաք հագուստի բաշխումը շահառու երեխաներին կիրականացնեն «Վորլդ Վիժն Ինթերնեյշնլ» միջազգային բարեգործական կազմակերպության հայաստանյան մասնաճյուղի Թալինի տարածքային զարգացման ծրագրի համայնքային սոցիալական աշխատողները:<br>Ծրագիրն իրականացնելու համար «Վորլդ Վիժն Ինթերնեյշնլ» միջազգային բարեգործական կազմակերպության հայաստանյան մասնաճյուղը մրցութային կարգով ընտրել է կազմակերպություն և մատակարարման պայմանագիր է կնքել «Բեներիկ» ՍՊԸ-ի հետ:<br>Ծրագրի ընդհանուր արժեքը կազմում է 6,148,400 (վեց միլիոն հարյուր քառասունութ հազար չորս հարյուր) ՀՀ դրամ՝ առանց ԱԱՀ-ի:</td></tr>
<tr><td>10</td><td>Ձեռք բերվող (ներմուծվող) ապրանքների ու ծառայությունների համառոտ նկարագիրը, ծավալները և նախատեսվող գինը</td><td>Ծրագիրը նախատեսում է հետևյալ աշխատանքները.<br><table>
<tr><th>Գործողություն</th><th>Ժամկետ</th><th>Պահանջվող ֆին. միջոցներ (ՀՀ դրամ)</th></tr>
<tr><td>Ձմեռային տաք հագուստի ձեռք բերում</td><td>24.02.2016 – 09.03.2016</td><td>6,148,400</td></tr>
<tr><td>Ձմեռային տաք հագուստի բաշխում շահառու երեխաներին</td><td>10.03.2016 – 31.03.2016</td><td>0</td></tr>
<tr><td colspan="2">Ընդամենը՝</td><td>6,148,400</td></tr>
</table><br>Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզի Թալինի տարածաշրջանի 1-18 տարեկան 400 խոցելի երեխաներին ձմեռային տաք հագուստ և կոշիկ տրամադրելու համար «Վորլդ Վիժն Ինթերնեյշնլ» միջազգային բարեգործական կազմակերպության հայաստանյան մասնաճյուղը բաց մրցույթով ընտրել է մատակարար և մատակարարման պայմանագիր է կնքել «Բեներիկ» ՍՊԸ-ի հետ:<br>Իսկ բաշխումը կիրականացնեն «Վորլդ Վիժն Ինթերնեյշնլ» միջազգային բարեգործական կազմակերպության հայաստանյան մասնաճյուղի Թալինի տարածքային զարգացման ծրագրի համայնքային սոցիալական աշխատողները:</td></tr>
</table>

| | | |
|---|---|---|
| | | Ծրագրի ընդհանուր արժեքը կազմում է 6,148,400 (վեց միլիոն հարյուր քառասունութ հազար չորս հարյուր) ՀՀ դրամ՝ առանց ԱԱՀ-ի: |
| 11 | Ծրագրի իրականացման հետ կապված կազմակերպական ծախսերը | Ծրագրի իրականացման հետ կապված կազմակերպչական ծախսեր նախատեսված չեն: |
| 12 | Համագործակցությունը պետական կառավարման, տեղական ինքնակառավարման և այլ մարմինների հետ | Ներկայացված ծրագրի իրականացման ընթացքում «Վորլդ Վիժն Ինթերնեյշնլ» միջազգային բարեգործական կազմակերպության հայաստանյան մասնաճյուղը համագործակցում է Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզպետարանի, ինչպես նաև Ագարակ, Ակունք, Աշնակ, Արտենի, Դաշտադեմ, Դավթաշեն, Գառնահովիտ, Հացաշեն, Իրինդ, Կաքավաձոր, Կարմրաշեն, Կաթնաղբյուր, Մաստարա, Ներքին Սասնաշեն, Ներքին Բազմաբերդ, Նոր Արթիկ, Սուսեր, Թալին, Թաթուլ, Ցամաքասար, Վերին Բազմաբերդ, Վերին Սասնաշեն, Ոսկեթաս, Եղնիկ, Զարինջա, Զովասար համայնքների տեղական ինքնակառավարման մարմինների, դպրոցների և առողջության առաջնային պահպանման կենտրոնների հետ: |
| 13 | Ծրագրի արդյունավետության նկատմամբ վերահսկողության մեխանիզմների նկարագրությունը | Ծրագրի վերահսկողությունն իրականացվում է «Վորլդ Վիժն Ինթերնեյշնլ» միջազգային բարեգործական կազմակերպության Ազգային գրասենյակի, Թալինի տարածքային գրասենյակի, ինչպես նաև ֆինանսական օժանդակությունը տրամադրող Կանադայի գրասենյակի կողմից: «Վորլդ Վիժն Ինթերնեյշնլ» միջազգային բարեգործական կազմակերպության հայաստանյան մասնաճյուղն իր հերթին վերահսկվում է միջազգային աուդիտի և Հայաստանի Հանրապետության հարկային մարմինների կողմից: Ծրագրի ընթացքի և ավարտի մասին հաշվետվությունը կներկայացվի Հայաստանի Հանրապետության կառավարության Բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովին: |

«Վորլդ Վիժն Ինթերնեյշնլ» միջազգային բարեգործական կազմակերպության
հայաստանյան մասնաճյուղի Ծրագրային գործունեությունների ղեկավար

Շաղիկ Մարտիկյան

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ**
**ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

**18 մարտի 2016 թվականի N Մ - 154 - Ա**
**քաղ. Երևան**

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՄՇՏԱԿԱՆ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑՉՈՒԹՅԱՆ ՀԱՍՑԵՈՎ ՍՏԱՑՎԱԾ ԲԵՌԻ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2016 թվականի մարտի 11-ի N 07/80-2/9021-16, Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության 2016 թվականի մարտի 9-ի N ԱՄ/22.2/2325-16 և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի մարտի 10-ի N 06/3-3/8900-16 եզրակացությունները,* ***ո ր ո շ ու մ է.***

1. Բարեգործական որակել Գերմանիայի հայ բժշկական ասոցիացիայի կողմից "IDA foundation" կազմակերպության միջոցով Հայաստանի Հանրապետությունում Լեռնային Ղարաբաղի Հանրապետության մշտական ներկայացուցչության հասցեով ստացված դեղորայքի (2 տեղ, 6.50 կգ ընդհանուր քաշով, 117.65 եվրո արժեքով՝ ներառյալ փոխադրման և այլ ծախսերը) ներմուծման ծրագիրը: Բեռը ստանալուց հետո հանձնվելու է Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովին:

2. Սույն որոշումն ուղարկել Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարությւուն, Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարություն և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

ՆԱԽԱԳԱՀ Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ**
**ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

**Ո Ր Ո Շ Ո Ւ Մ**
**18 մարտի 2016 թվականի N Մ - 155 - Ա**

**քաղ. Երևան**

**«ՀԱՅԱՍՏԱՆ» ՀԱՄԱՀԱՅԿԱԿԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ՀԱՍՑԵՈՎ ՍՏԱՑՎԱԾ ԲԵՌԻ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ**

Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2016 թվականի փետրվարի 29-ի N 07/80-2/7419-16 և փետրվարի 29-ի N 06/3-3/7328-16 ու Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության 2016 թվականի փետրվարի 26-ի N ԱՄ/22.2/1959-16 եզրակացությունները, **ո ր ո շ ու մ է.**

1. Բարեգործական որակել «Հայաստան» համահայկական հիմնադրամի ԱՄՆ-ի մասնաճյուղի կողմից «Հայաստան» համահայկական հիմնադրամի հասցեով ուղարկված դեղորայքի (3 տեղ, 35 lbs ընդհանուր քաշով, 2,961.53 ԱՄՆ-ի դոլար արժողությամբ, փոխադրման ծախսերը կազմում են 163 ԱՄՆ-ի դոլար, «ՄՓ և ՍԱՓԱՄ» մաքսատուն) ներմուծման ծրագիրը:

Բեռն անհատույց հանձնվելու է հիմնադրամի կողմից հիմնովին վերանորոգված Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզի Նոյեմբերյան քաղաքի «Բժշկական կենտրոն» ՓԲԸ-ին:

2. «Հայաստան» համահայկական հիմնադրամին՝ նշված բեռը հանձնելուց հետո մեկամսյա ժամկետում՝ սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով ներկայացնել ամփոփ տեղեկատվություն:

3. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարություն, Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե և Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզպետին:

ՆԱԽԱԳԱՀ Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ**
**ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ**
**18 մարտի 2016 թվականի N Մ- 156 - Ա**
**քաղ. Երևան**

**«ԳՅՈՒՄՐՈՒ ՄՈՐ ԵՎ ՄԱՆԿԱՆ ԱՎՍՏՐԻԱԿԱՆ ՀԻՎԱՆԴԱՆՈՑ» ՓԲԸ-Ի ՀԱՍՑԵՈՎ ՍՏԱՑՎԱԾ ԲԵՌԻ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ**

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2016 թվականի մարտի -ի N 07/80-2/ -16 և մարտի -ի N 06/3-3/ -16, Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության 2016 թվականի մարտի -ի N ԱՄ/22.2/ -16 ու Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետի 2016 թվականի մարտի -ի N եզրակացությունները,* ***ո ր ո շ ու մ է.***

1. Բարեգործական որակել Ավստրիայից «Գյումրու Ավստրիական մանկական հիվանդանոցին օժանդակող միություն» հասարակական կազմակերպության կողմից «Matco Consalting» կազմակերպության միջոցով «Գյումրու մոր և մանկան ավստրիական հիվանդանոց» ՓԲԸ-ի հասցեով ուղարկված բժշկական սարքավորումների (230 կգ ընդհանուր քաշով, 25,000 եվրո արժողությամբ, փոխադրման ծախսերը կազմում են 2,415 եվրո, «Զվարթնոց» մաքսատուն) ներմուծման ծրագիրը:

2. «Գյումրու մոր և մանկան ավստրիական հիվանդանոց» ՓԲԸ-ին՝ բեռի ձևակերպումն ավարտելուց հետո մեկամսյա ժամկետում, սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով ներկայացնել ամփոփ տեղեկատվություն:

3. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարություն, Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե և Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետին:

ՆԱԽԱԳԱՀ Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

3/6.9

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

18 մարտի 2016 թվականի N Մ- 157 -Ա
քաղ. Երևան

**«ԳՈՒՐԳԵՆ ՄԵԼԻՔՅԱՆԻ ԲԱԶՄԱԶԱՎԱԿ ԸՆՏԱՆԻՔՆԵՐԻ ՀԻՄՆԱԴՐԱՄ»-Ի ՀԱՍՑԵՈՎ ՍՏԱՑՎԱԾ ԲԵՌԻ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ԵՎ ԲԱՇԽՄԱՆ ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ**

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2016 թվականի մարտի 11-ի N 07/80-2/9020-16 և մարտի 12-ի N 06/3-3/9218-16 ու Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության 2016 թվականի մարտի 10-ի N ՖԲ/ԱեՄ-2-1/1720-16 եզրակացությունները,* ***ո ր ո շ ու մ է.***

Բարեգործական որակել ԱՄՆ-ի Հայաստան-Արցախ հիմնադրամի կողմից «Գուրգեն Մելիքյանի բազմազավակ ընտանիքների հիմնադրամ»-ի հասցեով ստացված չոր ապուրի (20 տեղ, 15,712 կգ ընդհանուր քաշով, 114,780 ԱՄՆ-ի դոլար արժողությամբ, փոխադրման ծախսերը կազմում են 7,200 ԱՄՆ-ի դոլար, բեռի բաշխման ցանկը կցվում է, «Արարատյան» տարածաշրջանային մաքսատուն) ներմուծման և բաշխման ծրագիրը:

2. «Գուրգեն Մելիքյանի բազմազավակ ընտանիքների հիմնադրամ»-ին՝ նշված բեռի բաշխումն ավարտելուց հետո մեկամսյա ժամկետում՝ սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով ներկայացնել ամփոփ տեղեկատվություն:

3. Սույն որոշումն ուղարկել Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարություն, Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն, Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարություն, Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե ու Հայաստանի Հանրապետության մարզպետերին:

Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

«Գ. Մելիքյանի՝ Քաշաթաղի բազմազավակ ընտանիքների հիմնադրամի» անունով <<Հայաստան Արցախ » հիմնադրամի կողմից ուղարկված 20 տեղ, 15712 կգ բրուտտո քաշով, 114 780 ԱՄՆ դոլար արժողությամբ, ճանապարհածախսը՝ 7 200 ԱՄՆ դոլար բեռի ԲԱՇԽՄԱՆ Ց Ա Ն Կ Ը

| հ/հ | Ապրանքի անվանումը | Տեղ | Քաշ բրուտտո կգ | Արժեք $ | ԼՂՀ Քաշաթաղի շրջ.սոցապ վարչություն | ԼՂՀ «Արփեն» մայր և նորածին կենտրոն ԲԿ | ԼՂՀ Շահումյանի շրջ. վարչակազմ | ՀՀ աշխատանքի և սոց.հարցերի նախարարութ. | ՀՀ Արմավիրի մարզի Շենիկի գյուղապետարան 1070 բնակիչ | ՀՀ Արմավիրի մարզ Երվանդաշատի գյուղապետարան 900 բնակիչ | «Եզդիներ ազգային միություն» /զոհված ազատամարտիկ. Ընտանիքներ ին 40 ընտանիք |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| 1 | Համակցված սնունդ/չոր ապուր/ Vitameal | 20 տեղ | 15712 | 114 780 | 3457 բրուտտո կգ $25 251.6 | 7825 բրուտտո կգ $57 160.44 | 2199 բրուտտո կգ $16 069.2 | 1021 բրուտտո կգ $7460.7 | 550 բրուտտո կգ $4017.3 | 440 բրուտտո կգ $3213.84 | 220 բրուտտո կգ $1606.92 |

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

**18 մարտի 2016 թվականի N Մ-158-Ա**
**քաղ. Երևան**

## «ՖՈՔՍԸ ՕՆ ՉԻԼԴՐԵՆ ՆԱՈՒ, ԻՆԿ» ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՀԱՅԱՍՏԱՆՅԱՆ ՄԱՍՆԱՃՅՈՒՂԻ ՀԱՍՑԵՈՎ ՍՏԱՑՎԱԾ ԲԵՌԻ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ԵՎ ԲԱՇԽՄԱՆ ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2016 թվականի մարտի 11-ի N 07/80-2/9091 -15 և մարտի 12-ի N 06/3-3/9276-16 ու Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության 2016 թվականի մարտի 10-ի N ՖԲ/ԱնՄ-2-1/1721-16 եզրակացությունները* ***ո ր ո շ ու մ է.***

1. Բարեգործական որակել Միացյալ հայկական հիմնադրամի կողմից «Ֆոքըս օն չիլդրեն նաու, ինկ» բարեգործական կազմակերպության հայաստանյան մասնաճյուղի հասցեով ստացված խառը բեռի (706 տեղ, 12,044 կգ ընդհանուր քաշով, 200,832 ԱՄՆ-ի դոլար արժողությամբ, փոխադրման ծախսերը կազմում են 7,200 ԱՄՆ-ի դոլար, բաշխման ցանկը կցվում է, «Արարատյան» տարածաշրջանային մաքսատուն) ներմուծման ծրագիրը:

2. «Ֆոքըս օն չիլդրեն նաու, ինկ» բարեգործական կազմակերպության հայաստանյան մասնաճյուղին՝ բեռի բաշխումն ավարտելուց հետո մեկամսյա ժամկետում՝ սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով ներկայացնել ամփոփ տեղեկատվություն հանձնելու վերաբերյալ:

3. Սույն որոշումն ուղարկել Լեռնային Ղարաբաղի Հանրապետություն, Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն, Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարություն, Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե, Երևանի քաղաքապետին, Հայաստանի Հանրապետության Արագածոտնի, Գեղարքունիքի, Լոռու, Շիրակի, Կոտայքի և Սյունիքի մարզպետներին:

ՆԱԽԱԳԱՀ Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

˚ Ֆոքըս օն չիլդրեն նաու,ինկ.˚ԲԿ Հայաստանյան մասնաճյուղի անունով
˚˚ Հայկական միացյալ հիմնադրամի ˚˚ կողմից ուղարկված 706 տեղ 12044 կգ բրուտտո քաշով և 200832 ԱՄՆ դոլար արժողությամբ (ճանապարհածախսը 7200 ԱՄՆ դոլար) բեռի բաշխման

ՑԱՆԿ

| # | ապրանքի անվանում | տեղ | հատ | արժեք $ | քաշ բրուտտո կգ |
|---|---|---|---|---|---|
| 1 | անկողնու պարագա օգտ. | 51 | 2206 | 9257 | 782 |
| 2 | հագուստ օգտ. | 416 | | 135669 | 8446 |
| 3 | հագուստ կանացի բանբակյա համազգեստ նոր | 5 | 1163 | 3900 | 6 |
| 4 | գրքեր մանկական անգլերենի ուսուցման նոր. | 80 | 3912 | 12020 | 868 |
| 5 | գրքեր մանկական էնցիկլոպեդիա օգտ.. | 26 | 991 | 4749 | 458 |
| 6 | պայուսակ օգտ. | 13 | 647 | 2931 | 196 |
| 7 | կանացի տրիկոտաժե շապիկներ նոր | 21 | 2031 | 12800 | 154 |
| 8 | զուլպա նոր.(զույգ) | 13 | 4338 | 4389 | 190 |
| 9 | կտորեղեն(լոսկուտներ) նոր | 4 | 304 | 911 | 78 |
| 10 | կանացի տաբատ նոր | 9 | 371 | 1855 | 210 |
| 11 | կոշիկ կանացի նոր(զույգ)(արհ.կաշվից) | 1 | 20 | 360 | 4 |
| 12 | դահուկների կոմպլեկտ օգտ | 2 | 2 | 300 | 12 |
| 13 | խաղալիք նոր | 3 | 100 | 555 | 24 |
| 14 | ակնոցի տուփ նոր | 1 | 201 | 200 | 14 |
| 15 | բարձեր սինտետիկ նոր | 17 | 340 | 2720 | 185 |
| 16 | սանրեր պլաստիկ նոր | 3 | 4728 | 1030 | 50 |
| 17 | վարսակալ մանկական | 1 | 840 | 210 | 14 |
| 18 | տղամարդու շապիկներ նոր | 1 | 95 | 760 | 26 |
| 19 | տակդիր | 8 | 1866 | 2051 | 100 |
| 20 | ֆուտբոլի գնդակներ նոր | 22 | 279 | 3190 | 139 |
| 21 | հաշվանդամի քայլակ | 1 | 2 | 45 | 4 |
| 22 | հաշվանդամի զուգարանակոնք | 3 | 3 | 90 | 15 |
| 23 | հաշվանդամի հենակ | 2 | 6 | 240 | 10 |
| 24 | հաշվանդամի սայլ[illegible] | 3 | 3 | 600 | 59 |
| | | 706 | | 200,832 | 12,044.0 |

"Ֆորքս օն չիլդրեն նաու,ինկ." ԲԿ կողմից հատկացվող ապրանքներ կազմակերպություններին

ք.Գավառ,"Բարի Հույս "հաշմանդամ երեխաներին աջակցող ՀԿ

| ապրանքի անվանում | արժեք $ | քանակ |
|---|---|---|
| հագուստ օգտ | 3,240 | 11 արկղ |
| գրքեր մանկական էնցիկլոպեդիա օգտ.. | 445 | 3 արկղ |

ք.Չարենցավան "Ռեսուրս կենտրոն" ԲՀԿ

| ապրանքի անվանում | արժեք $ | քանակ |
|---|---|---|
| հագուստ օգտ | 2,211 | 9 արկղ |
| կտորներ(լոսկուտներ) | 257 | 86 հատ |
| հաշմանդամի քայլակ | 120 | 3 հատ |

Երիտասարդների և կանանց կենտրոն ք.Սպիտակ

| ապրանքի անվանում | արժեք $ | քանակ |
|---|---|---|
| սանրեր պլաստիկ նոր | 340 | 1728 հատ |
| հագուստ օգտ. | 4,136 | 20 արկղ |
| բարձեր սինտետիկ նոր | 320 | 40 հատ |
| պայուսակ օգտ, | 380 | 65 հատ |
| կանացի տրիկոտաժե շապիկներ նոր | 2100 | 310 հատ |

Ք.Գորիս 'Գործըկերություն և ուսուցում"ՀԿ

| ապրանքի անվանում | արժեք $ | քանակ |
|---|---|---|
| բարձեր սինտետիկ նոր | 320 | 40 հատ |
| կանացի տրիկոտաժե շապիկներ նոր | 900 | 150 հատ |
| գրքեր մանկական էնցիկլոպեդիա օգտ.. | 200 | 85 հատ |
| հագուստ օգտ. | 3,199 | 14 արկղ |
| անկողնու պարագա օգտ. | 456 | 3 արկղ |

Հայ առաքելական եկեղեցու Շիրակի թեմի Սոցիալ-Կրթական կենտրոն ք.Գյումրի

| ապրանքի անվանում | արժեք $ | քանակ |
|---|---|---|
| անկողնու պարագա օգտ. | 785 | 4 արկղ |
| կտորներ(լոսկուտներ) | 654 | 218 հատ |
| հագուստ օգտ. | 10,152 | 40 արկղ |
| պայուսակ օգտ, | 582 | 179 հատ |
| կանացի տաբատ նոր | 220 | 44 հատ |
| բարձեր սինտետիկ նոր | 780 | 110 հատ |
| կանացի տրիկոտաժե շապիկներ նոր | 1,500 | 250 հատ |
| գրքեր մանկական էնցիկլոպեդիա օգտ.. | 304 | 86 հատ |

ք.Երևան "Փրկություն" հաշմանդամ երեխաների և երիտասարդների կենտրոն ԲՀԿ

| ապրանքի անվանում | արժեք $ | քանակ |
|---|---|---|
| հագուստ օգտ. | 2,145 | 10 արկղ |
| կանացի տրիկոտաժե շապիկներ նոր | 420 | 60 հատ |

Խարբերդի հատուկ դպրոց ՊՈԱԿ

| ապրանքի անվանում | արժեք $ | քանակ |
|---|---|---|
| հաշմանդամի զուգարանակոնք | 90 | 3 հատ |
| կանացի տրիկոտաժե շապիկներ նոր | 1,050 | 175 հատ |
| հաշմանդամի սայլակ | 400 | 2 հատ |
| հաշմանդամի քայլակ | 45 | 2 հատ |
| տակդիր մեծահասակների | 1,843 | 1658 հատ |

Գ.Մելիքյանի Քաշաթաղի բազմազավակ ընտանիքների հիմնադրամ

| ապրանքի անվանում | արժեք $ | քանակ |
|---|---|---|
| հագուստ օգտ. | 64,747 | 194 արկղ |
| պայուսակ օգտ. | 768 | 186 հատ |

"Ֆորքս օն չիլդրեն նաու,ինկ." ԲԿ Հայաստանյան մասնաճյուղ

| ապրանքի անվանում | արժեք $ | քանակ |
|---|---|---|
| անկողնու պարագա օգտ. - | 7,086 | 39 արկղ |
| զուլպա նոր.(զույգ) | 2,906 | 2418 հատ |
| դահուկների կոմպլեկտ օգտ | 300 | 2 հատ |
| սանրեր պլաստիկ | 350 | 1272 հատ |
| խաղալիք նոր | 555 | 100 հատ |
| կոշիկներ նոր(զույգ) | 360 | 20 զույգ |
| կանացի տրիկոտաժե շապիկներ նոր | 4,680 | 781 հատ |
| գրքեր մանկական անգլերենի ուսուցման նոր. | 1,200 | 303 հատ |
| բարձեր սինտետիկ նոր | 800 | 100 հատ |
| հագուստ օգտ | 38,867 | 97 արկղ |
| հագուստ կանացի բանբակյա համազգեստ նոր | 3,900 | 5 արկղ |
| կանացի տաբատ նոր | 1,635 | 327 հատ |
| տղամարդու շապիկներ նոր | 760 | 95 հատ |
| պայուսակ օգտ. | 791 | 131 հատ |
| հաշմանդամի սայլակ | 200 | 1 հատ |
| վարսակալներ մանկական | 210 | 840 հատ |
| ակնոցի տուփ նոր | 200 | 201 հատ |
| տակդիր | 208 | 208 հատ |

Երեխաների աջակցության հիմնադրամ ՀԿ ք.Հրազդան

| ապրանքի անվանում | արժեք $ | քանակ |
|---|---|---|
| անկողնու պարագա օգտ. | 380 | 2 արկղ |
| գրքեր մանկական էնցիկլոպեդիա օգտ. | 500 | 204 հատ |
| հագուստ օգտ. | 3,954 | 13 արկղ |
| հաշմանդամի հենակ | 120 | 3 հատ |
| պայուսակ օգտ. | 110 | 36 հատ |

″Տիրամայր Հայաստանի կուսաստան″ ք.Գյումրի

| ապրանքի անվանում | արժեք $ | քանակ |
|---|---|---|
| սանրեր պլաստիկ նոր | 340 | 1728 հատ |
| բարձեր սինտետիկ նոր | 800 | 100 հատ |
| կանացի տրիկոտաժե շապիկներ նոր | 1,250 | 155 հատ |
| գուլպա նոր.(զույգ) | 1,483 | 1920 հատ |
| հագուստ օգտ. | 1,455 | 5արկղ |
| գրքեր մանկական էնցիկլոպեդիա օգտ.. | 2,100 | 269 հատ |

″Լիարժեք Կյանք″ ԲՀԿ ք.Ստեփանավան

| ապրանքի անվանում | արժեք $ | քանակ |
|---|---|---|
| հագուստ օգտ | 1,503 | 8 արկղ |
| անկողնու պարագա օգտ. | 610 | 3 արկղ |
| կանացի տրիկոտաժե շապիկներ նոր | 900 | 150 հատ |

Տրիբունա ՀԿ ք.Գյումրի

| ապրանքի անվանում | արժեք $ | քանակ |
|---|---|---|
| ֆուտբոլի գնդակներ նոր | 3,190 | 279 հատ |

"Սյունիք-Զարգացում" համայնքային ՀԿ ք.Եղեգնաձոր

| ապրանքի անվանում | արժեք $ | քանակ |
|---|---|---|
| գրքեր մանկական [illegible] նոր. | 12,020 | 3912 |

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

**18 մարտի 2016 թվականի N Մ- 159 -Ա**

**քաղ. Երևան**

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2015 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 14-Ի N Մ-1354-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ ԲԵՌԻ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ՄԱՍԻՆ («ՏԻՐԱՄԱՅՐ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԿՈՒՍԱՍՏԱՆ» ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ)

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2016 թվականի մարտի 4-ի N 07/80-2/8468-16 և մարտի 11-ի N 06/3-3/9076-16, Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության 2016 թվականի մարտի 4-ի N ՖԲ/ԱնՄ-2-1/1632-16 ու Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետի մարտի 3-ի N 01/1048-16 եզրակացությունները,* ***ո ր ո շ ու մ է.***

1. Սահմանել, որ ԱՄՆ-ի «Ծնողազուրկ հայ երեխաների օգնության միություն» (SOAR) հիմնադրամի կողմից «Տիրամայր Հայաստանի կուսաստան» բարեգործական կազմակերպության հասցեով ուղարկված բեռը (7,484.27 կգ ընդհանուր քաշով, 170,000 ԱՄՆ-ի դոլար արժեքով, փոխադրման ծախսերը կազմում են 4,600 ԱՄՆ-ի դոլար, բեռի և բաշխման ցանկերը կցվում են, Շիրակի տարածաշրջանային մաքսատուն) ներմուծվում է Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2015 թվականի դեկտեմբերի 14-ի «Տիրամայր Հայաստանի կուսաստան» բարեգործական կազմակերպության կողմից իրականացվող «Անհոգ մանկություն, ապահով ծերություն» ծրագրի մասին» N Մ-1354-Ա որոշմամբ հաստատված ծրագրի շրջանակներում:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն, Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե ու Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետին:

Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

# ՍԱՄՆԱՑՈՒՑԱԿ
# FSCU 673505-4

3/6.18

| Հ/Հ | Ապրանքի տեսակ | Տեղերի քանակ | Քանակ (ընդամենը) | Քաշը (կգ) | | Արժեքը |
|---|---|---|---|---|---|---|
| | | | | բրուտտո | նետտո | $ |
| 1 | հեռուստացույցի տակդիր | 12 | 12 | | | 12 000 |
| 2 | փափուկ աթոռ | 32 | 32 | | | 32 000 |
| 3 | աթոռ՝ առանց թիկնակի | 12 | 12 | | | 8 000 |
| 4 | ննջարանի պահարանիկ | 20 | 20 | | | 20 000 |
| 5 | բացովի բազմոց | 19 | 19 | | | 38 000 |
| 6 | գրասեղանի աթոռ | 14 | 14 | | | 14 000 |
| 7 | տրիմո | 19 | 19 | | | 38 000 |
| 8 | միկրոալիքային վառարանի և սառնարանի պահարաններ | 12 | 12 | | | 8 000 |
| ընդամենը | | | | 7 484.27 | 7 484.27 | 170 000 |

Այս բեռի ընդհանուր քաշն է 7 484.27 (յոթ հազար, չորս հարյուր ութսունաուչորս ամբողջ, քսանյոթ հարյուրերրորդական) կգ, իսկ արժեքը $170 000,00 (մեկ հարյուր յոթանասուն հազար դոլար), ճանապարհածախսը կազմում է $4 600,00 (չորս հազար, վեց հարյուր դոլար), որը վճարվել է ՍՕԱՌ (Սըսայըթի ֆոր Օրֆանս Արմենիա Ռիլիֆ) կազմակերպության կողմից:

## ԱՆԱՐԱՏ ՀՂՈՒԹՅԱՆ ՀԱՅ ՔՈՒՅՐԵՐԻ ՄԻԱԲԱՆՈՒԹՅԱՆ ՏԻՐԱՄԱՅՐ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԿՈՒՍԱՍՏԱՆԻ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՍՏԱՑՎԵԼԻՔ ԲԵՌԻ ԲԱՇԽՄԱՆ ՑՈՒՑԱԿ

Container FSCU 673505-4 3/6.13

| Հ/Հ | Ստացող կազմա-կերպություն | Քանակ (արկղ, կգ, հատ, զույգ) | Արկղի պարունակություն | Ապրանքի անվանում | Միավորի արժեք $ | Ընդհանուր արժեք $ |
|---|---|---|---|---|---|---|
| 1. | Տիրամայր Հայաստանի կենտրոն (մոտ 50 շահառու) | 60 հատ | 9 հատ | հեռուստացույցի տակդիր | 1 000 | 9 000 |
| | | | 10հատ | փափուկ աթոռ | 1 000 | 10 000 |
| | | | 10 հատ | աթոռ՝ առանց թիկնակի | 666.67 | 6666.7 |
| | | | 5 հատ | ննջարանի պահարանիկ | 1 000 | 5 000 |
| | | | 8 հատ | բացովի բազմոց | 2 000 | 16 000 |
| | | | 5 հատ | գրասեղանի աթոռ | 1 000 | 5 000 |
| | | | 5 հատ | տրիմո | 2 000 | 10 000 |
| | | | 8 հատ | սառնարանի և միկրոալիքային վառարանի պահարան | 666.67 | 5 333.36 |
| 2. | Անի Բեզիկյան երիտասարդական կենտրոն (մոտ 40 շահառու) | 48 | 15 հատ | փափուկ աթոռ | 1 000 | 15 000 |
| | | | 10 հատ | ննջարանի պահարանիկ | 1 000 | 10 000 |
| | | | 8 հատ | բացովի բազմոց | 2 000 | 16 000 |
| | | | 5 հատ | գրասեղանի աթոռ | 1 000 | 5 000 |
| | | | 10 հատ | տրիմո | 2 000 | 20 000 |
| 3. | Գյումրու Երեխաների սոցիալական զարգացման կենտրոն (մոտ 100 շահառու) | 32 | 3 հատ | հեռուստացույցի տակդիր | 1 000 | 3 000 |
| | | | 7 հատ | փափուկ աթոռ | 1 000 | 7 000 |
| | | | 2 հատ | աթոռ՝ առանց թիկնակի | 666.67 | 1 333.3 |
| | | | 5 հատ | ննջարանի պահարանիկ | 1 000 | 5 000 |
| | | | 3 հատ | բացովի բազմոց | 2 000 | 6 000 |
| | | | 4 հատ | գրասեղանի աթոռ | 1 000 | 4 000 |
| | | | 4 հատ | տրիմո | 2 000 | 8 000 |
| | | | 4 հատ | սառնարանի և միկրոալիքային վառարանի պահարան | 666.67 | 2 666.68 |
| ընդամենը | | 140 | --- | --- | --- | 170 000 |

Այս բեռի ընդհանուր քաշն է 7 484,27 (յոթ հազար, չորս հարյուր ութանասունչորս ամբողջ [illegible] հարյուրերրորդական) կգ, արժեքը՝ $170 000,00 (մեկ հարյուր յոթանասուն հազար [illegible]) ճանապարհածախսը կազմում է $4 600,00 (չորս հազար, վեց հարյուր դոլար), որը վճարվել է ՍՕԱՌ (Սըսայըթի ֆոր Օրֆանդ Արմենիան ռիլիֆ) կազմակերպության կողմից:

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ**
**ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

# Ո Ր Ո Շ Ու Մ

**18 մարտի 2016 թվականի N Մ- 160 - Ա**
**քաղ. Երևան**

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2012 ԹՎԱԿԱՆԻ ՆՈՅԵՄԲԵՐԻ 30-Ի N Մ-947-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ ԲԵՌԻ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ՄԱՍԻՆ («ԱԳԱՊԵ» ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈԹՅԱՆ ՀԱՅԱՍՏԱՆՅԱՆ ՄԱՍՆԱՃՅՈՒՂ)

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2016 թվականի մարտի 4-ի N 07/80-2/8459-16, Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության 2016 թվականի մարտի 4-ի N ԱՄ/22.2/2219-16 ու Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության 2016 թվականի մարտի 4-ի N ՖԲ/ԱնՄ-2-1/1631-16 ու Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2016 թվականի մարտի 10-ի N 06/3-3/8799-16 եզրակացությունները,* ***ո ր ո շ ու մ է.***

1. Սահմանել, որ ԱՄՆ-ի Հյուսիսային Կարոլինա նահանգի մեթոդիստական եկեղեցու կողմից «Արմենիա-Արցախ» հիմնադրամի միջոցով «Ագապե» բարեգործական կազմակերպության հայաստանյան մասնաճյուղի հասցեով ստացված բեռը (312 տեղ, 12,734 կգ ընդհանուր քաշով, 340,402.91 ԱՄՆ-ի դոլար արժողությամբ, բեռնափոխադրման ծախսերը կազմում են 13,600 ԱՄՆ-ի դոլար, բեռի և բաշխման ցանկերը կցվում են, «Արարատյան» տարածաշրջանային մաքսատուն) ներմուծվում է Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2012 թվականի նոյեմբերի 30-ի «Ագապե» բարեգործական կազմակերպության հայաստանյան մասնաճյուղի կողմից իրականացվող «Մարդկային տառապանքը որպես պատերազմի և բնական աղետի հետևանք» ծրագրի մասին» N Մ-947-Ա (2013 թվականի հուլիսի 19-ի N Մ-588-Ա, 2014 թվականի դեկտեմբերի 12-ի N Մ-1264-Ա և 2015 թվականի հուլիսի 24-ի N Մ-823-Ա որոշումների խմբագրությամբ) որոշմամբ հաստատված ծրագրի շրջանակներում:

2. Սույն որոշումն ուղարկել Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարություն, Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն, Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարություն ու Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

ՆԱԽԱԳԱՀ Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

## ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԱՊՐԱՆՔՆԵՐԻ ԲԱՇԽՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

ԱՄՆ «ԱԳԱՊԵ» կրոնաբարեգործական կազմակերպության ՀՀ մասնաճյուղի հասցեով
2016 թ. փետրվար ամսին ուղարկված մարդասիրական բեռան բաշխման ցուցակ

| Վայրը | Ապրանքի անվանումը | Տեղ | Բաշխվող քանակը / կգ | Արժեքը ԱՄՆԴ |
|---|---|---|---|---|
| ԼՂՀ Քաշաթաղի շրջանի Բերձոր քաղաքի և գյուղերի՝ «ԱԳԱՊԵ»-ում գրանցված սոցիալապես անապահով մոտ 1000 ընտանիքներ, Ամանորյա տուփերը նախատեսված են շրջանի բոլոր երեխաների համար | Անկողնային պարագաներ | 23 | 147 | 2,202.90 |
| | Հագուստ և աքսեսուարներ | 176 | 7922 | 289546.01 |
| | Նոր կոշիկներ | 5 | 28 | 576.00 |
| | Կենցաղային պարագաներ (վարագույրներ, հագուստի կախիչներ, սրբիչներ, գորգիկներ, կտորե անձեռոցիկներ, սեղանի ծածկոցներ, մոմեր, բռնիչներ) | 13 | 79 | 571.2 |
| | Հիգիենայի պարագաներ (492 ատամի խոզանակներ) | 2 | 13 | 164.00 |
| | Մանկական շշեր, տակաշորեր, ամրակներ, դոշլիկներ | 1 | 5 | 76.00 |
| | Խոհանոցային սպասքեղեն (թեյի բաժակներ) | 1 | 12 | 40.60 |
| | Խոհանոցային սպասքեղեն (ափսեներ, պլաստիկ տարաներ) | 3 | 23 | 157.60 |
| | Ակնոցներ | 1 | 2 | 75.00 |
| | Դպրոցական պարագաներ (մատիտներ, մարկերներ, սոսինձ, մկրատներ, ռետիններ) | 13 | 155 | 1224.4 |
| | Ասեղնագործության պարագաներ (կտորներ) | 16 | 253 | 3,021.20 |
| | Ամանորյա տուփեր/դատարկ տարաներ | 6 | 900 | 7,000.00 |
| | Մանկական խաղալիք (քափահարելիս չխչխկացող) | 1 | 144 | 2,000.00 |
| | Նոր գուլպաներ | 3 | 420 | 3,500.00 |
| | Սանրեր, մազի խոզանակներ | 3 | 200 | 2,500.00 |
| | Մանկական բաժակներ, գդալներ, կճիճներ, ծծակներ | 2 | 90 | 1,500.00 |
| | Փափուկ խաղալիքներ | 2 | 110 | 1,000.00 |
| | Ներկելու գրքեր, մանկական նկարազարդ գրքեր, նկարներ | 2 | 210 | 2,000.00 |
| | Նոր մանկական ծածկոցներ | 2 | 100 | 2,000.00 |
| | Նոր տակաշորեր, ամրակներ, դոշլիկներ, փաթթաշորեր | 2 | 100 | 1,200.00 |
| | Հիգիենայի պարագաներ (ատամի մածուկ, ատամի խոզանակ/տուփեր, ականջ մաքրելիք, օճառ քսիչ, անձեռոցիկ, կպչուն թաղանք, եղունգ կտրելիք, խարտոց, հոգնայի տանձիկ, խնամքի քսուք, սրբիչ, ատամի թել, հեղուկ օճառ, օճառ) | 1 | 100 | 1,000.00 |
| | Մազակալներ, մանկական զարդեր և ժամացույցներ, բանալու կախիչ | 1 | 30 | 1,000.00 |
| | Մանկական նոր շորեր, նոր ներքնաշորեր, նոր հողաթափեր | 2 | 200 | 2,000.00 |
| | Նոր ձեռնոցներ, շարֆեր | 3 | 150 | 3,000.00 |
| | Նոր գլխարկներ | 3 | 150 | 3,000.00 |
| | Յուղամատիտներ | 2 | 100 | 1,200.00 |
| | Նոթատետրեր, տետրեր, ստիկերներ, էջանշաններ, օրացույցներ, գունավոր թուղթ | 4 | 250 | 1,300.00 |
| | Մարկերներ, ձեռքի փոքր գրատախտակ | 1 | 50 | 700.00 |
| | Փոքր գնդակներ, [illegible]չիկներ | 1 | 50 | 600.00 |
| | [illegible] | 2 | 190 | 2,300.00 |
| | [illegible] մատիտ, գրիչներ, գրչատուփեր, ջրաներկ | 2 | 150 | 1,500.00 |
| | Մատիտի սրիչ, ռետին, մկրատ, քանոն, ռեզինե օղակապ, սոսինձ | 2 | 40 | 600.00 |
| | Նկարի շրջանակ, նկարի ալբոմ, զարդանախշ, հայելի | 1 | 190 | 700.00 |
| | Հաշվիչ | 1 | 25 | 300.00 |
| | Կտորից գրքի պայուսակներ, քսակներ | 1 | 20 | 100.00 |
| Բերձորի ԱԳԱՊԵ կենտրոն | Կենցաղային պարագա - պլաստիկ թերմոս | 1 | 3 | 29.00 |
| | Փայտամշակման գործիքներ (մետր, բրեզենտ, աքցան, երկարացման լար) | 1 | 13 | 115.00 |
| | Սանդուղք | 1 | 14 | 135.00 |
| | HP 1350 տպիչ և թանաքի քարթրիջներ | 1 | 6 | 105.00 |
| | Գրասենյակային պարագաներ (թուղթ) | 3 | 72 | 276.00 |
| | Գրասենյակային պարագաներ (թուղթ, թղթապանակներ) | 1 | 18 | 88.00 |

ԱՄՆ «ԱԳԱՊԵ» ԿՐՈՆԱԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ
ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՀՀ ՄԱՍՆԱՃՅՈՒՂԻ
ՏՆՕՐԵՆ՝ Ն. ՄԵԼՔՈՆՅԱՆ

ԳՈՒՅՔԱՑՈՒՑԱԿ - AF-016G-4184
Բեռնագիր - NAM2335159
2 x 40' կոնտեյներներ - GESU 669833-6 և TRLU 725964-0
Կապարակնիք - A1874326 և A1874529
Բեռնված 2016 թ. փետրվարի 9-ին
Միացյալ Մեթոդիստական եկեղեցու
Հյուսիսային Կարոլինայի համաժողովի (թեմի) կողմից
Վոթրֆիլդ Ռիջ Փլեյս 700, Գարներ, 27529, Հյուսիսային Կարոլինա, ԱՄՆ

Պարունակությունը՝ նվիրաբերված մարդասիրական օգնություն, իրեր ոչ վաճառքի համար

Առաքիչ՝ Հայաստան Արցախ Հիմնադրամ
Ն. Խաղաղության պողոտա 1101, Սուիթ 204
ԱՄՆ, ԿԱ, Գլենդել, 91202

Առաքման վայր՝ ԱՄՆ «ԱԳԱՊԵ» ԿԲԿ ՀՀ մասնաճյուղ
Վիկտոր Համբարձումյանի 18 փ., բն. 11
Հայաստանի Հանրապետություն, Երևան, 0033,
Նարա Մելքոնյան, հեռախոս՝ +37493-408-974, +37410-225-229

| ԱՆՎԱՆՈՒՄԸ | ՏԵՂ | Քաշը (կգ) | ԱՐԺԵՔ |
|---|---|---|---|
| Անկողնային պարագաներ | 23 | 147 | 2,202.90 |
| Հագուստ և աքսեսուարներ | 176 | 7922 | 289546.01 |
| Նոր կոշիկներ | 5 | 28 | 576.00 |
| Կենցաղային պարագա - պլաստիկ թերմոս | 1 | 3 | 29.00 |
| Կենցաղային պարագաներ (վարագույրներ, հագուստի կախիչներ, սրբիչներ, գորգիկներ, կտորե անձեռոցիկներ, սեղանի ծածկոցներ, մոմեր, բռնիչներ) | 13 | 79 | 571.2 |
| Փայտամշակման գործիքներ (մետր, բրեզենտ, աքցան, երկարացման լար) | 1 | 13 | 115.00 |
| Սանդուղք | 1 | 14 | 135.00 |
| HP 1350 տպիչ և թանաքի քարթրիջներ | 1 | 6 | 105.00 |
| Հիգիենայի պարագաներ (492 ատամի խոզանակներ) | 2 | 13 | 164.00 |
| Մանկական շշեր, տակաշորեր, ամրակներ, դոշլիկներ | 1 | 5 | 76.00 |
| Խոհանոցային սպասքեղեն (թեյի բաժակներ) | 1 | 12 | 40.60 |
| Խոհանոցային սպասքեղեն (ափսեներ, պլաստիկ տարաներ) | 3 | 23 | 157.60 |
| Ակնոցներ | 1 | 2 | 75.00 |
| Գրասենյակային պարագաներ (թուղթ) | 3 | 72 | 276.00 |
| Գրասենյակային պարագաներ (թուղթ, թղթապանակներ) | 1 | 18 | 88.00 |
| Դպրոցական պարագաներ (մատիտներ, մարկերներ, սոսինձ, մկրատներ, ռետիններ) | 13 | 155 | 1224.4 |
| Ասեղնագործության պարագաներ (կտորներ) | 16 | 253 | 3,021.20 |
| Ամանորյա տուփեր/դատարկ տարաներ | 6 | 900 | 7,000.00 |
| Մանկական խաղալիք (թափահարելիս չխչխկացող) | 1 | 144 | 2,000.00 |
| Նոր գուլպաներ | 3 | 420 | 3,500.00 |
| Ժաներեր, մազի խոզանակներ | 3 | 200 | 2,500.00 |
| Մանկական բաժակներ, գդալներ, [illegible] | 2 | 90 | 1,500.00 |
| Փափուկ խաղալիքներ | 2 | 110 | 1,000.00 |
| Ներկելու գրքեր, մանկական [illegible] գրքեր, [illegible] | 2 | 210 | 2,000.00 |
| Նոր մանկական ծածկոցներ | 2 | 100 | 2,000.00 |
| Նոր տակաշորեր, ամրակներ, [illegible] | 2 | 100 | 1,200.00 |
| Հիգիենայի պարագաներ (ատամի մածուկ, ատամի խոզանակ/տուփեր, ականջ մաքրելիք, օճառ քսիչ, անձեռոցիկ, կպչուն թաղանթ, եղունգ կտրելիք, խարտոց, հոգնայի տանձիկ, խնամքի քսուք, սրբիչ, ատամի թել, հեղուկ օճառ, օճառ) | 1 | 100 | 1,000.00 |
| Մազակալներ, մանկական զարդեր և ժամացույցներ, բանալու կախիչ | 1 | 30 | 1,000.00 |
| Մանկական նոր շորեր, նոր ներքնաշորեր, նոր հողաթափեր | 2 | 200 | 2,000.00 |
| Նոր ձեռնոցներ, շարֆեր | 3 | 150 | 3,000.00 |
| Նոր գլխարկներ | 3 | 150 | 3,000.00 |
| Յուղամատիտներ | 2 | 100 | 1,200.00 |
| Նոթատետրեր, տետրեր, ստիկերներ, էջանշաններ, օրացույցներ, գունավոր թուղթ | 4 | 250 | 1,300.00 |
| Մարկերներ, ձեռքի փոքր գրատախտակ | 1 | 50 | 700.00 |
| Փոքր գնդակներ, փուչիկներ | 1 | 50 | 600.00 |
| Կոշտ խաղալիքներ | 2 | 190 | 2,300.00 |
| Մատիտ, գունավոր մատիտ, գրիչներ, գրչատուփեր, ջրաներկ | 2 | 150 | 1,500.00 |
| Մատիտի սրիչ, ռետին, մկրատ, քանոն, ռեզինե օղակապ, սոսինձ | 2 | 40 | 600.00 |
| Նկարի շրջանակ, նկարի ալբոմ, զարդանախշ, հայելի | 1 | 190 | 700.00 |
| Հաշվիչ | 1 | 25 | 300.00 |
| Կտորից գրքի պայուսակներ, քսակներ | 1 | 20 | 100.00 |
| | | | |
| ԸՆԴԱՄԵՆԸ | 312 | 12,734.0 | 340,402.91 |

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

**Ո Ր Ո Շ Ո Ւ Մ**

**18 մարտի 2016 թվականի N Մ - 161 - Ա**

**քաղ. Երևան**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱ-ԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ 2014 ԹՎԱԿԱՆԻ ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 3-Ի N Մ-968-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ ԲԵՌԻ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ՄԱՍԻՆ («ՄԵԾՆ ՆԵՐՍԵՍ» ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ)**

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2016 թվականի մարտի 14-ի N 07/80-2/9355-16, Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության 2016 թվականի մարտի 12-ի N ՖԲ/ԱնՄ-2-1/1800-16 ու Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2016 թվականի մարտի 14-ի N 06/3-3/9376-16 եզրակացությունները,* ***ո ր ո շ ու մ է.***

1. Սահմանել, որ ԱՄՆ-ի Հայաստան-Արցախ հիմնադրամի կողմից «Մեծն Ներսես» բարեգործական հասարակական կազմակերպության հասցեով ուղարկված չոր ապուրը (15,403 կգ ընդհանուր քաշով, 114,780 ԱՄՆ-ի դոլար արժողությամբ, բեռնափոխադրման ծախսերը կազմում են 7,200 ԱՄՆ-ի դոլար, «Արարատյան» տարածաշրջանային մաքսատուն, բեռի բաշխման նախնական ցանկը կցվում է) ներմուծվում է Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2014 թվականի հոկտեմբերի 3-ի «Մեծն Ներսես» բարեգործական հասարակական կազմակերպության կողմից 2015-2018 թվականներին իրականացվող ծրագրի մասին» N Մ-968-Ա որոշմամբ հաստատված ծրագրի շրջանակներում:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն, Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե և Հայաստանի Հանրապետության Արագածոտնի, Արարատի, Կոտայքի և Վայոց ձորի մարզպետարաններ:

ՆԱԽԱԳԱՀ Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

*ԱՄՆ-ի Հայաստան Արցախ Հիմնադրամից առաջիկայում ստացվելիք մեկ բեռնարկղ CMAU 490571-1, 1000 արկղ, 15403կգ. ընդհանուր կշռով, 14310կգ. մաքուր կշռով, 114780 ԱՄՆ դոլար արժողությամբ, 7200 դոլար փոխադրավարձով մարդասիրական օգնության՝ բրնձի և ոսպի խառնուրդից պատրաստված սննդատեսակի բաշխման նախնական ցանկ:*

3/6, 20

| | | Արկղ | Կգ. |
|---|---|---|---|
| 1. | «Մեծն Ներսես» ԲՀԿ շահառուներ | 91 | 1302,21 |
| 2. | «Հալեպ» Հայրենակցական ԲՀԿ | 489 | 6997,59 |
| 3. | Կենտրոն վարչական շրջանի սոց. բաժին | 70 | 1001,70 |
| 4. | «Լույսի Աստղ» հաշմանդամ երեխաների ծնողների ՀԿ | 20 | 286,20 |
| 5. | ՀՀ Ռուսաց լեզվի և գրականության մանկավարժ. վետ. միություն | 20 | 286,20 |
| 6. | Հանս Քրիստյան Կուֆոյեղ բ/հ | 58 | 829,98 |
| 7. | ՀՀԵԿՄ Թալին տարածքային բաժանմունք | 20 | 286,20 |
| 8. | ՀՀԵԿՄ Վայոց Ձորի տարածքային բաժանմունք | 32 | 457,92 |
| 9. | Արարատի մարզ Դիտակ գյուղ | 20 | 286,20 |
| 10. | Արագածոտնի մարզ գյուղ Ղազարավան | 34 | 486,54 |
| 11. | Արագածոտնի մարզ գյուղ Կարբիի միջն դպրոց | 52 | 744,12 |
| 12. | Արագածոտնի մարզ գյուղ Աշնակ | 20 | 286,20 |
| 13. | Կոտայքի մարզ Ջառ գյուղ | 20 | 286,20 |
| 14. | Կոտայքի մարզ Հրազդանի երեխաների աջակցության կենտրոն | 20 | 286,20 |
| 15. | Վայոց Ձորի Թեմի Առաջնորդարան | 34 | 486,54 |
| | ԸՆԴԱՄԵՆԸ | 1000 | 14310կգ |

04.03.2016թ.

«Մեծն Ներսես» ԲՀԿ գործադիր տնօրեն Ս. Հարությունյան

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ**
**ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

**18 մարտի 2016 թվականի N Մ - 162 - Ա**
**քաղ. Երևան**

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2015 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՍԻ 22-Ի N Մ-330-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻՆ ՀԱՐԱԿԻՑ ԳՈՐԾԱՐՔԻ ՄԱՍԻՆ («ՀԱՅԱՍՏԱՆ» ՀԱՄԱՀԱՅԿԱԿԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄ)

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2016 թվականի փետրվարի 22-ի N 07/80-2/6413-16 և փետրվարի 24-ի N 06/3-3/6715-16 եզրակացությունները,* ***ո ր ո շ ու մ է.***

1. Սահմանել, որ «Հայաստան» համահայկական հիմնադրամի կողմից (ՀՎՀՀ՝ 02507456) կնքված՝ ստորև նշված պայմանագրով նախատեսված գործարքն անմիջականորեն կապված է Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2015 թվականի հունիսի 22-ի «Հայաստան» համահայկական հիմնադրամի կողմից իրականացվող «Հիշում եմ և պահանջում» ծրագրի մասին» N Մ-330-Ա (2016 թվականի հունվարի 29-ի N Մ-018-Ա որոշման խմբագրությամբ) որոշմամբ հաստատված ծրագրի իրականացման հետ և դրա համար ունի զգալի նշանակություն՝

«Անթարես» ՍՊԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 02519531) 2015 թվականի դեկտեմբերի 1-ին կնքված N 0112-2015 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է «Երևան-Փարիզ. 1915-1940» գրքի նկարների մշակում և էջադրում՝ 1,200,000 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

ՆԱԽԱԳԱՀ Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ**
**18 մարտի 2016 թվականի N Մ- 163 -Ա**
**քաղ. Երևան**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱ-ԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2014 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 12-Ի N Մ-1296-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻՆ ՀԱՐԱԿԻՑ ԳՈՐԾԱՐՔԻ ՄԱՍԻՆ («ՍԵՅՎ ԴԸ ՉԻԼԴՐԵՆ ԻՆԹԵՐՆԵՇՆԼ» ՀԱՅԱՍՏԱՆՅԱՆ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑՉՈՒԹՅՈՒՆ)**

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2016 թվականի մարտի 2-ի N 07/80-2/7840-16 և փետրվարի 1-ի N 06/3-3/7597-16 եզրակացությունները,* ***ո ր ո շ ու մ է.***

1. Սահմանել, որ «Սեյվ դը չիլդրեն Ինթերնեշնլ» հայաստանյան ներկայացուցչության կողմից կնքված՝ ստորև նշված պայմանագրերով նախատեսված գործարքն անմիջականորեն կապված է Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2014 թվականի դեկտեմբերի 12-ի «Սեյվ դը չիլդրեն Ինթերնեշնլ» հայաստանյան ներկայացուցչության կողմից իրականացվող ծրագրի մասին» N Մ-1296-Ա (2015 թվականի հուլիսի 24-ի N Մ-735-Ա որոշման խմբագրությամբ) որոշմամբ հաստատված ծրագրի իրականացման հետ և դրա համար ունի զգալի նշանակություն՝

«Ֆայն» ՍՊԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 01516105) 2016 թվականի փետրվարի 12-ին կնքված N 001/SCI-ARM/ACHE/16 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է տեխնիկայի ձեռքբերում՝ 172,560 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

**18 մարտի 2016 թվականի N Մ- 164 -Ա**
**քաղ. Երևան**

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2016 ԹՎԱԿԱՆԻ ՓԵՏՐՎԱՐԻ 19-Ի N Մ-092-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ (ԱՄԵՐԻԿԱՅԻ ՀԱՅ ՕԳՆՈՒԹՅԱՆ ՖՈՆԴԻ «ԵՐԵԽԱՆԵՐԻ ԱՋԱԿՑՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆ» ՀԻՄՆԱԴՐԱՄ)

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հաշվի առնելով Ամերիկայի Հայ օգնության ֆոնդի «Երեխաների աջակցության կենտրոն» հիմնադրամի 2016 թվականի մարտի 11-ի N 32/16 գրությունը,* ***ո ր ո շ ու մ է.***

1. Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2016 թվականի փետրվարի 19-ի «Հայաստանի Հանրապետության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2015 թվականի դեկտեմբերի 25-ի N Մ-1381-Ա որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին մասին (Հայ օգնության ֆոնդի «երեխաների աջակցության կենտրոն» հիմնադրամ)» N Մ-092-Ա որոշման 1-ին կետում «N Մ-11381-Ա» բառերը փոխարինել «N Մ-1381-Ա» բառերով:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

ՆԱԽԱԳԱՀ Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ**
**ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

**Ո Ր Ո Շ Ո Ւ Մ**
**18 մարտի 2016 թվականի N Մ - 165 - Ա**

**քաղ. Երևան**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2016 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆՎԱՐԻ 29-Ի N Մ-003-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ («ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԵՎ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԱՋԱԿՑՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆ» ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅ ՈՒՆ)**

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հաշվի առնելով «Համայնքային զարգացման և սոցիալական աջակցության կենտրոն» բարեգործական հասարակական կազմակերպության 2016 թվականի մարտի 14-ի գրությունը,* ***ո ր ո շ ու մ է.***

1. Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2016 թվականի հունվարի 29-ի «Համայնքային զարգացման և սոցիալական աջակցության կենտրոն» բարեգործական հասարակական կազմակերպության հասցեով ստացված բեռի ներմուծման և բաշխման ծրագրի մասին» N Մ-003-Ա (2016 թվականի փետրվարի 19-ի Մ-085-Ա որոշման խմբագրությամբ) որոշման 1-ին կետում «Ծնողազուրկ հայ երեխաների օգնության միություն» (SOAR) հիմնադրամի կողմից» բառերից հետո ավելացնել «ՄԵԲՍ ԳԼՈԲԱԼ Ռիչ» կազմակերպության միջոցով» բառերը:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

ՆԱԽԱԳԱՀ Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ**
**ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

**Ո Ր Ո Շ Ո Ւ Մ**
**18 մարտի 2016 թվականի N Մ - 166 - Ա**

**քաղ. Երևան**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2016 ԹՎԱԿԱՆԻ ՓԵՏՐՎԱՐԻ 19-Ի N Մ-086-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻՆ ՀԱՐԱԿԻՑ ԳՈՐԾԱՐՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ («ՀԱՅԱՍՏԱՆԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՆԱԽԱՁԵՌՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ» ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄ)**

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2016 թվականի մարտի 16-ի N 07/80-2/9913-16 և մարտի 18-ի N 6/3-3/10101-16 եզրակացությունները,* ***ո ր ո շ ու մ է.***

1. Սահմանել, որ «Հայաստանի զարգացման նախաձեռնություններ» բարեգործական հիմնադրամի կողմից կնքված՝ ստորև նշված պայմանագրերով նախատեսված գործարքներն անմիջականորեն կապված են Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2016 թվականի փետրվարի 19-ի «Հայաստանի զարգացման նախաձեռնություններ» բարեգործական հիմնադրամի կողմից իրականացվող «Ավրորա» միջազգային մարդասիրական մրցանակի շնորհում» ծրագրի մասին» N Մ-068-Ա որոշմամբ հաստատված ծրագրի իրականացման հետ և դրա համար ունեն զգալի նշանակություն՝

1) «Ռեպուբլիկա» ՍՊԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 02627517) 2016 թվականի փետրվարի 20-ին կնքված պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է հյուրանոցային ծառայությունների մատուցում՝ 1,838,250 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի.

2) «Ռեպուբլիկա» ՍՊԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 02627517) 2016 թվականի փետրվարի 20-ին կնքված պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է հյուրանոցային ծառայությունների մատուցում՝ 4,125,324 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի.

3) «Ինտեռարմ-Մ» ՍՊԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 02618938) 2016 թվականի փետրվարի 19-ին կնքված պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է հյուրանոցային ծառայությունների մատուցում՝ 11,412,200 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

ՆԱԽԱԳԱՀ Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ**
**ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

**Ո Ր Ո Շ Ո Ւ Մ**
**18 մարտի 2016 թվականի N Մ- 167 -Ա**
**քաղ. Երևան**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱ-ԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2014 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 12-Ի N Մ-1296-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻՆ ՀԱՐԱԿԻՑ ԳՈՐԾԱՐՔԻ ՄԱՍԻՆ («ՍԵՅՎ ԴԸ ՉԻԼԴՐԵՆ ԻՆԹԵՐՆԵՇՆԼ» ՀԱՅԱՍՏԱՆՅԱՆ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑՉՈՒԹՅՈՒՆ) N 1**

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2016 թվականի մարտի 16-ի N 07/80-2/9914-16 և մարտի 12-ի N 06/3-3/9277-16 եզրակացությունները,* ***ո ր ո շ ու մ է.***

1. Սահմանել, որ «Սեյվ դը չիլդրեն Ինթերնեշնլ» հայաստանյան ներկայացուցչության կողմից կնքված՝ ստորև նշված պայմանագրերով նախատեսված գործարքն անմիջականորեն կապված է Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2014 թվականի դեկտեմբերի 12-ի «Սեյվ դը չիլդրեն Ինթերնեշնլ» հայաստանյան ներկայացուցչության կողմից իրականացվող ծրագրի մասին» N Մ-1296-Ա (2015 թվականի հուլիսի 24-ի N Մ-735-Ա որոշման խմբագրությամբ) որոշմամբ հաստատված ծրագրի իրականացման հետ և դրա համար ունի զգալի նշանակություն՝

«Աստղիկ» ՍՊԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 00835755) 2015 թվականի հունվարի 8-ին կնքված N 007/SCI-ARM/GEN/15 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է տպագրական ծառայությունների մատուցում՝ 106,000 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

ՆԱԽԱԳԱՀ — Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ**
**ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

**18 մարտի 2016 թվականի N Մ- 168 -Ա**
**քաղ. Երևան**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2015 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 25-Ի N Մ-1379-Ա ՈՐՈՇՄԱՆ ԵՎ ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ (ԱՄԵՐԻԿԱՅԻ ՀԱՅ ՕԳՆՈՒԹՅԱՆ ՖՈՆԴԻ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՄԱՍՆԱՃՅՈՒՂ)**

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2016 թվականի մարտի 15-ի N 07/80-2/9579-16 և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2016 թվականի մարտի 11-ի N 06/3-3/8899-16 եզրակացությունները,* ***ո ր ո շ ու մ է.***

1. Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2015 թվականի դեկտեմբերի 25-ի «Ամերիկայի Հայ օգնության ֆոնդի Հայաստանի մասնաճյուղի կողմից իրականացվող «Կրթավճարներ» ծրագրի մասին» N Մ-1379-Ա որոշման և որոշմամբ հաստատված ծրագրում կատարել հետևյալ փոփոխությունները՝

1) որոշման 2-րդ կետի 3-րդ ենթակետում «ՓրայսուոթերհաուսԿուպերս Սենտրալ Այժա ընդ Կոկասուսիս Բի.Վի.» ընկերության հայաստանյան մասնաճյուղի հետ (ՀՎՀՀ՝ 02586628) 2014 թվականի նոյեմբերի 25-ին կնքված N 50100214 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է 2015 թվականի հունվարի 1-ից մինչև դեկտեմբերի 31-ը հաշվապահական հաշվառման ծառայությունների մատուցում՝ 5,892,000 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի» բառերը փոխարինել «ՓրայսուոթերհաուսԿուպերս Արմենիա» ՍՊԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 02588296) 2016 թվականի մարտի 1-ին կնքված N FAAS/03/16 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է 2016 թվականի մարտի 1-ից մինչև դեկտեմբերի 31-ը հաշվապահական հաշվառման ծառայությունների մատուցում՝ 4,910,000 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի» բառերով.

2) որոշմամբ հաստատված ծրագիրը շարադրել նոր խմբագրությամբ (կցվում է):

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

ՀԱՍՏԱՏՎԱԾ Է

Ամերիկայի Հայ օգնության ֆոնդի Հայաստանի մասնաճյուղի տնօրեն Բ. Սարգսյանի կողմից
«09» մարտի 2016 թ

## Ամերիկայի Հայ օգնության ֆոնդի Հայաստանի մասնաճյուղի կողմից 2016 թ.իրականացվող Կրթավճարների ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳԻՐ

| | | |
|---|---|---|
| 1. | Ծրագրի նպատակը | Ծրագրի նպատակն է աջակցել հանրապետության պետական և մասնավոր բարձրագույն հաստատություններում, քոլեջներում ու միջնակարգ մասնագիտական ուսումնական հաստատություններում համապատասխան մասնագիտությունների գծով ուսուցանվող, սոցիալապես անապահով և անվճարունակ ուսանողներին՝ կրթավճար և կրթաթոշակ տրամադրելու միջոցով: Վերը նշված կրթական հաստատությունների ցանկը տրվում է սույն ծրագրին կից ցուցակում: |
| 2. | Ծրագրի բարեգործական որակման նպատակը | Ակնկալում ենք ԱԱՀ-ից ազատում և խրախուսում («Բարեգործության մասին» Հայաստանի հանրապետության օրենքի 15-րդ հոդված): |
| 3. | Բարեգործը | ԱՄՆ-ի Հայ Օգնության Ֆոնդ (Նյու Յորքի գրասենյակ), ամերիկահայ բարերարներ՝ Անուշ Մաքևոյան, Ժիրայր Նիշանյան, Հարոլդ Գուլամիրյան, Մարգարիտ Անձյան, Էդուարդ Մարդիգյան, Ավեդիս և Արշո Բաղսարյան, Թոմաս և Դորա Գարաբեդյան, Անդրանիկ և Բեթթի Բերբերյան, Հարրի և Սյուզան Թուֆայան |
| 4. | Ծրագիրը կատարողը | ԱՄՆի ՀՕՖ-ի Հայաստանի մասնաճյուղ, ք. Երևան, Մ. Խորենացու փող. 22, ՀՎՀՀ 02517115: |
| 5. | Ծրագրի իրականացման վայրը և բնագավառը | Վայրը՝ ՀՀ մարզեր և ք. Երևան:<br>Բնագավառը՝ կրթական: |
| 6. | Ծրագրի բյուջեն | Ծրագրի ընդհանուր արժեքը կազմում է 132 250 000 ՀՀ դրամ:<br>Տարեկան ուսման վարձը կազմում է 88 320 000 ՀՀ դրամ:<br>Տարեկան կրթաթոշակը 28 420 000 ՀՀ դրամ:<br>Կազմակերպական ծախսեր 15 510 000 ՀՀ դրամ |
| 7. | Բարեգործություն ստացողը | 1. Երևանի առաջնակարգ ԲՈՒՀ-երի բակալավրիատում, մագիստրատուրայում և կլինիկական օրդինատուրայում սովորող 217 ուսանողներ:<br>2. Ծագումով Գեղարքունիքի մարզից 81 ուսանող, որ սովորում են Գավառի պետական համալսարանում և Երևանի ճարտարապետության և շինարարության պետական համալսարանում:<br>3. ք. Երևանի, ք. Վանաձորի և ք. Գավառի մանկատների կողմից երաշխավորված, ուսումը շարունակելու ցանկություն հայտնած մանկատների 34 ներկա և նախկին սաներ:<br>4. Տավուշի մարզի բարձրագույն, արհեստագործական, միջնակարգ մասնագիտական կրթություն ստացող թվով 52 ուսանողներ:<br>Ընդհանուրը՝384 ուսանողներ |
| 8. | Ծրագրի իրականացման տևողությունը | 01.01.2016 – 31.12.2016 |
| 9. | Միջոցառումների նկարագրությունը և ժամկետները, անհրաժեշտ ֆինանսական միջոցների ծավալը | 1. Կրթավճարների տրամադրման մրցույթների մասին հայտարարությունների տարածում ԶԼՄ-ների միջոցով /թերթեր, ռադիո, հեռուստակայաններ/: (մայիս - հունիս 2016)<br>2. Մրցույթների մասին հայտարարությունների տարածում վերոնշյալ բուհերում՝ հայտարարությունները փակցնելու միջոցով: (ընդունող հանձնաժողովների 2016 թ. աշխատանքի մեկնարկին)<br>3. Փաստաթղթային փաթեթների անհրաժեշտ քանակի պատճենահանում, տարածում բուհերում, այլ կրթօջախներում: (մայիս-հուլիս 2016)<br>4. Դիմորդների կողմից լրացված փաթեթների հավաքում: (օգոստոս 2016)<br>5. Փաթեթների դիտարկում, նախնական ընտրություն: (օգոստոս 2016)<br>6. Բոլոր դիմորդների տնայցեր: (օգոստոս 2016)<br>7. Մասնագիտական կողմնորոշման աշխատանքների կազմակերպում մանկատներում: ՀՕՖ-ի կրթական ծրագրերի համակարգող խորհրդի նիստի աշխատանքների կազմակերպում՝ վերջնական ընտրություն կատարելու նպատակով: օգոստոս-սեպտեմբեր 2016<br>8. Հաղթողների ընտրություն: սեպտեմբեր 2016<br>9. Մրցույթների արդյունքների մասին տեղեկացում – հաղթողների ցուցակները փակցվում են ՀՕՖ-ում:(սեպտեմբեր 2016)<br>10. Կողմնորոշման հանդիպումներ մրցույթներում հաղթող ճանաչված ուսանողների հետ, պայմանագրերի ստորագրում:(ուս տարվա ընթացքում)<br>11. Կրթավճարների փոխանցում համապատասխան բուհեր /տարեկան երկու անգամ/: (յուրաքանչյուր կիսամյակի սկզբին) Տարեկան ուսման վարձը կազմում է 88 320 000 ՀՀ դրամ:<br>12. Ամենամսյա կրթաթոշակների վճարում ուսանողներին: (յուրաքաչյուր ամիս) Տարեկան կրթաթոշակը 28 420 000 ՀՀ դրամ:<br>13. Բուհերի հետ մշտական կապի պահպանում՝ ուսանողների ակադեմիական առաջադիմությանը հետևելու նպատակով: (ուս. տարվա ողջ ընթացքում)<br>14. Ամեն կիսամյակի ավարտից հետո ստուգման գրքույկների պատճենների հավաքում և դիտարկում: (յուրաքանչյուր կիսամյակի ավարտից հետո) |

| | | |
|---|---|---|
1. Սահմանել, որ «Առաքելություն Արևելք» մարդասիրական օգնության կազմակերպության հայաստանյան մասնաճյուղի կողմից կնքված՝ ստորև նշված պայմանագրով նախատեսված գործարքն անմիջականորեն կապված է Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2016 թվականի փետրվարի 19-ի «Աջակցություն Հայաստանի Հանրապետությունում ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ին հակազդման ազգային ծրագրին» ծրագրի մասին» N Մ-114-Ա որոշմամբ հաստատված ծրագրի իրականացման հետ և դրա համար ունի զգալի նշանակություն՝

«Բի-Դի-Օ Արմենիա» ՓԲԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 01569792) 2015 թվականի դեկտեմբերի 21-ին կնքված՝ N 49/15 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է աուդիտորական ծառայությունների մատուցում՝ 6,500,000 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարություն և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

ՆԱԽԱԳԱՀ                                                  Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

**Ո Ր Ո Շ Ո Ւ Մ**

**18 մարտի 2016 թվականի N Մ-183-Ա**
**քաղ. Երևան**

### ՄԱՅՐ ԱԹՈՌ ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾՆԻ ԿՈՂՄԻՑ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ «ԻԶՄԻՐԼՅԱՆ» ԲԺՇԿԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆԻ ՀԱՄԱՐ ՆՈՐ ՍԱՐՔԱՎՈՐՈՒՄՆԵՐԻ ՏԵՂԱԴՐՈՒՄ» ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2016 թվականի փետրվարի 22-ի N 07/80-2/6412-16 և փետրվարի 18-ի N 06/3-3/5782-16 և Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության 2016 թվականի փետրվարի 19-ի N 02/14/1741-16 եզրակացությունները,* ***ո ր ո շ ու մ է.***

1. Բարեգործական որակել Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի կողմից իրականացվող՝ 48,203,220 դրամ արժողությամբ «Իզմիրլյան» բժշկական կենտրոնի համար նոր սարքավորումների տեղադրում» ծրագիրը (կցվում է):

2. Սահմանել, որ Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի (ՀՎՀՀ 04703401) կողմից կնքված՝ ստորև նշված պայմանագրով նախատեսված գործարքն անմիջականորեն կապված է սույն որոշման 1-ին կետում նշված ծրագրի իրականացման հետ և դրա համար ունի զգալի նշանակություն՝

«Ալֆա-Էլեկտրո» ՍՊԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 02636283) 2016 թվականի փետրվարի 15-ին կնքված՝ N 01Շ/016 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է նոր ԼՏԵ-ի և դիզել-գեներատորի հիմքերի կառուցման, սարքավորումների մոնտաժման ու կարգաբերման աշխատանքների իրականացում՝ 48,203,220 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի.

3. Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնին՝ ծրագրի ավարտից հետո մեկամսյա ժամկետում սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով ներկայացնել ծրագրի կատարման մասին ամփոփ տեղեկատվություն:

4. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարություն, Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարություն և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

ՆԱԽԱԳԱՀ Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

ՀԱՍՏԱՏՎԱԾ Է
Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի
Վարչատնտեսական բաժնի տնօրեն
Մ... [illegible]
... փետրվար 2016 թ.

### Իզմիրլյան Բժշկական կենտրոնի համար նոր սարքավորումների տեղադրում
### Ծ Ր Ա Գ Ի Ր

3/1

| | | |
|---|---|---|
| 1 | Ծրագրի նպատակը | Ծրագրի նպատակն է Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի Իզմիրլյան ԲԿ-ի համար նոր ԼՏԵ-ի և դիզել-գեներատորի հիմքերի կառուցման, սարքավորումների մոնտաժման և կարգաբերման աշխատանքների իրականացումը: |
| 2 | Ծրագրի բարեգործական որակման նպատակները | Նախատեսվում է ծրագրի շրջանակներում, օրենքով սահմանված կարգով օգտվել ավելացված արժեքի հարկի (ԱԱՀ) վճարումից ազատվելու արտոնությունից: |
| 3. | Բարեգործը (բարեգործները) | Հայկական Բարեգործական Ընդհանուր Միություն |
| 4. | Ծրագրի կատարողը | Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին, ՀՎՀՀ 06800406: |
| 5. | Ծրագրի իրականացման վայրը և բնագավառը | Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին, բնագավառը՝ առողջապահություն: |
| 6. | Ծրագրի բյուջեն | 48,203,220 ՀՀ դրամ, առանց ԱԱՀ: |
| 7. | Բարեգործություն ստացողը | Հայ Առաքելական Սուրբ Եկեղեցին և հավատացյալ ժողովուրդը: |
| 8. | Ծրագրի իրականացման տևողությունը | 15 փետրվար 2016թ. – 20 մայիս 2016թ.: |
| 9. | Միջոցառումների նկարագրությունը և ժամկետները, անհրաժեշտ ֆինանսական միջոցների ծավալը | Ծրագրի իրականացման ընթացքում նախատեսվում է կատարելՄայր Աթոռ Սուրբ Էջմիածնի Իզմիրլյան ԲԿ-ի համար նոր ԼՏԵ-ի և դիզել-գեներատորի հիմքերի կառուցման, սարքավորումների մոնտաժման և կարգաբերման աշխատանքները՝ 48,203,220 ՀՀ դրամ գումարով՝ առանց ԱԱՀ:<br>Ծրագիրը նախատեսվում է իրականացնել 15 փետրվար 2016թ. – 20 մայի 2016թ.: |
| 10. | Ձեռք բերվող ապրանքների, ծառայությունների համառոտ նկարագիրը, ծավալները, նախատեսվող գինը | Նախատեսվում է Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի Իզմիրլյան ԲԿ-ի համար նո սարքավորումների տեղադրման, մոնտաժման աշխատանքներ իրականացումը՝ 48,203,220 ՀՀ դրամ՝ առանց ԱԱՀ-ի: |
| 11. | Ծրագրի իրականացման հետ կապված կազմակերպական ծախսերը | Այլ ծախսեր նախատեսված չեն |
| 12. | Համագործակցությունը պետական կառավարման, տեղական ինքնակառավարման մարմինների և այլ կազմակերպությունների հետ | Նախատեսվում է համագործակցություն Երևանի քաղաքապետարանի հետ: |
| 13. | Ծրագրի արդյունավետության նկատմամբ վերահսկողության մեխանիզմների նկարագրությունը | Նախատեսվում է տեխնիկական հսկողություն Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի ճարտարապետաշինարարական և ֆինանսական բաժինների և ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի կողմից: Ծրագրի ավարտից հետո կտրվի ամփոփ տեղեկություն: |

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ**
**ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

**18 մարտի 2016 թվականի N Մ - 184 - Ա**
**քաղ. Երևան**

## ՄԱՅՐ ԱԹՈՌ ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾՆԻ ՀԱՍՑԵՈՎ ՍՏԱՑՎԱԾ ԲԵՌԻ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2016 թվականի փետրվարի 22-ի N 07/80-2/6405-16 և փետրվարի 25-ի N 06/3-3/6930-16 եզրակացությունները, ինչպես նաև հաշվի առնելով Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի 2016 թվականի մարտի 30-ի N 174 գրությունը,* ***ո ր ո շ ու մ է.***

1. Բարեգործական որակել եգիպտոսի Հայոց թեմի կողմից, Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի հասցեով ստացված խունկի (100 տեղ, 5,035 կգ ընդհանուր քաշով, 70,000 եգիպտական ֆունտին համարժեք դրամ արժողությամբ, փոխադրման ծախսերը կազմել են 2,371 ԱՄՆ-ի դոլար, «Արարատյան» ՏՄ) ներմուծման ծրագիրը: Բեռը նախատեսված է եկեղեցական ծիսական արարողությունների համար:

2. Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնին՝ նշված բեռի համապատասխան ձևակերպումներն ավարտելուց հետո մեկամսյա ժամկետում՝ սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով ներկայացնել ամփոփ տեղեկատվություն:

3. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

ՆԱԽԱԳԱՀ Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
## ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

### Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

**18 մարտի 2016 թվականի N Մ - 185 - Ա**
**քաղ. Երևան**

### ՄԱՅՐ ԱԹՈՌ ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾՆԻ ՀԱՍՑԵՈՎ ՍՏԱՑՎԱԾ ԲԵՌԻ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ (N 1)

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2016 թվականի մարտի 14-ի N 07/80-2/9400-16 և N 06/5-1/9507-16 եզրակացությունները,* ***ո ր ո շ ու մ է.***

1. Բարեգործական որակել Հայկական բարեգործական ընդհանուր միության միջոցներով, Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի հասցեով ստացված գրանիտե և մարմարե սալերի (50,900 կգ ընդհանուր քաշով, 18,565 ԱՄՆ-ի դոլարին համարժեք դրամ ընդհանուր արժողությամբ, փոխադրման ծախսերը կազմել են 1,091,736 դրամ, «Արարատյան» ՏՄ) ներմուծման ծրագիրը: Բեռը նախատեսված է «Գարեգին Ա» կրթական կենտրոնի համար:

2. Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնին՝ նշված բեռի համապատասխան ձևակերպումներն ավարտելուց հետո մեկամսյա ժամկետում՝ սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով ներկայացնել ամփոփ տեղեկատվություն:

3. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

ՆԱԽԱԳԱՀ Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ**
**ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

**18 մարտի 2016 թվականի N Մ-186 -Ա**
**քաղ. Երևան**

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2011 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՍԻ 17-Ի N Մ-490-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ Մ Ա Ս Ի Ն

**(«Երևան իմ սեր» հիմնադրամ)**

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2016 թվականի մարտի 2-ի N 07/80-2/7861-16 և N 06/3-3/7880-16 եզրակացությունները, ինչպես նաև հաշվի առնելով «Երևան իմ սեր» հիմնադրամի 2016 թվականի փետրվարի 22-ի գրությունը,* **ո ր ո շ ու մ է.**

1. Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2011 թվականի հունիսի 17-ի «Երևան իմ սեր» հիմնադրամի կողմից իրականացվող «Սբ. Հովհաննես Մկրտիչ եկեղեցուն կից քաղաքային սոցիալ-հոգևոր ենթակառուցվածքների զարգացում» N Մ-490-Ա որոշման մեջ (2013 թվականի ապրիլի 23-ի N Մ-253-Ա, հոկտեմբերի 25-ի N Մ-963-Ա և 2014 թվականի հունիսի 27-ի N Մ-622-Ա որոշումների խմբագրությամբ) կատարել հետևյալ փոփոխությունները՝

1) որոշման վերնագրում և 1-ին կետում «Սբ. Հովհաննես Մկրտիչ եկեղեցուն» բառերը փոխարինել «Սուրբ Հովհաննես Մկրտիչ և Սուրբ Սարգիս եկեղեցիներին» բառերով.

2) որոշման 1-ին կետում «1,515,000,000 դրամ» բառերը փոխարինել «1,516,624,000 դրամ» բառերով.

3) որոշմանը կից ծրագիրը շարադրել նոր խմբագրությամբ (կցվում է):

2. Սույն որոշումը ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարությանը և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական գանձապետարան:

ՆԱԽԱԳԱՀ Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

---

ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ
«Երևան իմ սեր» հիմնադրամի տնօրեն
Արշակ Կարապետյան
___ մարտի 2016թ.

«Սուրբ Հովհաննես Մկրտիչ և Սուրբ Սարգիս եկեղեցիներին կից քաղաքային սոցիալ-հոգևոր ենթակառուցվածքների զարգացում»
ծրագիր

| | | |
|---|---|---|
| 1. | Ծրագրի նպատակը | «Երևան իմ սեր» հիմնադրամին հանգանակված միջոցներից Երևան քաղաքում՝ Սուրբ Հովհաննես Մկրտիչ և Սուրբ Սարգիս եկեղեցիներին հարակից տարածքներում վերստեղծել հին Երևանի ճարտարապետությանը բնորոշ ոճով, մոտ 2100 քմ ընդհանուր մակերեսով ցածրահարկ շենքեր: Շենքերում գործելու են մանկական զեղագիտական կենտրոն, համայնքային, միայնակ մայրերի և երեխաների կենտրոններ՝ իրականացվելու են հոգևոր, սոցիալ մշակութային ծրագրեր: Կառուցված շենքերը և դրանց կառուցման համար ձեռք բերված հողամասերը նվիրաբերվելու են Հայաստանյայց առաքելական եկեղեցուն: |
| 2. | Ծրագրի բարեգործական որակման նպատակը | Ծրագրի շրջանակներում հարկերի, տուրքերի, պարտադիր վճարների գծով օրենքով սահմանված արտոնություններից օգտվելը |
| 3. | Բարեգործը | «Երևան իմ սեր» հիմնադրամի նվիրատուներ |
| 4. | Ծրագիրը կատարողը | «Երևան իմ սեր» հիմնադրամ, ՀՎՀՀ 00100778<br>Ք. Երևան, Եկմալյան 6, Հեռ.՝ (+37491) 23 04 00 |

1

3/8.3

| | | |
|---|---|---|
| 5. | Ծրագրի իրականացման վայրը և բնագավառը | Հայաստանի Հանրապետություն, ք. Երևան, Կոնդ թաղամաս՝ Սուրբ Հովհաննես Մկրտիչ եկեղեցուն հարակից տարածք և ք. Երևան. «Զորավոր ազգագրական թաղամաս»՝ Սուրբ. Սարգիս եկեղեցուն հարակից տարածք<br><br>Ծրագիրն ընդգրկում է կրթական, մշակութային սոցիալական բնագավառները |
| 6. | Ծրագրի բյուջեն | Ծրագրի բյուջեն կազմում է մոտ 1,516,624,000 (մեկ միլիարդ հինգ հարյուր տասնհինվեց միլիոն վեց հարյուր քսանչորս հազար) ՀՀ դրամ |
| 7. | Բարեգործություն ստացողը | Շահառուներն են Հայաստանյաց առաքելական եկեղեցին, Երևանի կարիքավոր ընտանիքների երեխաները, միայնակ մայրերն ու նրանց երեխաները: |
| 8. | Ծրագրի իրականացման տևողությունը | Ծրագիրը սկսվել է 2013թ. մարտի 25-ին և նախատեսվում է ավարտել մինչև 2017 թ. դեկտեմբերի 25 |
| 9. | Միջոցառումների նկարագրությունը և ժամկետները, անհրաժեշտ ֆինանսական միջոցների ծավալը | Ծրագրով նախատեսվում է կառուցել մոտ 2100 քմ ընդհանուր մակերեսով ցածրահարկ շենքեր Երևան քաղաքի Պարոնյան և Կոզեռն փողոցների միջև ընկած տարածքում՝ Սուրբ. Հովհաննես Մկրտիչ եկեղեցու հարևանությամբ և Երևան քաղաքի «Զորավոր ազգագրական թաղամասում»՝ Իսրաելյան փողոցի և Հրազդանի ձորի միջև ընկած տարածքում: Սուրբ. Սարգիս եկեղեցու հարակից տարածքում՝ կառուցվելու է մանկական գեղագիտական կենտրոն համալիր, որտեղ գործելու են նկարչության ստուդիա, քանդակի ստուդիա, զոբելենի և կիրառական արվեստի ստուդիաներ (595 քմ և մոտ 250 քմ օգտագործվող տանիք ), համակարգչային կենտրոն, գրադարան, տեխնիկական մոդելավորման կենտրոններ (մոտ 590 քմ), վարչական մասնաշենք (մոտ 108 քմ) կառուցվելու է նաև բացօթյա ամֆիթատրոն, ստեղծվելու է անգլիական ոճի այգի:<br><br>Սուրբ. Հովհաննես Մկրտիչ եկեղեցուն հարակից կառուցվող շենքը հանդիսանալու է Սուրբ Հովհաննես Մկրտիչ եկեղեցուն օժանդակ շինություն՝ անվճար հատկացվելու է Սուրբ Հովհաննես Մկրտիչ եկեղեցու հոգևոր սպասավորների և համայնքի հոգևոր կարիքների համար (մոտ 500 քմ): |



3/83

| | | |
|---|---|---|
| | | Կառուցվելիք շենքի շուրջ նախատեսվում է իրականացնել ծառատնկման և կանաչապատման աշխատանքներ, որպեսզի կառուցվելիք շենքերը Սուրբ. Հովհաննես Մկրտիչ եկեղեցու և միմյանց հետ միասին ունենան միասնական համալիրի տեսք և ծառայեն համայնքի հոգևոր-մշակութային պահանջներին:<br><br>Աշխատանքներն ընթանալու են հետևյալ փուլերով<br><br>ա) ճարտարապետական նախագծերի (էսքիզային, ճարտարապետական և կոնստրուկտորական մասերի համար) նախագծում (2013 հունվար – մայիս ամիսների ընթացքում) – մոտ 30.000.000 ՀՀ դրամ<br><br>բ) Սուրբ Հովհաննես Մկրտիչ եկեղեցուն հարակից հողամասերի փոխանցում Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցուն (2014թ. մայիս – հուլիս ամիսների ընթացքում) 516.624.000 ՀՀ դրամ<br><br>գ) ընդհանուր շինարարության և արտաքին բարեկարգման աշխատանքները (2013 մարտ - 2017 դեկտեմբեր ամիսների ընթացքում) մոտ 950,000,000 ՀՀ դրամ<br><br>Ավտոմեքենա՝ 20,000,000 (քսան միլիոն) ՀՀ դրա |
| 10. | Ձեռք բերվող (ներմուծվող) ապրանքների և ծառայությունների համառոտ նկարագիրը, ծավալները և նախատեսվող գինը | Նախատեսվում է ձեռք բերել ներքոհիշյալ ծառայությունները, որոնց ընդհանուր արժեքը կազմելու է 1,000,000,000 ՀՀ դրամ:<br><br>• Ճարտարապետական նախագծերի՝ կառուցվելիք շենքերի էսքիզային, ճարտարապետական և կոնստրուկտորական մասերի նախագծում – մոտ 30,000,000 ՀՀ դրամ:<br>• Շինարարական ընկերությունների հետ կնքվելիք պայմանագրի շրջանակներում նախատեսվող հողային, շինարարական աշխատանքներ և արտաքին բարեկարգում– մոտ 770,000,000 ՀՀ դրամ:<br>• Շինանյութերի և ներքին հարդարման և կահավորանքի ներմուծում – մոտ 150,000,000 ՀՀ դրամ |



3/83

| | | |
|---|---|---|
| | | • Էլեկտրամատակարարման, ջրամատակարարման և ջրահեռացման, գազի մատակարարման և այլ համակարգերին միացման աշխատանքներ – մոտ 30,000,000 ՀՀ դրամ<br>• Ավտոմեքենա՝ 20,000,000 (քսան միլիոն) ՀՀ դրամ: |
| 11. | Ծրագրի իրականացման հետ կապված կազմակերպական ծախսերը | Ավտոմեքենա՝ 20,000,000 (քսան միլիոն) ՀՀ դրամ: |
| 12. | Համագործակցությունը պետական կառավարման, տեղական ինքնակառավարման մարմինների, այլ կազմակերպությունների հետ | Երևանի քաղաքապետարան<br><br>Հայաստանյայց առաքելական եկեղեցի |
| 13. | Ծրագրի արդյունավետության նկատմամբ վերահսկողության մեխանիզմների նկարագրությունը | • Սահմանված կարգով եռամսյակային և տարեկան հաշվետվությունների ներկայացում ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով<br>• աշխատանքային ու ֆինանսական հաշվետվությունների ներկայացում «Երևան իմ սեր» հիմնադրամի հոգաբարձուների խորհրդին |

3/8.3

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

**18 մարտի 2016 թվականի N Մ - 187 - Ա**
**քաղ. Երևան**

## ՀԱՅ ԱՌԱՔԵԼԱԿԱՆ ԵԿԵՂԵՑՈՒ ՇԻՐԱԿԻ ԹԵՄԻ ՀԱՍՑԵՈՎ ՍՏԱՑՎԱԾ ԲԵՌԻ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2016 թվականի մարտի 16-ի N 07/80-2/9843-16 և մարտի 18-ի N 06/3-3/10211-16 եզրակացությունները,* ***ո ր ո շ ու մ  է.***

1. Բարեգործական որակել «Ուղղափառ քրիստոնեական միջազգային բարեգործություն» կազմակերպության միջոցով Հայ Առաքելական եկեղեցու Շիրակի թեմի հասցեով ստացված բեռի (13,607.77 կգ ընդհանուր քաշով, 19,500 ԱՄՆ-ի դոլարին համարժեք դրամ արժողությամբ, փոխադրման ծախսերը կազմել են 5,164 ԱՄՆ-ի դոլար, բեռի ցանկը կցվում է, «Շիրակի» ՏՄ) ներմուծման ծրագիրը: Բեռը նախատեսված է Շիրակի թեմի սոցիալապես անապահով ընտանիքների համար:

2. Հայ Առաքելական եկեղեցու Շիրակի թեմին՝ նշված բեռի համապատասխան ձևակերպումներն ավարտելուց հետո մեկամսյա ժամկետում՝ սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով ներկայացնել ամփոփ տեղեկատվություն:

3. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

ՆԱԽԱԳԱՀ Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

### ԱՆՎԱՆԱՑԱՆԿ

| Հ/Հ | Ապրանքի անվանումը | Տեղերի քանակ | Քանակը ըստ միավորի | Ընդհանուր | Մաքուր | Արժեքը հ/ա |
|---|---|---|---|---|---|---|
| | | | | քաշը բրուտտո կգ | քաշը նետտո կգ | |
| | Հիգիենայի պարագաներ | 250 | | | | |
| 1 | Սրբիչ փոքր | | 22000 | 2127,00 | 2024 | 6000,0 |
| 2 | Օճառ DIAL | | 11000 | 1500,00 | 1397 | 1650,0 |
| 3 | Սանր | | 11000 | 411,00 | 308 | 1100,0 |
| 4 | Եղունգ կտրիչ | | 11000 | 323,00 | 220 | 450,0 |
| 5 | Ատամի խոզանակ | | 11000 | 323,00 | 220 | 3300,0 |
| 6 | Կպչուն սպեղանի | | 66000 | 147,00 | 44 | 500,0 |
| | | 250 | | | | |
| 1 | Տետր (զսպանակով) | | 22500 | 5514,00 | 5400 | 1950,0 |
| 2 | Քանոն (30 սմ) | | 7500 | 238,00 | 135 | 250,0 |
| 3 | Մատիտի սրիչ | | 7500 | 223,00 | 120 | 400,0 |
| 4 | Ռետին աշակերտական | | 7500 | 345,00 | 242 | 360,0 |
| 5 | Գունավոր մատիտ | | 7500 | 1533,00 | 1430 | 1940,0 |
| 6 | Մատիտ | | 45000 | 477,00 | 374 | 900,0 |
| 7 | Մկրատ | | 7500 | 268,00 | 165 | 700,0 |
| 8 | Պայուսակ | | 7500 | 178,77 | 75,77 | 0,0 |
| | | | | 13607,77 | 12154,77 | 19500,0 |

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

**18 մարտի 2016 թվականի N Մ- 188 -Ա**
**քաղ. Երևան**

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2015 ԹՎԱԿԱՆԻ ԱՊՐԻԼԻ 17-Ի N Մ-367-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԺԱՄԿԵՏԸ ԵՐԿԱՐԱՁԳԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին)

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հաշվի առնելով Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի 2016 թվականի մարտի 16-ի N 140 գրությունը,* ***ո ր ո շ ու մ է.***

1. Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2015 թվականի ապրիլի 17-ի Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի կողմից իրականացվող «Գարեգին Ա կրթական կենտրոնի կահավորում» ծրագրի մասին» N Մ-367-Ա որոշմամբ (2015 թվականի հունիսի 26-ի N Մ-629-Ա որոշման խմբագրությամբ) հաստատված ծրագրի իրականացման ժամկետը երկարաձգել մինչև 2016 թվականի մայիսի 30-ը:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

ՆԱԽԱԳԱՀ Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

**18 մարտի 2016 թվականի N Մ- 189 -Ա**
**քաղ. Երևան**

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱ-ԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2015 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 4-Ի N Մ-1263-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԺԱՄԿԵՏԸ ԵՐԿԱՐԱՁԳԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին)

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգ-ման հանձնաժողովը, հաշվի առնելով Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի 2016 թվականի մարտի 16-ի N 139 գրությունը,* **ո ր ո շ ու մ  է**.

1. Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2015 թվականի դեկտեմբերի 4-ի Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի կողմից իրականացվող «Տպարանի տանիքի վերափոխում» ծրագրի մասին» N Մ-1263-Ա որոշմամբ հաստատված ծրագրի իրականացման ժամկետը երկարաձգել մինչև 2016 թվականի ապրիլի 15-ը:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարա-րություն և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

Նախագահ Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ**
**ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

**18 մարտի 2016 թվականի N Մ-190-Ա**
**քաղ. Երևան**

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ ՆԱԽԱ-ՐԱՐՈՒԹՅԱՆ «ՄԱՐԴԱՍԻՐԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՊԵՏԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ» ՊՈԱԿ-Ի ՀԱՍՑԵՈՎ ՍՏԱՑՎԱԾ ԲԵՌԻ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ (N 1)

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2016 թվականի փետրվարի 15-ի N 07/80-2/5342-16 և փետրվարի 19-ի N 06/3-3/6071-16 ու Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության 2016 թվականի փետրվարի 15-ի N ԱՄ/22.2/1433-16 եզրակացությունները,* ***որոշում է.***

1. Բարեգործական որակել ԱՄՆ-ի «AmeriCares» հիմնադրամի կողմից, որպես օժանդակություն, Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության «Մարդասիրական օգնության հանրապետական կենտրոն» ՊՈԱԿ-ի հասցեով ուղարկված դեղերի և բժշկական նշանակության ապրանքների (31 տեղ՝ 2,200 արկղ, 7,399.5 կգ ընդհանուր քաշով, 2,612,611.05 ԱՄՆ-ի դոլարին համարժեք դրամ արժողությամբ, փոխադրման ծախսերը կազմել են 5,804 ԱՄՆ-ի դոլար, «Արարատյան» ՏՄ) ներմուծման և անհատույց բաշխման ծրագիրը:

2. Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության «Մարդասիրական օգնության հանրապետական կենտրոն» ՊՈԱԿ-ին՝ նշված բեռի բաշխումն ավարտելուց հետո մեկամսյա ժամկետում՝ սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով ներկայացնել ամփոփ տեղեկատվություն:

3. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարություն և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

ՆԱԽԱԳԱՀ Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

**Ո Ր Ո Շ Ո Ւ Մ**

**18 մարտի 2016 թվականի N Մ-191-Ա**
**քաղ. Երևան**

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ «ՄԱՐԴԱՍԻՐԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՊԵՏԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ» ՊՈԱԿ-Ի ՀԱՍՑԵՈՎ ՍՏԱՑՎԱԾ ԲԵՌԻ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ (N 2)

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2016 թվականի փետրվարի -ի N 07/80-2/-16 և փետրվարի -ի N 06/3-3/-16 ու Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության 2016 թվականի փետրվարի -ի N ԱՄ/22.2/-16 եզրակացությունները,* ***որոշում է.***

1. Բարեգործական որակել «AmeriCares» հիմնադրամի կողմից ԱՄՆ-ի Հայաստան Արցախ հիմնադրամի միջոցով, որպես օժանդակություն, Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության «Մարդասիրական օգնության հանրապետական կենտրոն» ՊՈԱԿ-ի հասցեով ուղարկված դեղերի (3 տեղ, 217 կգ ընդհանուր քաշով, 93,369.40 ԱՄՆ-ի դոլարին համարժեք դրամ արժողությամբ, փոխադրման ծախսերը կազմել են 1,421.07 ԱՄՆ-ի դոլար, «Ջվարթնոց» ՄՏ) ներմուծման և անհատույց բաշխման (համաձայն կից կարգո մանիֆեստի) ծրագիրը:

2. Սահմանել, որ սույն որոշման 1-ին կետում նշված դեղերից 28.2 կգ ընդհանուր քաշով, 26,786.90 ԱՄՆ-ի դոլար արժողությամբ դեղերը նախատեսված են Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարությանը, 159.2 կգ ընդհանուր քաշով, 56,134.70 ԱՄՆ-ի դոլար արժողությամբ դեղերը՝ Հայաստանի Հանրապետությունում Լեռնային Ղարաբաղի Հանրապետության մշտական ներկայացուցչությանը, իսկ 29.6 կգ ընդհանուր քաշով, 10,447.80 ԱՄՆ-ի դոլար արժողությամբ դեղերը՝ «Արաբկիր» միացյալ մանկական բարեգործական հիմնադրամին:

3. Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության «Մարդասիրական օգնության հանրապետական կենտրոն» ՊՈԱԿ-ին՝ նշված բեռի բաշխումն ավարտելուց հետո մեկամսյա ժամկետում՝ սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության



կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով ներկայացնել ամփոփ տեղեկատվություն:

4. Սույն որոշումն ուղարկել Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարություն, Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարություն և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

ՆԱԽԱԳԱՀ Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

## ԿԱՐԳՈ ՄԱՆԻՖԵՍՏ
## ՄԱՐԴԱՍԻՐԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻՆ

«Հայաստան-Արցախ» հիմնադրամ
Չվերթ 018
«AmeiCares» հիմնադրամի փոխադրում #AC051518

15 փետրվարի 2016թ.

| Հ/Հ | Դոնոր | Նկարագրություն | Ստացող | Կոդ | Քանակ | Սկիդ | Քաշ (lbs) | Արժեք (ԱՄՆ դոլար) |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| 1. | ԱՄՆ-ի «Հայաստան-Արցախ» հիմնադրամ (AmeriCares) | Դեղորայք | Մուրադյան Ա. - ՀՀ առողջապահության նախարարություն | AIR 018-01 | 20 | | 62 | 26,786.90 |
| 2. | ԱՄՆ-ի «Հայաստան-Արցախ» հիմնադրամ (AmeriCares) | Դեղորայք | Ավետիսյան Կ. - ՀՀ-ում ԼՂՀ ներկայացուցչություն | NKR AIR 018-02 | 38 | | 350 | 56,134.70 |
| 3. | ԱՄՆ-ի «Հայաստան-Արցախ» հիմնադրամ (AmeriCares) | Դեղորայք | Ղազարյան Ս. - «Արաբկիր» միացյալ մանկական բարեգործական հիմնադրամ | AIR 018-03 | 4 | | 65 | 10,447.80 |
| | | | Ընդամենը | | 62 | | 477 | 93,369,40 |
| | | | Փոխադրման ծախսեր | | | | | 1,421.07 |
| | | | Ընդամենը | | | | | 94,790.47 |

3/6.12

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ**
**ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

**18 մարտի 2016 թվականի N Մ-192-Ա**
**քաղ. Երևան**

## «ՔԵՆԴԼ» ՍԻՆՔՐՈՏՐՈՆԱՅԻՆ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԻՆՍՏԻՏՈՒՏ» ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ՀԱՍՑԵՈՎ ՍՏԱՑՎԱԾ ԲԵՌԻ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2016 թվականի փետրվարի 29-ի N 07/80-2/7420-16 և մարտի 1-ի N 06/3-3/7599-16 եզրակացությունները,* ***ո ր ո շ ու մ է.***

1. Բարեգործական որակել Շվեյցարիայի Պոլ Շեռերի ինստիտուտի (PSI) կողմից, որպես օժանդակություն, «Քենդլ» սինքրոտրոնային հետազոտությունների ինստիտուտ» հիմնադրամի հասցեով ուղարկված գիտական սարքի բաղկացուցիչ մասերի (3 տեղ, 1,112 կգ ընդհանուր քաշով, 10,400 եվրոյին համարժեք դրամ արժողությամբ, փոխադրման ծախսերը կազմել են 958,250 դրամ, «ՄԾՓ» ՏՄ) ներմուծման ծրագիրը:

2. «Քենդլ» սինքրոտրոնային հետազոտությունների ինստիտուտ» հիմնադրամին՝ նշված բեռի համապատասխան ձևակերպումներն ավարտելուց հետո մեկամսյա ժամկետում՝ սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով ներկայացնել ամփոփ տեղեկատվություն:

3. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարություն, Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարություն ու Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

ՆԱԽԱԳԱՀ Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

**18 մարտի 2016 թվականի N Մ-193-Ա**
**քաղ. Երևան**

## «ՀԱՅԱՍՏԱՆԻ ԲԱՍԿԵՏԲՈԼԻ ՖԵԴԵՐԱՑԻԱ» ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՀԱՍՑԵՈՎ ՍՏԱՑՎԱԾ ԲԵՌԻ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2016 թվականի մարտի 1-ի N 07/80-2/7546-16 և մարտի 1-ի N 06/3-3/7699-16 ու Հայաստանի Հանրապետության սպորտի և երիտասարդության հարցերի նախարարության 2016 թվականի փետրվարի 29-ի N 1/06/238-16 եզրակացությունները,* ***ո ր ո շ ու մ է.***

1. Բարեգործական որակել եվրոպայի բասկետբոլի ֆեդերացիաների միջազգային ասոցիացիայի կողմից, որպես օժանդակություն, «Հայաստանի բասկետբոլի ֆեդերացիա» հասարակական կազմակերպության հասցեով ուղարկված բասկետբոլի գնդակների (200 հատ՝ 4 տեղ, 124.4 կգ ընդհանուր քաշով, 200 եվրոյին համարժեք դրամ արժողությամբ, փոխադրման ծախսերը կազմել են 811 եվրո, «ՄՓ և ՍԱՓԱՄ» ՄՏ) ներմուծման ծրագիրը:

2. «Հայաստանի բասկետբոլի ֆեդերացիա» հասարակական կազմակերպությանը՝ նշված բեռի համապատասխան ձևակերպումներն ավարտելուց հետո մեկամսյա ժամկետում՝ սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով ներկայացնել ամփոփ տեղեկատվություն:

3. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության սպորտի և երիտասարդության հարցերի նախարարություն ու Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

ՆԱԽԱԳԱՀ Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ**
**ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

**18 մարտի 2016 թվականի N Մ-194-Ա**
**քաղ. Երևան**

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2012 ԹՎԱԿԱՆԻ ՓԵՏՐՎԱՐԻ 24-Ի N Մ-126-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ ԲԵՌԻ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ՄԱՍԻՆ

**(«Տաշիր» բարեգործական հիմնադրամ)**

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2016 թվականի մարտի 4-ի N 07/80-2/8469-16 և մարտի 10-ի N 06/3-3/8797-16 եզրակացությունները,* ***ո ր ո շ ու մ է.***

1. Սահմանել, որ «Տաշիր» բարեգործական հիմնադրամի կողմից ձեռք բերված շինարարական նյութերը (19 տեղ, 7,310.2 կգ ընդհանուր քաշով, 2,520,435.60 ռուսական ռուբլուն համարժեք դրամ արժողությամբ, փոխադրման ծախսերը կազմել են 150,000 ռուբլի; «ԵՏՄ» բեռ) ներմուծվում են Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2012 թվականի փետրվարի 24-ի «Տաշիր» բարեգործական հիմնադրամի կողմից իրականացվող «Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի վեհարանի հանդիսությունների դահլիճի շենքի արտաքին և ներքին հարդարման աշխատանքների իրականացում» ծրագրի մասին» N Մ-126-Ա որոշմամբ հաստատված (2014 թվականի փետրվարի 14-ի N Մ-073-Ա, դեկտեմբերի 26-ի N Մ-1355-Ա, 2015 թվականի փետրվարի 20-ի N Մ-143-Ա, հուլիսի 24-ի N Մ-758-Ա և 2016 թվականի փետրվարի 19-ի N Մ-111-Ա որոշումների խմբագրությամբ) ծրագրի շրջանակներում:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

ՆԱԽԱԳԱՀ — Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

### Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

**18 մարտի 2016 թվականի N Մ-195-Ա**
**քաղ. Երևան**

### ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2012 ԹՎԱԿԱՆԻ ՓԵՏՐՎԱՐԻ 24-Ի N Մ-126-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ ԲԵՌԻ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ՄԱՍԻՆ N 1

**(«Տաշիր» բարեգործական հիմնադրամ)**

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2016 թվականի մարտի 14-ի N 07/80-2/9356-16 և մարտի 14-ի N 06/3-3/9506-16 եզրակացությունները,* **ո ր ո շ ու մ  է.**

1. Սահմանել, որ «Տաշիր» բարեգործական հիմնադրամի կողմից ձեռք բերված շինարարական նյութերը (մալուխ և պարուրակ՝ 2 տեղ, 2,536 կգ ընդհանուր քաշով, 764,169.30 ռուսական ռուբլուն համարժեք դրամ արժողությամբ, փոխադրման ծախսերը կազմել են 10,000 ռուսական ռուբլի, «ԵՏՄ» բեռ) ներմուծվում են Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2012 թվականի փետրվարի 24-ի «Տաշիր» բարեգործական հիմնադրամի կողմից իրականացվող «Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի վեհարանի հանդիսությունների դահլիճի շենքի արտաքին և ներքին հարդարման աշխատանքների իրականացում» ծրագրի մասին» N Մ-126-Ա որոշմամբ հաստատված (2014 թվականի փետրվարի 14-ի N Մ-073-Ա, դեկտեմբերի 26-ի N Մ-1355-Ա, 2015 թվականի փետրվարի 20-ի N Մ-143-Ա, հուլիսի 24-ի N Մ-758-Ա և 2016 թվականի փետրվարի 19-ի N Մ-111-Ա որոշումների խմբագրությամբ) ծրագրի շրջանակներում:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

ՆԱԽԱԳԱՀ                                        Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

# Ո Ր Ո Շ Ու Մ

**18 մարտի 2016 թվականի N Մ-196-Ա**
**քաղ. Երևան**

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2012 ԹՎԱԿԱՆԻ ՓԵՏՐՎԱՐԻ 24-Ի N Մ-126-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ ԲԵՌԻ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ՄԱՍԻՆ N 2

**(«Տաշիր» բարեգործական հիմնադրամ)**

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2016 թվականի մարտի 14-ի N 07/80-2/9358-16 և մարտի 15-ի N 06/3-3/9513-16 եզրակացությունները,* ***ո ր ո շ ու մ   է.***

1. Սահմանել, որ «Տաշիր» բարեգործական հիմնադրամի կողմից ձեռք բերված մարմարե մշակված շինարարական մանրամասերը (19 տեղ, 16,540 կգ ընդհանուր քաշով, 120,000 եվրոյին համարժեք դրամ արժողությամբ, փոխադրման ծախսերը կազմել են 3,194,600 դրամ, «ՄԾՓ» ՏՄ) ներմուծվում են Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2012 թվականի փետրվարի 24-ի «Տաշիր» բարեգործական հիմնադրամի կողմից իրականացվող «Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի վեհարանի հանդիսությունների դահլիճի շենքի արտաքին և ներքին հարդարման աշխատանքների իրականացում» ծրագրի մասին» N Մ-126-Ա որոշմամբ հաստատված (2014 թվականի փետրվարի 14-ի N Մ-073-Ա, դեկտեմբերի 26-ի N Մ-1355-Ա, 2015 թվականի փետրվարի 20-ի N Մ-143-Ա, հուլիսի 24-ի N Մ-758-Ա և 2016 թվականի փետրվարի 19-ի N Մ-111-Ա որոշումների խմբագրությամբ) ծրագրի շրջանակներում:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

ՆԱԽԱԳԱՀ                                                  Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

**Ո Ր Ո Շ Ո Ւ Մ**

**18 մարտի 2016 թվականի N Մ-197-Ա**
**քաղ. Երևան**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2012 ԹՎԱԿԱՆԻ ՓԵՏՐՎԱՐԻ 24-Ի N Մ-126-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻՆ ՀԱՐԱԿԻՑ ԳՈՐԾԱՐՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ**
**(«Տաշիր» բարեգործական հիմնադրամ)**

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2016 թվականի մարտի 4-ի N 07/80-2/8464-16 և մարտի 4-ի N 06/3-3/8499-16 եզրակացությունները,* ***ո ր ո շ ու մ  է.***

1. Սահմանել, որ «Տաշիր» բարեգործական հիմնադրամի կողմից (ՀՎՀՀ՝ 07203481) կնքված՝ ստորև նշված պայմանագրերով նախատեսված գործարքներն անմիջականորեն կապված են Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2012 թվականի փետրվարի 24-ի «Տաշիր» բարեգործական հիմնադրամի կողմից իրականացվող «Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի վեհարանի հանդիսությունների դահլիճի շենքի արտաքին և ներքին հարդարման աշխատանքների իրականացում» ծրագրի մասին» N Մ-126-Ա որոշմամբ հաստատված (2014 թվականի փետրվարի 14-ի N Մ-073-Ա, դեկտեմբերի 26-ի N Մ-1355-Ա, 2015 թվականի փետրվարի 20-ի N Մ-143-Ա, հուլիսի 24-ի N Մ-758-Ա և 2016 թվականի փետրվարի 19-ի N Մ-111-Ա որոշումների խմբագրությամբ) ծրագրի իրականացման հետ և դրա համար ունեն զգալի նշանակություն՝

1) «Հատուկ սանտեխմոնտաժ» ՓԲԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 03503214) 2016 թվականի փետրվարի 22-ին կնքված՝ N 3 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է շինարարական նյութերի մատակարարում՝ 7,987,900 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի.

2) «Նիկոլ Դուման» ԱԿ-ի հետ (ՀՎՀՀ՝ 02208258) 2016 թվականի փետրվարի 24-ին կնքված պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է լուսայուների պատրաստման աշխատանքների իրականացում՝ 18,300,000 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

ՆԱԽԱԳԱՀ	Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ**

**18 մարտի 2016 թվականի N Մ-198-Ա**
**քաղ. Երևան**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2016 ԹՎԱԿԱՆԻ ՓԵՏՐՎԱՐԻ 19-Ի N Մ-094-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻՆ ՀԱՐԱԿԻՑ ԳՈՐԾԱՐՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ**
**(«ԱՌԴԱ» բարեգործական հիմնադրամ)**

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2016 թվականի մարտի 3-ի N 07/80-2/8149-16 և մարտի 1-ի N 06/3-3/7600-16 եզրակացությունները, **ո ր ո շ ու մ  է.***

1. Սահմանել, որ «ԱՌԴԱ» բարեգործական հիմնադրամի կողմից (ՀՀ, քաղ. Երևան, Պարույր Սևակի 9, ՀՎՀՀ՝ 00057312) կնքված՝ ստորև նշված պայմանագրերով նախատեսված գործարքներն անմիջականորեն կապված են Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2016 թվականի փետրվարի 19-ի «ԱՌԴԱ» բարեգործական հիմնադրամի կողմից իրականացվող «Վանաձորի «Տարոն-3» թաղամասում կիսակառույց շենքը 12 բնակարանի վերակառուցման» ծրագրի մասին» N Մ-094-Ա որոշմամբ հաստատված ծրագրի իրականացման հետ և դրա համար ունեն զգալի նշանակություն՝

1) «Ինտեր մաստեր» ՍՊԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 01011141) 2016 թվականի փետրվարի 15-ին կնքված՝ N Վ-15/02 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է կիսակառույց շենքի վերակառուցման շինարարական աշխատանքների իրականացում՝ 59,083,000 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի.

2) «Արարատցեմենտ» ՓԲԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 04000255) 2016 թվականի փետրվարի 16-ին կնքված՝ N 7-L պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է 60 տոննա ցեմենտի ձեռքբերում՝ 2,700,000 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

ՆԱԽԱԳԱՀ Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

### Ո Ր Ո Շ ՈՒ Մ

**18 մարտի 2016 թվականի N Մ-199-Ա**
**քաղ. Երևան**

### ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2013 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒԼԻՍԻ 19-Ի N Մ-648-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻՆ ՀԱՐԱԿԻՑ ԳՈՐԾԱՐՔԻ Մ Ա Ս Ի Ն

**(«Յանգ լայֆ» ոչ առևտրային կազմակերպության հայաստանյան մասնաճյուղ «Քրոսրոադս» միջազգային բարեգործական հիմնադրամի հետ համատեղ)**

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2016 թվականի մարտի 2-ի N 07/80-2/7903-16 և մարտի 3-ի N 06/3-3/8074-16 եզրակացությունները,* ***ո ր ո շ ու մ  է.***

1. Սահմանել, որ «Քրոսրոադս» միջազգային բարեգործական հիմնադրամի կողմից (ՀՎՀՀ՝ 01266593) կնքված՝ ստորև նշված պայմանագրով նախատեսված գործարքն անմիջականորեն կապված է Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2013 թվականի հուլիսի 19-ի «Յանգ լայֆ» ոչ առևտրային կազմակերպության հայաստանյան մասնաճյուղի կողմից «Քրոսրոադս» միջազգային բարեգործական հիմնադրամի հետ համատեղ իրականացվող «Փյունիկ» ամառային ճամբար» ծրագրի մասին» N Մ-648-Ա որոշմամբ հաստատված (2014 թվականի մարտի 14-ի N Մ-172-Ա, 2015 թվականի մարտի 13-ի N Մ-203-Ա, հուլիսի 24-ի N Մ-803-Ա և օգոստոսի 28-ի N Մ-913-Ա որոշումների խմբագրությամբ) ծրագրի իրականացման հետ և դրա համար ունի զգալի նշանակություն՝

«Երևան-աուդիտ կոնսալտ» ՓԲԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 02703411) 2016 թվականի փետրվարի 16-ին կնքված՝ N Ա-02 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է աուդիտորական ծառայությունների իրականացում՝ 400,000 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

ՆԱԽԱԳԱՀ                                        Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

**Ո Ր Ո Շ Ու Մ**

**18 մարտի 2016 թվականի N Մ-200-Ա**
**քաղ. Երևան**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2013 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 20-Ի N Մ-1222-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻՆ ՀԱՐԱԿԻՑ ԳՈՐԾԱՐՔԻ ՄԱՍԻՆ**
**(«Սիմոնյան» կրթական հիմնադրամ)**

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2016 թվականի մարտի 3-ի N 07/80-2/8140-16 և մարտի 1-ի N 06/3-3/7601-16 եզրակացությունները,* ***ո ր ո շ ու մ  է.***

1. Սահմանել, որ «Սիմոնյան» կրթական հիմնադրամի կողմից (ՀՎՀՀ՝ 01245672) կնքված՝ ստորև նշված պայմանագրով նախատեսված գործարքն անմիջականորեն կապված է Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2013 թվականի դեկտեմբերի 20-ի «Սիմոնյան» կրթական հիմնադրամի կողմից իրականացվող «Ստեղծարար տեխնոլոգիաների կենտրոն» ծրագրի մասին» N Մ-1222-Ա որոշմամբ հաստատված (2015 թվականի դեկտեմբերի 25-ի N Մ-1444-Ա որոշման խմբագրությամբ) ծրագրի իրականացման հետ և դրա համար ունի զգալի նշանակություն՝

Իսպանիայի Թագավորության քաղաքացի Ժոզե Մարիա Ֆարգասի հետ (անձնագիր՝ AAD605809) 2016 թվականի փետրվարի 2-ին կնքված՝ N 02-02.02.16 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է դասընթացի վարման անհատույց ծառայությունների մատուցում՝ գնահատված 944,000 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

ՆԱԽԱԳԱՀ — Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

**Ո Ր Ո Շ Ո Ւ Մ**

**18 մարտի 2016 թվականի N Մ-201-Ա**
**քաղ. Երևան**

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2013 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 20-Ի N Մ-1222-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻՆ ՀԱՐԱԿԻՑ ԳՈՐԾԱՐՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ

**(«Սիմոնյան» կրթական հիմնադրամ)**

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2016 թվականի մարտի 14-ի N 07/80-2/9396-16 և մարտի 10-ի N 06/3-3/8859-16 եզրակացությունները,* **ո ր ո շ ու մ է.**

1. Սահմանել, որ «Սիմոնյան» կրթական հիմնադրամի կողմից (ՀՎՀՀ՝ 01245672) կնքված՝ ստորև նշված պայմանագրերով նախատեսված գործարքներն անմիջականորեն կապված են Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2013 թվականի դեկտեմբերի 20-ի «Սիմոնյան» կրթական հիմնադրամի կողմից իրականացվող «Ստեղծարար տեխնոլոգիաների կենտրոն» ծրագրի մասին» N Մ-1222-Ա որոշմամբ հաստատված (2015 թվականի դեկտեմբերի 25-ի N Մ-1444-Ա որոշման խմբագրությամբ) ծրագրի իրականացման հետ և դրա համար ունեն զգալի նշանակություն՝

1) Լիբանանի Հանրապետության քաղաքացի Թալա Սաֆիեի հետ (անձնագիր՝ RL 1585457) 2016 թվականի փետրվարի 24-ին կնքված՝ N 01-24.02.16 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է դասընթացի վարման ծառայությունների մատուցում՝ 1,008,000 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի.

2) Լիբանանի Հանրապետության քաղաքացի Այման Հասսանի հետ (անձնագիր՝ RL 2427322) 2016 թվականի փետրվարի 24-ին կնքված՝ N 02-24.02.16 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է դասընթացի վարման ծառայությունների մատուցում՝ 1,230,000 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

ՆԱԽԱԳԱՀ Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

**18 մարտի 2016 թվականի N Մ-202-Ա**
**քաղ. Երևան**

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2015 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՐՏԻ 23-Ի N Մ-215-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻՆ ՀԱՐԱԿԻՑ ԳՈՐԾԱՐՔԻ ՄԱՍԻՆ

**(«Սիմոնյան» կրթական հիմնադրամ)**

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2016 թվականի մարտի 3-ի N 07/80-2/8144-16 և մարտի 1-ի N 06/3-3/7602-16 եզրակացությունները,* ***ո ր ո շ ու մ   է.***

1. Սահմանել, որ «Սիմոնյան» կրթական հիմնադրամի կողմից (ՀՎՀՀ՝ 01245672) կնքված՝ ստորև նշված պայմանագրով նախատեսված գործարքն անմիջականորեն կապված է Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2015 թվականի մարտի 23-ի «Սիմոնյան» կրթական հիմնադրամի կողմից իրականացվող «Թումո» ստեղծարար տեխնոլոգիաների կենտրոն - Գյումրի» ծրագրի մասին» N Մ-215-Ա որոշմամբ հաստատված (2015 թվականի հունիսի 26-ի N Մ-680-Ա և դեկտեմբերի 16-ի N Մ-1359-Ա որոշումների խմբագրությամբ) ծրագրի իրականացման հետ և դրա համար ունի զգալի նշանակություն՝

ԱՄՆ-ի քաղաքացի Շողակ Բեդրոսի Կազանդջյանի հետ (անձնագիր՝ 49442992) 2016 թվականի փետրվարի 2-ին կնքված՝ N 01-02.02.16 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է դասընթացի վարման անհատույց ծառայությունների մատուցում՝ գնահատված 1,214,000 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

ՆԱԽԱԳԱՀ                                        Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

**18 մարտի 2016 թվականի N Մ-203-Ա**
**քաղ. Երևան**

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2015 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՐՏԻ 23-Ի N Մ-215-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻՆ ՀԱՐԱԿԻՑ ԳՈՐԾԱՐՔԻ ՄԱՍԻՆ N 1

**(«Սիմոնյան» կրթական հիմնադրամ)**

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2016 թվականի մարտի 12-ի N 07/80-2/9088-16 և մարտի 10-ի N 06/3-3/8830-16 եզրակացությունները,* **ո ր ո շ ու մ է.**

1. Սահմանել, որ «Սիմոնյան» կրթական հիմնադրամի կողմից (ՀՎՀՀ՝ 01245672) կնքված՝ ստորև նշված պայմանագրով նախատեսված գործարքն անմիջականորեն կապված է Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2015 թվականի մարտի 23-ի «Սիմոնյան» կրթական հիմնադրամի կողմից իրականացվող «Թումո» ստեղծարար տեխնոլոգիաների կենտրոն - Գյումրի» ծրագրի մասին» N Մ-215-Ա որոշմամբ հաստատված (2015 թվականի հունիսի 26-ի N Մ-680-Ա և դեկտեմբերի 16-ի N Մ-1359-Ա որոշումների խմբագրությամբ) ծրագրի իրականացման հետ և դրա համար ունի զգալի նշանակություն՝

Գերմանիայի Դաշնային Հանրապետության քաղաքացի Կատարինա Վերոնիկա Եվա Ռոթերսի հետ (անձնագիր՝ C74NHZ8M6) 2016 թվականի փետրվարի 16-ին կնքված՝ N 01-06.02.16 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է դասընթացի վարման անհատույց ծառայությունների մատուցում՝ գնահատված 520,000 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

ՆԱԽԱԳԱՀ Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

**18 մարտի 2016 թվականի N Մ-204-Ա**
**քաղ. Երևան**

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2015 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒԼԻՍԻ 24-Ի N Մ-800-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻՆ ՀԱՐԱԿԻՑ ԳՈՐԾԱՐՔԻ ՄԱՍԻՆ

**(«Սիմոնյան» կրթական հիմնադրամ)**

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2016 թվականի մարտի 14-ի N 07/80-2/9405-16 և մարտի 12-ի N 06/3-3/9217-16 եզրակացությունները,* ***ո ր ո շ ու մ է.***

1. Սահմանել, որ «Սիմոնյան» կրթական հիմնադրամի կողմից (ՀՎՀՀ՝ 01245672) կնքված՝ ստորև նշված պայմանագրով նախատեսված գործարքն անմիջականորեն կապված է Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2015 թվականի հուլիսի 24-ի «Սիմոնյան» կրթական հիմնադրամի կողմից իրականացվող «Հովհաննես Թումանյանի անվան զբոսայգու վերանորոգման, վերակառուցման և պահպանման» ծրագրի մասին» N Մ-800-Ա որոշմամբ հաստատված ծրագրի իրականացման հետ և դրա համար ունի զգալի նշանակություն՝

«Քլինլայն» ՍՊԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 01847941) 2016 թվականի մարտի 1-ին կնքված պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է 2016 թվականի մարտի 1-ից մինչև նոյեմբերի 30-ն ընկած ժամանակահատվածում մաքրարարական աշխատանքների իրականացում՝ ամսեկան 330,000 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

ՆԱԽԱԳԱՀ Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

**18 մարտի 2016 թվականի N Մ-205-Ա**
**քաղ. Երևան**

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2015 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 25-Ի N Մ-1439-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻՆ ՀԱՐԱԿԻՑ ԳՈՐԾԱՐՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ

**(«Էյ Թի Փի» բարեգործական հիմնադրամ)**

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2016 թվականի փետրվարի 22-ի N 07/80-2/6410-16 և մարտի 3-ի N 06/3-3/8224-16 եզրակացությունները,* ***ո ր ո շ ու մ  է.***

1. Սահմանել, որ «Էյ Թի Փի» բարեգործական հիմնադրամի կողմից (ՀՎՀՀ՝ 02554563) կնքված՝ ստորև նշված պայմանագրերով նախատեսված գործարքներն անմիջականորեն կապված են Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2015 թվականի դեկտեմբերի 25-ի «Էյ Թի Փի» բարեգործական հիմնադրամի կողմից իրականացվող «Հայաստանի և Լեռնային Ղարաբաղի Հանրապետություններում ծառատունկի իրականացում» ծրագրի մասին» N Մ-1439-Ա որոշմամբ հաստատված ծրագրի իրականացման հետ և դրա համար ունեն զգալի նշանակություն՝

1) «ՍԱՍ-գրուպ» ՍՊԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 02538542) 2016 թվականի հունվարի 15-ին կնքված՝ N AR100714/25 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է սննդամթերքի մատակարարում՝ 1,000,000 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի.

2) «Բարսիս» ՍՊԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 02230504) 2016 թվականի հունվարի 18-ին կնքված՝ N 01/1 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է շինարարական նյութերի ձեռքբերում՝ 1,500,000 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի.

3) «ԱՌԴ Գլոբալ» ՍՊԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 02533008) 2016 թվականի հունվարի 18-ին կնքված՝ N 3 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է ցուցատախտակների, պաստառների, պիտակների և այլ պարագաների պատրաստում՝ 300,000 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի.

4) «Պիկո-վիկո» ՍՊԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 00871025) 2016 թվականի հունվարի 18-ին կնքված՝ N 06 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է գրասենյակային



պարագաների և գրենական պիտույքների մատակարարում՝ 800,000 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի.

5) «Հրաշք այգի» ՍՊԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 01809336) 2016 թվականի հունվարի 26-ին կնքված՝ N 04 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է թունաքիմիկատների, գյուղատնտեսական գործիքների, գյուղատնտեսական մեքենաների, սերմերի և այլ գյուղատնտեսական ապրանքների մատակարարում՝ 400,000 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի.

6) «Խաս-խազ» ՍՊԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 01546394) 2016 թվականի փետրվարի 1-ին կնքված՝ N 07 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է գործիքների, տնտեսական և կենցաղային ապրանքների մատակարարում՝ 3,300,000 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի.

7) «Պատրոն ՌՄ» ՍՊԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 00861057) 2016 թվականի փետրվարի 1-ին կնքված՝ N 8 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է պատճենահանող մեքենաների, տպող սարքերի, քարտրիջների լիցքավորման և վերանորոգման ծառայությունների մատուցում՝ 100,000 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի.

8) «Իքս-Արթ» ՍՊԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 01237555) 2016 թվականի փետրվարի 4-ին կնքված՝ N 9 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է համակարգիչների, հարակից սարքերի և պարագաների մատակարարում՝ 450,000 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի.

9) «Էյ-Ի-Ջի-սերվիս» ՍՊԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 00930884) 2016 թվականի փետրվարի 8-ին կնքված՝ N Ե-427 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է ազդանշանման համակարգի տեխնիկական սպասարկման և կարգաբերման աշխատանքների իրականացում՝ 79,402 դրամի չափով՝ առանց ավելացված արժեքի հարկի.

10) «Էվրի դեյ» ՓԲԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 09104669) 2016 թվականի փետրվարի 8-ին կնքված՝ N J41-16 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է տարաներով խմելու ջրի մատակարարում՝ 140,000 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի.

11) «Էվրի դեյ» ՓԲԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 09104669) 2016 թվականի փետրվարի 8-ին կնքված՝ N R14-16 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է երկու դիսպենսեր սարքավորման վարձակալում՝ 60,000 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարությանը և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

ՆԱԽԱԳԱՀ                                        Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

**18 մարտի 2016 թվականի N Մ-206-Ա**
**քաղ. Երևան**

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2015 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 25-Ի N Մ-1439-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻՆ ՀԱՐԱԿԻՑ ԳՈՐԾԱՐՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ N 1

**(«Էյ Թի Փի» բարեգործական հիմնադրամ)**

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2016 թվականի մարտի 14-ի N 07/80-2/9395-16 և մարտի 12-ի N 06/3-3/9216-16 եզրակացությունները,* ***ո ր ո շ ու մ է.***

1. Սահմանել, որ «Էյ Թի Փի» բարեգործական հիմնադրամի կողմից (ՀՎՀՀ՝ 02554563) կնքված՝ ստորև նշված պայմանագրերով նախատեսված գործարքներն անմիջականորեն կապված են Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2015 թվականի դեկտեմբերի 25-ի «Էյ Թի Փի» բարեգործական հիմնադրամի կողմից իրականացվող «Հայաստանի և Լեռնային Ղարաբաղի Հանրապետություններում ծառատնկի իրականացում» ծրագրի մասին» N Մ-1439-Ա որոշմամբ հաստատված ծրագրի իրականացման հետ և դրա համար ունեն զգալի նշանակություն՝

1) «Տոյոտա Երևան» ՍՊԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 01557589) 2016 թվականի փետրվարի 22-ին կնքված՝ N 10 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է ավտոպահեստամասերի և քուղների ձեռքբերում՝ 1,300,000 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի.

2) «Առանցք» ՍՊԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 09200646) 2016 թվականի փետրվարի 25-ին կնքված՝ N 16/02-16 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է ցինկապատ փշալարի, մետաղական ցանցի, խողովակների և անկյունակների ձեռքբերում՝ 4,500,000 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

ՆԱԽԱԳԱՀ Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ**
**ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

**Ո Ր Ո Շ Ո Ւ Մ**

**18 մարտի 2016 թվականի N Մ-207-Ա**
**քաղ. Երևան**

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2015 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 25-Ի N Մ-1439-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐՈՒՄ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

**(«Էյ Թի Փի» բարեգործական հիմնադրամ)**

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2016 թվականի փետրվարի 22-ի N 07/80-2/6267-16 և փետրվարի 22-ի N 06/3-3/6347-16 եզրակացությունները,* **ո ր ո շ ու մ է.**

1. Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2015 թվականի դեկտեմբերի 25-ի «Էյ Թի Փի» բարեգործական հիմնադրամի կողմից իրականացվող «Հայաստանի և Լեռնային Ղարաբաղի Հանրապետություններում ծառատունկի իրականացում» ծրագրի մասին» N Մ-1439-Ա որոշմամբ հաստատված ծրագրի 10-րդ կետի 9-րդ ենթակետում «տրանսպորտային միջոցների ձեռքբերում» բառերից հետո լրացնել «և ներմուծում (նաև երկրորդային շուկայից)» բառերը:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

ՆԱԽԱԳԱՀ Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

**18 մարտի 2016 թվականի N Մ-208-Ա**
**քաղ. Երևան**

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2016 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆՎԱՐԻ 29-Ի N Մ-061-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ Մ Ա Ս Ի Ն

**(«Էյ Թի Փի» բարեգործական հիմնադրամ)**

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2016 թվականի մարտի 2-ի N 07/80-2/7847-16 և փետրվարի 25-ի N 06/3-3/7015-16 եզրակացությունները, ինչպես նաև հաշվի առնելով «Էյ Թի Փի» բարեգործական հիմնադրամի 2016 թվականի փետրվարի 17-ի N 12 գրությունը,* ***ո ր ո շ ու մ  է.***

1. Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2016 թվականի հունվարի 29-ի «Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2015 թվականի դեկտեմբերի 25-ի N Մ-1439-Ա որոշմամբ հաստատված ծրագրին հարակից գործարքների մասին («Էյ Թի Փի» բարեգործական հիմնադրամ)» N Մ-061-Ա որոշման 1-ին կետի 10-րդ ենթակետում «2009 թվականի փետրվարի 17-ին կնքված՝ N 10498564» բառերը փոխարինել «2015 թվականի հուլիսի 3-ին կնքված՝ N 17962428» բառերով:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

ՆԱԽԱԳԱՀ — Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

## Ո Ր Ո Շ Ու Մ

**18 մարտի 2016 թվականի N Մ-209-Ա**
**քաղ. Երևան**

## «ՖՐԱՆՍ - ՀԱՅԿԱԿԱՆ ՍՐՏԱՆՈԹԱՅԻՆ ԿԵՆՏՐՈՆ» ՊԵՏԱԿԱՆ ՀԱՏԿԱՑՈՒՄՆԵՐԻ ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ՀԱՅԱՍՏԱՆՅԱՆ ՄԱՍՆԱՃՅՈՒՂԻ ՀԱՍՑԵՈՎ ՍՏԱՑՎԱԾ ԲԵՌԻ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2016 թվականի մարտի 16-ի N 07/80-2/9844-16 և մարտի 16-ի N 06/3-3/9812-16 ու Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության 2016 թվականի մարտի 17-ի N ԱՄ/22.2/2766-16 եզրակացությունները,* ***որոշում է.***

1. Բարեգործական որակել Ֆրանսիայի «Հայ-ֆրանսիական առողջապահական շարժում» բարեգործական կազմակերպության կողմից որպես օժանդակություն Գորիսի նորակառույց սրտաբանական կենտրոնի համար «Ֆրանս-հայկական սրտանոթային կենտրոն» պետական հատկացումների հիմնադրամի հայաստանյան մասնաճյուղի հասցեով ուղարկված կորոնար ստենտերի (107 հատ՝ 2 տեղ, 22 կգ ընդհանուր քաշով, 14,980 եվրոյին համարժեք դրամ ընդհանուր արժողությամբ՝ ներառյալ փոխադրման ծախսերը, «Զվարթնոց» ՄՏ) ներմուծման ծրագիրը:

2. «Ֆրանս-հայկական սրտանոթային կենտրոն» պետական հատկացումների հիմնադրամի հայաստանյան մասնաճյուղին՝ նշված բեռի համապատասխան ձևակերպումներն ավարտելուց հետո մեկամսյա ժամկետում՝ սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով ներկայացնել ամփոփ տեղեկատվություն:

3. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարություն, Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե և Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզպետին:

ՆԱԽԱԳԱՀ            Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

**18 մարտի 2016 թվականի N Մ-210-Ա**
**քաղ. Երևան**

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱ-ԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2013 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 20-Ի N Մ-1222-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ ԲԵՌԻ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ՄԱՍԻՆ

**(«Սիմոնյան» կրթական հիմնադրամ)**

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2016 թվականի մարտի 15-ի N 07/80-2/9611-16 և մարտի 18-ի N 06/3-3/10098-16 եզրակացությունները,* ***ո ր ո շ ու մ է.***

1. Սահմանել, որ «Սիմոնյան» կրթական հիմնադրամի կողմից ձեռք բերված «Dell Chromebook 13» դյուրակիր համակարգիչը (2.41 կգ ընդհանուր քաշով, 487.79 ԱՄՆ-ի դոլարին համարժեք դրամ արժողությամբ, փոխադրման և այլ ծախսերը կազմել են 74.025 ԱՄՆ-ի դոլար, «ՄՓ և ՍԱՓԱՄ» ՄՏ) ներմուծվում է Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2013 թվականի դեկտեմբերի 20-ի «Սիմոնյան» կրթական հիմնադրամի կողմից իրականացվող «Ստեղծարար տեխնոլոգիաների կենտրոն» ծրագրի մասին» N Մ-1222-Ա որոշմամբ հաստատված (2015 թվականի դեկտեմբերի 25-ի N Մ-1444-Ա որոշման խմբագրությամբ) ծրագրի շրջանակներում:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

ՆԱԽԱԳԱՀ Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

**18 մարտի 2016 թվականի N Մ-211-Ա**
**քաղ. Երևան**

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2011 ԹՎԱԿԱՆԻ ՓԵՏՐՎԱՐԻ 18-Ի N Մ-041-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

**(Հայկական բարեգործական ընդհանուր միության Հայաստանի ներկայացուցչություն)**

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2016 թվականի մարտի 12-ի N 07/80-2/9255-16 և մարտի 15-ի N 06/3-3/9520-16 եզրակացությունները,* ***ո ր ո շ ու մ   է.***

1. Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2011 թվականի փետրվարի 18-ի «Հայկական բարեգործական ընդհանուր միության Հայաստանի ներկայացուցչության կողմից իրականացվող «Հայկական բարեգործական ընդհանուր միության երևանյան կենտրոնատեղի կառուցում» ծրագրի մասին» N Մ-041-Ա որոշմամբ հաստատված (2012 թվականի փետրվարի 3-ի N Մ-092-Ա, սեպտեմբերի 28-ի N Մ-766-Ա, 2013 թվականի հոկտեմբերի 25-ի N Մ-945-Ա, 2014 թվականի մայիսի 16-ի N Մ-377-Ա, հուլիսի 18-ի N Մ-680-Ա, դեկտեմբերի 20-ի N Մ-1204-Ա, 2015 թվականի հունվարի 30-ի N Մ-040-Ա, փետրվարի 25-ի N Մ-153-Ա և օգոստոսի 28-ի N Մ-911-Ա, հոկտեմբերի 2-ի N Մ-1051-Ա և դեկտեմբերի 4-ի N Մ-1299-Ա որոշումների խմբագրությամբ) ծրագիրը շարադրել նոր խմբագրությամբ (կցվում է):

2. [illegible] Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն[illegible] Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտ[illegible]

Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

ՀԱՍՏԱՏՎԱԾ Է

Հայկական բարեգործական ընդհանուր միության (ՀԲԸՄ)
Հայաստանի ներկայացուցչության տնօրենի
պաշտոնակատար Օհաննես Եորղնեկյանի կողմից

«01» մարտի 2016թ.

**«Հայկական բարեգործական ընդհանուր միության երևանյան կենտրոնատեղի կառուցում» ծրագիր**

| | | |
|---|---|---|
| 1. | Ծրագրի նպատակը | Ծրագրի նպատակն է Հայաստանի Հանրապետության Երևան քաղաքի Մելիք Ադամյան 2/2 հասցեում 1307,51 քմ հողատարածքում կառուցել սփյուռքի համահայկական խոշորագույն կազմակերպություններից մեկի՝ Հայկական Բարեգործական Ընդհանուր Միության Երևանյան կենտրոնատեղի և Երևան քաղաքին պատկանող ստորգետնյա ավտոկայանատեղի՝ ՀՀ կառավարության համար: |
| 2. | Ծրագրի բարեգործական որակման նպատակը | Օրենքով սահմանված կարգով օգտվել ՀՀ հարկերի, տուրքերի և պարտադիր վճարների գծով արտոնություններից: |
| 3. | Բարեգործը | Անհատ սփյուռքահայ բարերարներ պարոն Պերճ Սեդրակյան (հասցե՝ 191 Cedar Street, Englewood NJ 07631, ԱՄՆ) և պարոն Նազար Նազարյան (հասցե՝ 147 Demarest Avenue, Englewood, Cliffs NJ 07632, ԱՄՆ): |
| 4. | Ծրագիրը կատարողը | Հայկական բարեգործական ընդհանուր միության (ՀԲԸՄ) Հայաստանի ներկայացուցչություն (ՀՀ, քաղ. Երևան, Մարշալ Բաղրամյան 40, ՀՎՀՀ 00006479): |
| 5. | Ծրագրի իրականացման վայրը և բնագավառը | Հայաստանի Հանրապետության Երևան քաղաք, Մելիք Ադամյան փողոց 2/2՝ քաղաքաշինության բնագավառ: |
| 6. | Ծրագրի բյուջեն | Ծրագրի բյուջեն կազմում է **4,132,200,000** դրամ: |
| 7. | Բարեգործություն ստացողը | ՀՀ-ում ՀԲԸՄ-ի կողմից իրականացվող բարեգործական ծրագրերի շահառու հանդիսացող բոլոր անձիք,<br>- ՀԲԸՄ Վիրտուալ Հայկական համալսարանն իր ծրագրավորման և դասավանդման բաժիններով,<br>- երիտասարդական ծրագրերը,<br>- «Բացահայտիր Հայաստան» անչափահաս սփյուռքահայ երեխաների Հայաստան այցելության և կամավոր աշխատանքի ծրագիրը,<br>- «Անտրանիկ» սկաուտական բանակումի ամենամյա կազմակերպման ծրագիրը ՀՀ Լոռու մարզում,<br>- սփյուռքահայերի համար նախատեսված ներգնա ամառային պրակտիկայի ծրագրերը,<br>- Հայաստանում սկաուտական շարժման ծրագիրը,<br>- «Ուսուցում արտասահմանում» հայազգի ուսանողների համար ծրագիրը,<br>• ՀԲԸՄ հարյուրամյա պատմությանը և գործունեությանը նվիրված թանգարան -արխիվը,<br>• ՀԲԸՄ Հայաստանի ներկայացուցչության գրասենյակը:<br>ՀՀ Երևանի քաղաքապետարան (ստորգետնյա ավտոկայանատեղի): |

| | | | |
|---|---|---|---|
| 8. | Ծրագրի իրականացման տևողությունը | Ծրագիրը նախատեսվում է սկսել 2010 թվականի դեկտեմբերին և ավարտել 2016 թվականի դեկտեմբեր ամսին: | |
| 9. | Միջոցառումների նկարագրությունը և ժամկետները, անհրաժեշտ ֆինանսական միջոցների ծավալը | Աշխատանքները ընթանալու են հետևյալ փուլերով.<br>ա) Շենքի ճարտարապետական նախագծերի (էսքիզային, ճարտարապետական և կոնստրուկտորական մասերի համար) նախագծում (2010թ. դեկտեմբեր - 2011թ. հունիս ամիսների ընթացքում) և հեղինակային վերահսկողություն (2011թ. հունիս - 2013թ. մայիս ամիսների ընթացքում) - 52,200,000 դրամ:<br>բ) տարածքում գտնվող ենթակառույցների (կոմունիկացիոն ցանցերի, ենթակայանների և այլն) տեղափոխման աշխատանքներ, որը նախատեսվում է իրականացնել 2010թ. դեկտեմբեր - 2011թ. սեպտեմբեր ամիսների ընթացքում - 65,524,826 դրամ:<br>գ) Էլեկտրաենթակայանի շենքի կառուցման աշխատանքներ, որը նախատեսվում է իրականացնել 2011թ. փետրվար-դեկտեմբեր ամիսների ընթացքում - 28,605,920 դրամ<br>դ) Հողային աշխատանքներ և Երևան քաղաքի ստորգետնյա ավտոկայանատեղերի շինարարության աշխատանքները, որը նախատեսվում է իրականացնել մինչև 2012թ. ապրիլ ամիսը – 295,898,280 դրամ:<br>ե) Շենքի ընդհանուր շինարարական աշխատանքները՝ ներառյալ շենքի արտաքին տեսքի վերականգնման, ջերմամեկուսիչ արտաքին ապակե պատերի կառուցում, շենքի կառավարման էլեկտրոնային համակարգ, ներքին հարդարման աշխատանքներ, կահավորանք և այլն, որոնք նախատեսվում է ավարտին հասցնել 2016 թվականի դեկտեմբերին - 3,689,970,974 դրամ: | |
| 10. | Չեռք բերվող (ներմուծվող) ապրանքների ու ծառայությունների համառոտ նկարագիրը, ծավալները և նախատեսվող գինը | «Նարեկ Սարգսյան ճարտարապետական արվեստանոց» ՍՊԸ-ի (ՀՎՀՀ՝ 01550435) հետ կնքված պայմանագրի շրջանակներում ՀԲԸՄ Երևանյան կենտրոնատեղիի էսքիզային, ճարտարապետական և կոնստրուկտորական մասերի ճարտարապետական նախագծերի կազմում: | 52,200,000 դրամ |
| | | Կոմունիկացիոն ցանցերի մալուխների տեղափոխման նպատակով ենթակառույցների (կոմունիկացիոն ցանցերի, ենթակայանների, գազի, մետրոպոլիտենի ցանցերի մալուխների և այլն) տեղափոխման աշխատանքների իրականացում: | 65,524,826 դրամ |
| | | Էլեկտրաենթակայանի շենքի կառուցման աշխատանքներ, որի համար պայմանագիր է կնքվել «Հորիզոն-95» ՍՊԸ-ի հետ: | 28,605,920 դրամ |
| | | Հողային աշխատանքներ և ստորգետնյա ավտոկայանատեղերի կառուցում, որը իր մեջ ներառում է Երևանի քաղաքապետարանին պատկանող ավտոկայանատեղերի կառուցում ՀՀ կառավարության համար: | 295,898,280 դրամ |
| | | Շենքի ընդհանուր շինարարական աշխատանքներ՝ 1,000,000,000 դրամ,<br>ամրանների և ամրալարերի, հակավիբրացիոն ռետինե ծածկերի ու պոլիմերային ծապավենների, վերելակների, ալյումինե պրոֆիլների և աքսեսուարների, ապակիների, ջրամեկուսիչ նյութերի, արևային վահանակների, մետաղական ճաղավանդակների ներմուծում՝ 550,000,000 դրամ: | 1,550,000,000 դրամ |
| | | Շենքի կառավարման էլեկտրոնային համակարգի ներդնում, որը ներառում է մուտքի կառավարման համակարգը, ինքնատեսագրման համակարգը, հակահրդեհային համակարգը, համակարգչային և հեռախոսային ցանցերը:<br>Նախատեսվում է պայմանագիր կնքել «Քեյր Բիլդինգ Սերվիսիզ» ՍՊԸ-ի հետ:<br>- աշխատանքների իրականացում՝ 94,938,888 դրամ,<br>- ապրանքների ներմուծում՝ 30,548,773 դրամ: | 125,487,661 դրամ |

Ա.3/3.4



| | | | |
|---|---|---|---|
| | | Էլեկտրականության, ջրամատակարարման և ջրահեռացման համակարգերի անցկացում՝ 208,390,867.53 դրամ:<br>Ջրամատակարարման, ջրահեռացման և էլեկտրականության համակարգերի, սարքերի և սարքավորումների ներմուծում՝ 50,000,000 դրամ: | 258,390,868 դրամ |
| | | Օդափոխության և ջեռուցման համակարգերի անցկացում ու կաթսայատան սարքավորումների մոնտաժում՝<br>- աշխատանքների իրականացում՝ 208,776,736 դրամ<br>- ապրանքների ներմուծում՝ 139,000,000 դրամ | 347, 776, 736 դրամ |
| | | Շենքի ներքին հարդարման աշխատանքներ՝ 638,315,709 դրամ,<br>- ապրանքների ներմուծում՝ 120,000,000 դրամ: | 758,315,709 դրամ |
| | | Ապակյա փաթեթների, պտտվող դռան, ալյուրոնով երեսպատման, ներքին ապակյա պատերի, ապակյա բազրիքների և աստիճանավանդակի պատրաստման, դռների և կահույքի պատրաստման աշխատանքներ և բույսերի մատակարարում, որի համար կնքվել և նախատեսվում է կնքել պայմանագրեր «Պրոֆ-Ալ» ՍՊԸ-ի հետ: | 230,000,000 դրամ |
| | | Ներքին և արտաքին լուսավորության սարքերի, կախովի առաստաղների, և դռների ներմուծում | 200,000,000 դրամ |
| | | Դահլիճի, ցուցասրահի, հանդիպումների սենյակների կահավորանքի, ծալովի պատերի, անխափան էլեկտրասնուցման սարքերի, համակարգիչների, ռոյալի և ձայնատեսային սարքավորումների, մարդատար ավտոմեքենայի ներմուծում | 220,000,000 դրամ |
| 11. | Ծրագրի իրականացման հետ կապված կազմակերպական ծախսերը | Ծրագրի իրականացման հետ կապված կազմակերպական ծախսեր չեն նախատեսվում | |
| 12. | Համագործակցությունը պետական կառավարման, տեղական ինքնակառավարման մարմինների, այլ կազմակերպությունների հետ | ՀՀ քաղաքաշինության նախա[illegible]ետարան | |
| 13. | Ծրագրի արդյունավետության նկատմամբ վերահսկողության մեխանիզմների նկարագրությունը | Հայկական բարեգործական [illegible] վարչական ժողովի և ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի [illegible] ՀՀ օրենքով սահմանված կարգով: | |

Կազմեց՝

ՀԲԸՄ Հայաստանի ներկայացուցչության
Շինարարական ծրագրերի բաժնի ղեկավար
Քրիստինե Մարտիրոսյան
060- 722-217

Ա.3/3.4

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ**
**ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

**18 մարտի 2016 թվականի N Մ- 212 -Ա**
**քաղ. Երևան**

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ «Ս. Վ. ՄԱԼԱՅԱՆԻ ԱՆՎԱՆ ԱԿՆԱԲՈՒԺԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ» ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՀԱՍՑԵՈՎ ՈՒՂԱՐԿՎԱԾ ԲԵՌԻ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2016 թվականի մարտի 2-ի N 07/80-2/7979-16 և մարտի 4-ի N 06/3-3/8427-16 ու Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության 2016 թվականի մարտի 1-ի N ԱՄ/22.2/2084-16 եզրակացությունները,* ***որոշում է.***

1. Բարեգործական որակել Իտալիայից՝ անհատ բարերար Լարիսա Նաուիշկինայի կողմից աջակցության նպատակով Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության «Ս.Վ. Մալայանի անվան ակնաբուժական կենտրոն» փակ բաժնետիրական ընկերության հասցեով ուղարկված բեռի (դեղ և բժշկական պարագաներ՝ 2 տեղ, 69 կգ ընդհանուր քաշով, 3,435 եվրոյին համարժեք դրամ ընդհանուր արժողությամբ՝ ներառյալ փոխադրման ծախսերը, «Զվարթնոց» ՄՏ) ներմուծման ծրագիրը:

Ներմուծվող դեղը և բժշկական պարագաները նախատեսված են քրոնիկական փայտանման կոնյուկտիվիտ հիվանդությամբ տառապող երեխայի՝ Հակոբ Ռոմանոսի Ավդալյանի համար (բնակության հասցեն՝ ՀՀ, Շիրակի մարզ, քաղ. Մարալիկ, Ռիգայի 104 տուն):

2. Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության «Ս.Վ. Մալայանի անվան ակնաբուժական կենտրոն» փակ բաժնետիրական ընկերությանը՝ նշված բեռի համապատասխան ձևակերպումներն ավարտելուց հետո մեկամսյա ժամկետում՝ սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով ներկայացնել ամփոփ տեղեկատվություն:

3. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարություն և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

ՆԱԽԱԳԱՀ Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ**
**ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

**Ո Ր Ո Շ Ո Ւ Մ**
**21 մարտի 2016 թվականի N Մ- 213 - Ա**
**(Որոշումն ընդունվել է 2016 թվականի մարտի 18-ի նիստին)**
**քաղ. Երևան**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ «Ս. Վ. ՄԱԼԱՅԱՆԻ ԱՆՎԱՆ ԱԿՆԱԲՈՒԺԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ» ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՀԱՍՑԵՈՎ ՈՒՂԱՐԿՎԱԾ ԲԵՌԻ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ (N1)**

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2016 թվականի մարտի 14-ի N07/80-2/9401-16 և մարտի 15-ի N 06/3-3/9595-16 ու Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության 2016 թվականի մարտի 16-ի N ԱՄ/22.2/2698-16 եզրակացությունները, ինչպես նաև հաշվի առնելով Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության «Ս.Վ. Մալայանի անվան ակնաբուժական կենտրոն» փակ բաժնետիրական ընկերության 2016 թվականի մարտի 21-ի N 1.28 գրությունը,* ***որոշում է.***

1. Բարեգործական որակել Իտալիայից՝ անհատ բարերար Լարիսա Նառիշկինայի կողմից աջակցության նպատակով Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության «Ս.Վ. Մալայանի անվան ակնաբուժական կենտրոն» փակ բաժնետիրական ընկերության հասցեով ուղարկված բեռի (դեղ և բժշկական պարագաներ՝ 4 տեղ, 91 կգ ընդհանուր քաշով, 3,435 եվրոյին համարժեք դրամ ընդհանուր արժողությամբ՝ ներառյալ փոխադրման ծախսերը, «Ձվարթնոց» ՄՏ) ներմուծման ծրագիրը:

Ներմուծվող դեղը և բժշկական պարագաները նախատեսված են քրոնիկական փայտանման կոնյուկտիվիտ հիվանդությամբ տառապող երեխայի՝ Հակոբ Ռոմանոսի Ավդալյանի համար (բնակության հասցեն՝ ՀՀ, Շիրակի մարզ, քաղ. Մարալիկ, Ռիգայի 104 տուն):

2. Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության «Ս.Վ. Մալայանի անվան ակնաբուժական կենտրոն» փակ բաժնետիրական ընկերությանը՝ նշված բեռի համապատասխան ձևակերպումներն ավարտելուց հետո մեկամսյա ժամկետում՝ սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով ներկայացնել ամփոփ տեղեկատվություն:

3. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարություն և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

**ՆԱԽԱԳԱՀ** **Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ**
**ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

**23 մարտի 2016 թվականի N Մ-214-Ա**
**(Որոշումն ընդունվել է 2016 թվականի մարտի 18-ին)**
**քաղ. Երևան**

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ «ՄԱՐԴԱՍԻՐԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՊԵՏԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ» ՊՈԱԿ-Ի ՀԱՍՑԵՈՎ ՍՏԱՑՎԱԾ ԲԵՌԻ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2016 թվականի մարտի 18-ի N 07/80-2/10185-16 և մարտի 22-ի N 06/3-3/10417-16 եզրակացությունները, ինչպես նաև հաշվի առնելով Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության 2016 թվականի մարտի 16-ի N ԱՄ/22.1/2711-16 միջնորդագիրը,* ***որոշում է.***

1. Բարեգործական որակել Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության «Մարդասիրական օգնության հանրապետական կենտրոն» ՊՈԱԿ-ի հասցեով «Axios» հասարակական կազմակերպության կողմից իրականացվող՝ օնկոլոգիական հիվանդություններով տառապող հիվանդներին դեղորայքի տրամադրման միջազգային ծրագրի շրջանակներում ստացված 1,500 տուփ «Գլիվեկ HGC 100 մգ N 120» դեղի (2 տեղ (22 արկղ), 185 կգ ընդհանուր քաշով, 5,700,000 ԱՄՆ-ի դոլարին համարժեք դրամ ընդհանուր արժողությամբ՝ ներառյալ փոխադրման ծախսերը, «ՄՓ և ՍԱՓԱՄ» ՄՏ) ներմուծման և Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության «Պրոֆեսոր Ռ. Հ. Յոլյանի անվան արյունաբանական կենտրոն» փակ բաժնետիրական ընկերությանն անհատույց հատկացման ծրագիրը:

2. Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության «Մարդասիրական օգնության հանրապետական կենտրոն» ՊՈԱԿ-ին՝ նշված բեռի հանձնումն ավարտելուց հետո մեկամսյա ժամկետում՝ սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով ներկայացնել ամփոփ տեղեկատվություն:

3. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարություն և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

ՆԱԽԱԳԱՀ Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

**23 մարտի 2016 թվականի N Մ-215-Ա**
**քաղ. Երևան**

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2012 ԹՎԱԿԱՆԻ ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 19-Ի N Մ-809-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ ԲԵՌԻ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ՄԱՍԻՆ

**(«Փյունիկ» բարեգործական հիմնադրամ)**

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով հանձնաժողովի որոշման նախագծի 2016 թվականի մարտի 21-ի համաձայնեցման թերթը, **ո ր ո շ ու մ  է.***

1. Սահմանել, որ «Փյունիկ» բարեգործական հիմնադրամի կողմից ձեռք բերված դյուրակիր համակարգիչները (30 հատ՝ 3 տեղ, 88 կգ ընդհանուր քաշով, 10,710 ԱՄՆ-ի դոլարին համարժեք դրամ ընդհանուր արժեքով՝ ներառյալ փոխադրման ծախսերը, «Զվարթնոց» ՄՏ) ներմուծվում են Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2012 թվականի հոկտեմբերի 19-ի «Փյունիկ» բարեգործական հիմնադրամի կողմից իրականացվող «Բարեգործական բեռների ներմուծում և անհատույց բաշխում» ծրագրի մասին» N Մ-809-Ա որոշմամբ հաստատված (2012 թվականի հոկտեմբերի 31-ի N Մ-872-Ա, 2013 թվականի նոյեմբերի 29-ի N Մ-1109-Ա, 2014 թվականի փետրվարի 14-ի N Մ-059-Ա, 2015 թվականի հունվարի 26-ի N Մ-006-Ա և հոկտեմբերի 7-ի N Մ-1109-Ա ու 2016 թվականի փետրվարի 22-ի N Մ-138-Ա որոշումների խմբագրությամբ) ծրագրի շրջանակներում:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

ՆԱԽԱԳԱՀ | Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ**
**ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

# Ո Ր Ո Շ Ու Մ

**23 մարտի 2016 թվականի N Մ-216-Ա**
**քաղ. Երևան**

## «ՍԱՐԴԱՐԱՊԱՏ» ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՀԱՍՑԵՈՎ ՍՏԱՑՎԱԾ ԲԵՌԻ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով հանձնաժողովի որոշման նախագծի 2016 թվականի մարտի 21-ի համաձայնեցման թերթը,* ***ո ր ո շ ու մ  է.***

1. Բարեգործական որակել ԱՄՆ-ի Սրբոց Վարդանանց եկեղեցու կողմից, որպես օժանդակություն, «Սարդարապատ» բարեգործական հասարակական կազմակերպության հասցեով ուղարկված բեռի (238 տեղ, 9,139.13 կգ ընդհանուր քաշով, 22,965 ԱՄՆ-ի դոլարին համարժեք դրամ արժեքով, փոխադրման ծախսերը կազմել են 4,000 ԱՄՆ-ի դոլար, «Արարատյան» ՏՄ) ներմուծման և անհատույց բաշխման (ցանկը կցվում է) ծրագիրը:

2. «Սարդարապատ» բարեգործական հասարակական կազմակերպությանը՝ նշված բեռի համապատասխան ձևակերպումներն ու բաշխումն ավարտելուց հետո մեկամսյա ժամկետում՝ սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով ներկայացնել ամփոփ տեղեկատվություն:

3. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն, Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե ու Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզպետին:

ՆԱԽԱԳԱՀ — Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

### «Սարդարապատ» բարեգործական հասարակական կազմակերպություն հասցեով ստացված բեռի բաշխման ցանկ

| Անվանումը | Քանակը | Արժեքը (ԱՄՆ-ի դոլար) | Մարզ | Համայնքի անվանումը | Շահառուներ | Քանակը ըստ համայնքների |
|---|---|---|---|---|---|---|
| Մանկական հագուստ | 30 արկղ | 2457 | Սյունիք | Մեղրի | 100 անապահով ընտանիք | 25 արկղ |
| | | | | Գորիս | 30 անապահով ընտանիք | 5 արկղ |
| Խաղալիքներ | 51 արկղ | 4257 | Սյունիք | Մեղրի | 150 անապահով ընտանիք | 51 արկղ |
| Մեծահասակների հագուստ | 29 արկղ | 4407 | Սյունիք | Մեղրի | 80 անապահով ընտանիք | 19 արկղ |
| | | | | Գորիս | 40 անապահով ընտանիք | 10 արկղ |
| Հիվանդանոցային Տակդիրներ | 3 արկղ | 1457 | Սյունիք | Մեղրի | Մեղրու տարածաշրջ. բժշկական կենտրոն | 3 արկղ |
| Տնային Կահույք | 4 տեղ (3 հատ) | 1207 | Սյունիք | Մեղրի | 3 անապահով ընտանիք | 3 հատ |
| Աթոռներ | 1 տեղ (3 հատ) | 907 | Սյունիք | Մեղրի | 2 անապահով ընտանիք | 3 հատ |
| Ներքնակներ | 3 տեղ (1 հատ) | 707 | Սյունիք | Մեղրի | 1 անապահով ընտանիք | 1 հատ |
| Հեծանիվ | 1 տեղ (1 հատ) | 1647 | Սյունիք | Մեղրի | 1 անապահով ընտանիք | 1 հատ |
| Համակարգչի մոնիտոր | 1 տեղ (1 հատ) | 532 | Սյունիք | Մեղրի | 1 անապահով ընտանիք | 1 հատ |
| Տնային պարագաներ | 38 արկղ | 2257 | Սյունիք | Մեղրի | 100 անապահով ընտանիք | 22 արկղ |
| | | | | Գորիս | 70 անապահով ընտանիք | 16 արկղ |
| Մաքրման միջոցներ | 52 արկղ | 4957 | Սյունիք | Մեղրի | 200 անապահով ընտանիք | 40 արկղ |
| | | | | Գորիս | 60 անապահով ընտանիք | 12 արկղ |
| Անձեռոցիկ | 5 արկղ | 607 | Սյունիք | Մեղրի | 100 անապահով ընտանիք | 5 արկղ |
| Կարամել | 20 արկղ | 1557 | Սյունիք | Մեղրի | 220 անապահով ընտանիք | 12 արկղ |
| | | | | Գորիս | 180 անապահով ընտանիք | 8 արկղ |
| **Ընդամենը՝** | 238 տեղ | 26965 | | | | |

Տեղերի քանակը՝ 238, ընդհանուր քաշը՝ 9138.13 կգ, 22965 ԱՄՆ դոլար արժեքով, ծախսերը կազմել են 4000 ԱՄՆ դոլար:

«Սարդարապատ» Բարեգործական Հասարակական Կազմակերպություն

Նախագահ — Ն. Եղիազարյան

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ**
**ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

**24 մարտի 2016 թվականի N Մ- 217 -Ա**
**քաղ. Երևան**

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱ-ԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2016 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆՎԱՐԻ 13-Ի N Մ-1469-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ ԲԵՌՆԵՐԻ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ՄԱՍԻՆ

**(Ամերիկայի հայ ավետարանչական ընկերակցություն)**

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2016 թվականի մարտի 24-ի N 06/3-3/10509-16 և 2016 թվականի փետրվարի 12-ի որոշման նախագծի համաձայնեցման թերթը,* **որոշում է.**

1. Սահմանել, որ Գերմանիայի Դաշնությունից՝ «Քեթրին Գրուպ» ՍՊԸ-ի միջոցով, Ամերիկայի հայ ավետարանչական ընկերակցության Հայաստանի մասնաճյուղի հասցեով ստացված կաթնախառնուրդն ու կաթնազերծ խառնուրդն (19,440 հատ, 7,528.79 կգ ընդհանուր քաշով, 33,249,960 ՀՀ դրամ արժողությամբ, որից փոխադրման ծախսերը կազմում են 2,038,683.36 ՀՀ դրամ, «Արարատյան» Տ/Մ) ներմուծվում է Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2016 թվականի հունվարի 13-ի «Ամերիկայի հայ ավետարանչական ընկերակցության Հայաստանի մասնաճյուղի կողմից իրականացվող 2016-2021 թվականներին իրականացվող ծրագրի մասին» N Մ-1469-Ա որոշմամբ հաստատված ծրագրի շրջանակներում:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե, Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն, Երևանի քաղաքապետին, Հայաստանի Հանրապետության Արմավիրի, Արագածոտնի, Կոտայքի, Սյունիքի, Վայոց Ձորի և Լոռու մարզպետներին:

**ՆԱԽԱԳԱՀ** **Ս.ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

**Ո Ր Ո Շ Ո Ւ Մ**

**25 մարտի 2016 թվականի N Մ- 218 - Ա**
**(Որոշումն ընդունվել է 2016 թվականի մարտի 18-ի նիստին)**
**քաղ. Երևան**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱ-ԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2012 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՅԻՍԻ 29-Ի N Մ-383-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ԵՎ ԿԻՑ ԾՐԱԳՐՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**
**(«Աջակցություն ինքնորոշված Արցախին» միավորման հայաստանյան մասնաճյուղ)**

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Լեռնային Ղարաբաղի Հանրապետության վարչապետի 2016 թվականի մարտի 17-ի N 9ՀԱ-16, Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2016 թվականի մարտի 12-ի N 07/80-2/9115-16, Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության 2016 թվականի մարտի 11-ի N 02/14/2569-16, Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության 2016 թվականի մարտի 10-ի N ՖԲ/ԱնՄ-2-1/1719-16, Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության 2016 թվականի մարտի 9-ի N ԱՄ/22.2/2322-16, Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2016 թվականի մարտի 25-ի N 03/3-3/10289-16 և Հայաստանի Հանրապետության Արարատի մարզպետարանի 2016 թվականի մարտի 16-ի N 1/4/2/1/1433-16 եզրակացությունները,* ***ո ր ո շ ու մ   է.***

1. Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2012 թվականի մայիսի 29-ի «Աջակցություն ինքնորոշված Արցախին» միավորման հայաստանյան մասնաճյուղի կողմից իրականացվող «Հաշմանդամների բուժսպասարկում և ինտեգրում հասարակությանը» N Մ-383-Ա որոշման մեջ և կից ծրագրում կատարել հետևյալ փոփոխությունները՝

1) որոշման 1-ին կետում «500000 եվրոյին» բառերը փոխարինել «26,319.46 եվրոյին» բառերով.

2) կից ծրագիրը շարադրել նոր խմբագրությամբ (կցվում է):

2. Սույն որոշումն ուղարկել Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարություն, Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի



Հանրապետության արդարադատության նախարարություն, Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն, Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարություն, Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե և Հայաստանի Հանրապետության Արարատի մարզպետարան:

**ՆԱԽԱԳԱՀ** **Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ**

ՀԱՍՏԱՏՎԱԾ Է

«Աջակցություն ինքնորոշված Արցախին» (ԱԻԱ) միավորման Հայաստանյան

մասնաճյուղի տնօրեն Մկրտիչ Տոնոյանի կողմից

«29» փետրվար 2016թ.

«Հաշմանդամների բուժսպասարկում և ինտեգրում հասարակությանը»

ԾՐԱԳԻՐ

| | | |
|---|---|---|
| 1. | Ծրագրի նպատակը | Ծրագրի նպատակն է աջակցել հաշմանդամների ինտեգրմանը հասարակությանը, մասնագիտացված բուժհիմնարկների և ինտերնատների տեխնիկական վերազինմանը՝ մասնավորապես հենաշարժողական ապարատի խնդիրներ ունեցող հաշմանդամներին անվնաս և հարմարավետ տեղափոխելու համար նախատեսված հատուկ մասնագիտացված մեքենաներ և անվասայլակներ տրամադրելը: |
| 2. | Ծրագրի բարեգործական որակման նպատակը | Օրենքով սահմանված կարգով օգտվել ՀՀ հարկերի, տուրքերի և այլ պարտադիր վճարների գծով արտոնություններից: |
| 3. | Բարեգործը | «Աջակցություն ինքնորոշված Արցախին» (ԱԻԱ) միավորում (Ֆրանսիա, 94140 Ալֆորտվիլ, Լուիզի փողոց, տուն 3), հեռ. +33663129980 |
| 4. | Ծրագիրը կատարողը | «Աջակցություն ինքնորոշված Արցախին» (ԱԻԱ) միավորման հայաստանյան մասնաճյուղ (Երևան 0060, Ավան, Հովհաննիսյան թաղ. շ. 29, բն. 29, ՀՎՀՀ՝ 00452506) |
| 5. | Ծրագրի իրականացման վայրը և բնագավառը | Ծրագիրն իրականացվելու է Հայաստանի Հանրապետության Արարատի մարզում, Երևան քաղաքում և ԼՂՀ Ստեփանակերտ քաղաքում, բնագավառը՝ սոցիալական: |
| 6. | Ծրագրի բյուջեն | Նախատեսված ծրագրի ընդհանուր բյուջեն է 26,319. 46 եվրոյին համարժեք դրամ: |
| 7. | Բարեգործություն ստացողը | 1. ԼՂՀ առողջապահության նախարարության «Քերոլայն Քոքսի անվան վերականգնողական կենտրոն» ՊՈԱԿ (ԼՂՀ, ք. Ստեփանակերտ, Վ. Սարոյան 41-ա, հեռ.՝ +37447 95 04 55, ՀՎՀՀ՝ 90013514), տարեկան սպասարկում է շուրջ 600 հիվանդ (մեկ էլեկտրական անվասայլակ).<br>2. ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության «Խարբերդի մասնագիտացված մանկատուն» ՊՈԱԿ (ՀՀ, Արարատի մարզ, գյուղ Նոր Խարբերդ, |



| | | |
|---|---|---|
| | | Բաղրամյան 58, հեռ. +374237 6 00 25, +374236 6 45 00, +37491 42 79 60, ՀՎՀՀ՝ 03801255), մանկատունն ունի 280 մշտական սան (մեկ էլեկտրական անվասայլակ և մեկ հատուկ մասնագիտացված ավտոմեքենա).<br>3. Օրթեզավորման կենտրոն «Օրթեզ» ՍՊԸ (ՀՀ, ք. Երևան, Փափազյան 32, հեռ. +37410 26 99 22, ՀՎՀՀ՝ 00036503): «Օրթեզ» ՍՊԸ-ն հանդիսանում է մանկական մասնագիտացված օրթեզավորման կենտրոն, որը 20 տարի զբաղվում է հենաշարժողական բարդույթներ, ինչպես նաև բնածին ֆիզիկական արատ ունեցող հիվանդ երեխաների օրթեզավորմամբ: 2000 թվականից սկսած օրթեզավորման կենտրոնը մանկական օրթեզավորումն իրականացնում է պետպատվերի շրջանակներում բոլոր այն երեխաների համար, ովքեր մտնում են պետության կողմից երաշխավորած բուժօգնության ցանկի մեջ: Ցանկը բաղկացած է 13 կետից: Օրթեզավորման կենտրոնը սպասարկում է հաշմանդամ երեխաներին նաև իրենց գտնված վայրերում (մանկատներում, մասնագիտացված կենտրոններում, հիվանդանոցներում), որոնք պրոբլեմ ունեն տեղաշարժվելու: Օրթեզավորման կենտրոնը տարին մի քանի անգամ այցելում է Հայաստանի և ԼՂՀ մանկական կենտրոններ՝ տեղում ապահովելով մասնագիտական որակյալ ծառայություն: Տարեկան սպասարկվում է 600-900 երեխա, իսկ սարքերի քանակը կազմում է 900-1300 հատ (մեկ էլեկտրական անվասայլակ և մեկ հատուկ մասնագիտացված ավտոմեքենա).<br>4. «Հանրապետական մանկական վերականգնողական կենտրոն» ՓԲԸ (ՀՀ, ք. Երևան, Էջմիածնի հին խճուղի 109, հեռ.՝ +37410 56 21 71, ՀՎՀՀ՝ 01806759): Կենտրոնն իրականացնում է նյարդային և ոսկրամկանային համակարգի խնդիրներով անձանց ֆիզիկական և սոցիալ հոգեբանական վերականգնում: Կենտրոնում վերականգնողական բուժում են ստանում կենտրոնական և պերիֆերիկ նյարդային համակարգի ախտահարումներով անձինք (մանկական ուղեղային կաթված, տարբեր էթիոլոգիայի գլխուղեղի վնասվածք, ողնուղեղային վնասվածք), նեյրոմկանային հիվանդություններ, կեցվածքի շեղումներ, ամպուտացիաներ և այլն: Հսկողության տակ ունի 4000 հիվանդ, տարեկան սպասարկում է 800 հիվանդ: Կենտրոնը կազմակերպում է նաև արտագնա կլինիկաներ Հայաստանի տարբեր մարզեր և մանկատներ: Կենտրոնը հանդիսանում է բազա Երևանի Մխիթար Հերացու անվան Պետական բժշկական համալսարանի և ֆիզկուլտուրայի ու սպորտի պետական ինստիտուտի համար (մեկ էլեկտրական անվասայլակ և մեկ հատուկ մասնագիտացված ավտոմեքենա). |

| | | |
|---|---|---|
| | | 5. «Ձեզ համար» բարեգործական հասարակական կազմակերպություն (ՀՀ, Արարատի մարզ, ք. Մասիս, 2-րդ թաղ, 2-րդ փողոց, տուն 18, հեռ. +37477 27 97 82, +37491 42 79 60, էլ. հասցեն՝ g_balasanyan@yahoo.com, ՀՎՀՀ՝ 02232361): Կարզմակերպության առաքելությունն է աջակցել ծերերին, հաշմանդամներին, կյանքի դժվարին իրավիճակներում գտնվող երեխաներին: 2010թ. աշխատում է «Խարբերդի մասնագիտացված մանկատուն» ՊՈԱԿ-ի հետ, «Պերկինս միջազգային» կազմակերպության /ԱՄՆ/ հետ միասին վերապատրաստման դասընթացներ, սեմինարներ կազմակերպում «Խարբերդի մասնագիտացված մանկատան», «Մարի Իզմիրլյան մանկատան» աշխատողների, ներառական կրթություն իրականցնող մասնագետների համար:<br>Մասիս քաղաքում թիվ 5 մանկապարտեզի շենքում բացել է «Հույսի Շողեր» ցերեկային խնամքի կենտրոն՝ հաշմանդամ երեխաների հոգեբանական, լոգոպեդական, մանկավարժական, սոցիալական, վերականգնողական, կրթական, աջակցություն տրամադրելու նպատակով: Աշխատում է մոտ 100 ընտանիքների հետ՝ օգնելով նրանց սոցիալական և իրավական խնդիրների լուծման հարցում (մեկ հատուկ մասնագիտացված ավտոմեքենա) : |
| 8. | Ծրագրի իրականացման տևողությունը | 15.05.2012 – 31.05.2016 |
| 9. | Միջոցառումների նկարագրությունը և ժամկետները, անհրաժեշտ ֆինանսական միջոցների ծավալը | Ֆրանսիայում ձեռք են բերվելու և ՀՀ են ներմուծվելու 4 հատուկ մասնագիտացված ավտոմեքենա (12,000 եվրո ընդհանուր արժողությամբ) և 4 էլեկտրական անվասայլակ (4,850 եվրո ընդհանուր արժողությամբ)՝ հենաշարժողական խնդիրներ ունեցող հաշմանդամների համար (փոխադրման և այլ ծախսերը կազմում են 9,469.46 եվրո): Ներմուծված ապրանքատեսակներն անհատույց կտրամադրվեն ծրագրի 7-րդ կետում նշված բարեգործություն ստացողներին:<br>Ֆրանսիայից հրավիրվում է մասնագետ, ով կծանոթացնի մեքենայի շահագործման կանոնների ու առանձնահատկությունների հետ: Մեքենան ունի հարմարեցված ամբարձիչ, որն անվասայլակով հիվանդին բարձրացնում է մեքենա: Մեկ մեքենան կարող է սպասարկել 4 հիվանդ միաժամանակ: |
| 10. | Ձեռք բերվող (ներմուծվող) ապրանքների ու ծառայությունների համառոտ նկարագիրը, ծավալները և նախատեսվող գինը | Նախատեսվել է ներկրել 4 հատուկ մասնագիտացված ավտոմեքենա (12,000 եվրո ընդհանուր արժողությամբ) և 4 էլեկտրական անվասայլակ (4,850 եվրո ընդհանուր արժողությամբ), (փոխադրման և այլ ծախսերը՝ 9,469.46 եվրո)՝ հենաշարժողական և նյարդապարալիտիկ խնդիրներ ունեցող հիվանդների տեղափոխման |



| | | |
|---|---|---|
| | | համար: |
| 11. | Ծրագրի իրականացման հետ կապված կազմակերպական ծախսերը | Ծրագրի իրականացման հետ կապված կազմակերպական ծախսեր չեն նախատեսվում: |
| 12. | Համագործակցությունը պետական կառավարման, տեղական ինքնակառավարման մարմինների, այլ կազմակերպությունների հետ | Ծրագրի իրականացման ընթացքում նախատեսվում է ՀՀ առողջապահության նախարարության, ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության, ԼՂՀ առողջապահության նախարարության, ԼՂՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության և շահագրգիռ հասարակական բարեգործական կազմակերպությունների հետ համագործակցություն: |
| 13. | Ծրագրի արդյունավետության նկատմամբ վերահսկողության մեխանիզմների նկարագրությունը | Վերահսկողությունն իրականացվում է Աջակցություն ինքնորոշված Արցախին միավորման կողմից (գույքը կնվիրաբերվի բարեգործություն ստացողներին՝ կնքված պայմանագրերին համապատասխան և պարբերաբար կայցելվի շահառու հիմնարկներ՝ հետևելով պայմանագրով ամրագրված պարտավորվածությունների բարեխղճորեն կատարմանը), ինչպես նաև սահմանված կարգով, ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովին հաշվետվություն ներկայացնելով: |

Ծրագիրը ներկայացրեց Մկրտիչ Տոնոյան

«29» փետրվարի 2016